Էջմիածին



ՌՆԷ
ԺԵ ՏԱՐԻ
Մայիս

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ե

1958

697

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Հայաստանի հնագրական գործակալության բդրակցի տեսակցությունը վեհափառ Հայրապետի հետ	1
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Հունճաճյ բեմը	3
Փրկչի հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի անունով ստացված շնորհավորական հեռագրեր և գրություններ	8
Ա. Հ.— Ճշմարտության Հոգին	12
Հոգեգալուստ	16
Շարականք Հոգեգալստեան	17
Քաղվածքներ Գերագույն Հոգևոր խորհրդի նիստերի արձանագրություններից	18
Հայրապետական ճանդիպավոր պատարագ և քարոզ Մայր Տաճարում Սուրբ Հարության տոնի առթիվ և ընդունելություն Վեհարանում	20
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	22
ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ— Զատկի տոնի առթիվ մեր այցելությունը Բոմբի հայ հավատացյալներուն	26
ԽՈՐԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՊԱՀՅԱՆ— Ստեփանավանի հայոց նորաբաց Սուրբ Սարգիս եկեղեցում	30
Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան բեմի Թեմական պատգամավորական ժողովը	32
ՊՐՈՖ.—ԴՈԿՏ. Լ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ— էջմիածնի Մայր Տաճարը Շարդենի օրոք 1673 թվականին	35
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ— Ներսես Շնորհալու «Արևագալ»-ի շարականները, «Առաւօտ լուսոյ» և «Աշխարհ ամենայն» երգերը	40
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ— Գլաձորի դպրոցի մեծ մանրանկարիչ Թորոս Տարոնացին	45
Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ— Մակար եկմալյան	50
Մ. Հ. ԲԱՐԹԻԿՅԱՆ— Հայկական մատաղը Թրակիայում	57
Հանգիստ արժանապատիվ Տ. Աբրահամ քահանա Տեր-Աբրահամյանի	62
Սուրբ էջմիածնի Հոգևոր ճեմարանը հայտարարում է ուսանողների ընդունելություն 1958—1959 ուսումնական տարեշրջանի համար	63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1958 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՉԳԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԹՂԹԱԿՑԻ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՏ

Մայիսի 24-ին Հայաստանի հեռագրական գործակալության թղթակիցը մի շարք հարցերով դիմեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Նորին Ս. Օծությունը Վեհարանում բարեհաճեց ընդունել թղթակցին և պատասխանեց նրա հարցերին։

ՀԱՐՑ — Արտասահմանյան հայկական որոշ թերթերից մեզ հայտնի է դարձել, որ Թեհրանի հայոց Թեմական Պատգամավորական ժողովը վերջերս որոշել է անջատվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնից և միանալ Անթիլիասի եկեղեցական կենտրոնին։ Որքա՞ն ստույգ է այս տեղեկությունը։

ՊԱՏԱՍԽԱՆ.— Տեղեկությունը, դժբախտաբար, համապատասխանում է իրականության։ Մի քանի օր առաջ ստացանք նման բովանդակությամբ մի գրություն Թեհրանի հայոց Թեմական խորհրդից, որին ի պատասխան Մայր Աթոռը հեռագրով հայտնեց իր վերաբերմունքն այդ որոշման առթիվ։

Սենք հայտնեցինք, որ Մայր Աթոռը չի կարող համաձայն լինել այդ որոշման, քանի որ Պատգամավորական ժողովը ոչ մի իրավասություն չունի հայ եկեղեցիների և հավատացյալների հոգևոր կապը խզելու Ս. Էջմիածնից։

Մեր հեռագրով հաղորդեցինք Թեմական խորհրդին և Պատգամավորական ժողովին՝ մնալ խաղաղ ու լավատես և չկատարել որևէ ձեռնարկ՝ դիմելու այլ եկեղեցական կենտրոնի։

Մենք վստահ ենք, թե ամեն դժվարություն կհաղթահարվի և Ս. Էջմիածինը, իբրև հոգևոր կենտրոն, իր դարավոր հովանին կպահպանի Իրանի դրացի և բարեկամ պետության մեջ գործող հայ եկեղեցիների վրա, հարգելով իրավական պետական օրենքները։

Իրանի հայ թեմերը, ինչպես անցյալում դարեր շարունակ, այսուհետև ևս կմնան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր իշխանության ներքո։

ՀԱՐՑ— Որո՞նք են Թեհրանի Պատգամավորական ժողովի այդ որոշման դրդապատճառները։

ՊԱՏԱՍԽԱՆ— Որպես գլխավոր պատճառ մատնանշվում է իբր Իրանի կառավարության 1949 թվականի որոշումը, որի համաձայն ազգային փոքրամասնությունների կրոնապետերը պետք է իրանահպատակ քաղաքացիներ լինեն։ Իրանի կառավարության որոշումը միանգամայն բնական է և հասկանալի։ Սա-

կայն, դրանից բնավ չի հետևում, որ Թեհրանի թեմը չի կարող այլևս Ս. Էջմիածնի հոգևոր հովանավորության տակ գտնվել:

Արտասահմանյան մեր մի շարք թեմերը, ինչպես, օրինակ, Ռումինահայ թեմը, տասնյակ տարիներից ի վեր նույնպիսի պետական օրենքների ներքո են գործում: Այդ օրենքները արգելք չեն հանդիսացել, որ հիշյալ երկրների հայ եկեղեցիները հոգևոր իմաստով ենթակա լինեն բազմադարյան Ս. Էջմիածնին, որը, ինչպես ամբողջ աշխարհին հայտնի է, գլուխն է Հայ Եկեղեցու և կենտրոնը հայոց սուրբ հավատի, Դ դարի սկզբից ի վեր: Մայր Աթոռը հարգել է և հարգում է Իրանի պետական օրենքները, սակայն երբեք արգելք չեն հանդիսացել, որ Ս. Էջմիածինը իր դարավոր հոգևոր կապերը պահպանի իրանահայ թեմերի հետ: Եվ իրոք, 1949 թվականից մինչև այսօր, Մայր Աթոռի հարաբերությունները իրանահայ թեմերի, հատկապես Թեհրանի Թեմական խորհրդի հետ, երբեք սերտ և բնականոն:

ՀԱՐՑ— Ինչո՞վ են արտահայտվում այդ հարաբերությունները:

ՊԱՏԱՍԽԱՆ— Բազմաթիվ ձևերով: Նախ՝ կանոնավոր թղթակցությամբ Մայր Աթոռի և Թեմական խորհրդի միջև: Մայր Աթոռից ուղարկվում է Սրբազույն Մեռոն, երբեմ թեմերին էլ կանոնավոր կերպով ուղարկվում են օրացույցներ և օրհնված խաչեր, որին ի պատասխան միշտ էլ ստացվում են շնորհակալական գրեր: Թեհրանի Թեմական խորհրդից և հոգևոր գործակալ արժանապատիվ Տ. Հովհաննես ավագ քահանա Հանյանից ստացել ենք տեղեկագրեր, զեկույցներ, վիճակագրական տեղեկություններ թեմի գործունեության և եկեղեցիների մասին: Թղթակցությունների առարկա են եղել նաև ամուսնական և ժառանգական հարցեր, շնորհաստաֆումներ և պարգևատրումներ իրանահայ ազգային ծառայողների և այլն: Թեհրանի Թեմական խորհրդի միջնորդագրին ի պատասխան վերջին պարգևատրումը տեղի ունեցավ անցյալ օգոստոսին, երբ Մենք Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանով պարգևատրեցինք ազգային բարեբար Մարգար Սարգսյանին: Անցյալ աշնան Թեհրանի Թեմական խորհրդից ստացանք նվերներ Հոգևոր Ճեմարանի մեր սաների համար:

Այս բոլորը ցույց են տալիս, որ Մայր Աթոռի և Թեհրանի թեմի կապերը եղել են բնականոն և բավականին սերտ՝ փոխադարձ սիրո և հարգանքի պայմաններում:

ՀԱՐՑ— Ինչքա՞ն ժամանակ է, որ Թեհրանի թեմը առաջնորդ չունի, և ի՞նչ է արել Մայր Աթոռը այդ կապակցությամբ:

ՊԱՏԱՍԽԱՆ— Թեհրանի թեմը 1949 թվականից ի վեր առաջնորդ չունի: Մայր Աթոռը միշտ զբաղվել է թեմի առաջնորդի ընտրության հարցով, առաջնորդվելով Հայ Եկեղեցու կանոններով և Իրանի օրենքներով: Համաձայն մեր եկեղեցու կանոնների, Թեմական Պատգամավորական ժողովն ընտրում է հայ հոգևորականի, որ լինի Իրանի քաղաքացի: Ընտրության մասին հայտնվում է Ս. Էջմիածնին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ի գիտություն և ի հաստատում:

Առաջնորդվելով այս ոգով և հարգելով Իրանի կառավարության 1949 թվականի որոշումը, Մենք անցյալ տարի առաջարկեցինք Թեհրանի հայոց հոգևոր գործակալ Տ. Հովհաննես ավագ քահանա Հանյանի թեկնածությունը իբրև թեմական առաջնորդի, որին, ի դեպ, կարող էինք վարդապետական վեղար տալ այդ առթիվ: Թեմական խորհուրդը և Թեմական Պատգամավորական ժողովի դիվանը առանձին-առանձին Մեզ պատասխանեցին շատ հարգալիր կերպով և երախտագիտական զգացումներով, թե Մեր առաջարկությունը անպայման ի նկատի կառնվի առաջիկայում: Ահա թե ինչու Թեհրանի Պատգամավորական ժողովի՝ Էջմիածնից անջատվելու որոշումը մնում է անբացատրելի:

ՀԱՐՑ— Ի՞նչ հեռանկար եք տեսնում Թեհրանի թեմի Պատգամավորական ժողովի հիշյալ որոշման կապակցությամբ:

ՊԱՏԱՍԽԱՆ— Ի պատասխան Թեհրանի Թեմական խորհրդի 1958 թվականի մարտի 29-ի նամակի, Մայր Աթոռը մայիսի 3-ին իր խոսքը ուղղեց Թեմական խորհրդին, Թեմական Պատգամավորական ժողովին և համայն ժողովրդին հայտարարելով, թե՝

ա) Իրանի մեր երեք թեմերը, այդ թվում նաև Թեհրանի թեմը, իրենց եկեղեցիներով և հավատացյալ ժողովրդով, եղել են, կան և կմնան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր իշխանության ներքև:

բ) Ազգային-եկեղեցական որևէ մարմին իրավասու չէ Հայաստանյայց եկեղեցիներն ու հավատացյալները բաժանելու իրենց դարավոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնից:

գ) Հայ Եկեղեցին ուրիշ Գլուխ չունի, քան Ս. Էջմիածնի Ընդհանրական Հայրապետ Ամենայն Հայոց Կաթողիկոսից: Հայ եկեղեցու մյուս Աթոռները, ինչպիսիք են Կիլիկյան Կաթողիկոսական Աթոռը, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Պատրիարքական Աթոռները և առաջնորդական աթոռները անդամներ են Հայ Եկեղեցու, և ամեն մեկը իր չափով կենթակա է Մայր Աթոռին: Կանոնական-իրավական տեսակետից, և սուրբ ավանդությանց ու պատմական իրավասությանց լույսի ներքև, հնարավոր չէ անջատվել Ս. Էջմիածնից և կապվել այլ եկեղեցական կենտրոնի: Իրանահայ եկեղեցիներն ու ժողովուրդը, Հայաստանյայց եկեղեցու մեջ մնալով, կարող են ունենալ միմիայն մի վերին հոգևոր կենտրոն, այն է Ամենայն Հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, հիմնված 301 թվականին Հայոց Եկեղեցու ծնունդով:

դ) Մայր Աթոռը կոչ արեց Թեմական Պատգամավորական ժողովի անդամներին և Իրանի հայ հավատացյալ ժողովրդին՝ թյուրիմացության արդյունքներին նկատել վերջին ժողովի որոշումը Մայր Աթոռից բաժանվելու մասին, հետևաբար չեղյալ այն, բնորոշել թեմական առաջնորդ համաձայն իրանական պետական օրենքների և թեմական կանոնադրության ու շարունակել մնալ հավատարիմ և հոգևորես հպատակ հայ հավատի սյուն աստվածակառույց Ս. Էջմիածնին:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀՈՒՆԱՀԱՅ ԹԵՄԸ

Հայ և հույն ժողովուրդների բարեկամությունը հազարամյակների պատմություն ունի: Դարեր շարունակ կերտվել և ամրապնդվել են Հայ և Հույն՝ Քրիստոնեական երկու հնագույն եկեղեցիների մշակութային-եկեղեցական կապերն ու դրացնությունը: Հայ և հույն ժողովուրդների մտքի և հոգու եղբայրությունն ու համագործակցությունը բարձրանում է մինչև հնագույն դարերի խորքերը: Հայ և հույն մշակույթների մերձեցումը, հայ և հույն եկեղեցիների միաբարական աշխատանքները մի հզոր ազդակ են հանդիսացել երկու ժողովուրդների եղբայրացման և ազգային մշակույթի ծաղկման: Նրանք միաժամանակ են ընդունել քրիստոնեության լույսը և հանգիստ միասին են կռվել՝ պաշտպանելու համար իրենց սուրբ հավատը և Հայրենիքը:

Այս գաղափարների և պատմական իրադարձությունների լույսի տակ, երբեմն պատահական չէին այն եղբայրական գուրգուրանքն ու սրտաբաց ասպնջականությունը, որ միշտ ցույց է տվել ազատասեր Հելլադան հայ ժողովրդի տարաշխարհ զավակներին ինչպես անցյալում, այնպես էլ 1921—1922 թվականներին, երբ Զմյուռնիայի աղետից հետո, բազմաթիվ գաղթական հայեր ապաստան գտան հյուրընկալ Հելլադայի կապույտ երկնքի տակ: Հունաստանի ժողովուրդը եղբայրաբար իր գիրկն ու սիրտը բացեց տառապանքներ հայ ժողովրդի բեկորների առաջ:

1890-ական թվականներից սկսած կազմվում է հունահայ նոր գաղութը, երբ Կոստանդնուպոլսի 1895—1896 թվականների հայկական տխուր կոտորածներից հետո գաղթականության մի նոր հոսանք սկսվում է դեպի Հունաստան: Առաջին գաղթականները հաստատվում են Աթենքում, Պիրեայում, Սալոնիկում՝ կազմելով Հունաստանում հայ նոր համայնքի առաջին կորիզը, որին ապա գալիս են միանալու տասնյակ հազարավոր նոր գաղթականների խմբեր 1921—1922 թվականներին:

Հունահայ նոր գաղութը ժամանակավորապես ղեկավարվում է Կոստանդնուպոլսի Պատրիարքարանից ուղարկված այցելու հոգևոր հովիվներով:

1908 թվականի սեպտեմբեր 22 թվականին արքայական հրովարտակով պաշտոնապես հաստատվում է հունահայ համայնքը որպես «Աթենքի և Պիրեայի արևմտյան օրթոդոքս հայերու հասարակություն»: Այդ հունահայ գաղութը, չկազմելով օրինական փոքրամասնություն, զրկվում է քվեարկության և կազմական կանոնագրի իրավունքից: Այս պատճառով Հունաստանի հայոց առաջնորդները և նրա խորհրդականները միշտ եղել են նշանակվի, 35 տարիներից ի վեր:

1923 թվականին Կոստանդնուպոլսի Պատրիարքարանի կողմից Հունաստանի առաջնորդ և Պատրիարքարանի պատվիրակ է նշանակվում Կարապետ արքեպիսկոպոս Մազլումյանը, որը հունահայ թեմը ղեկավարում է մինչև իր մահը՝ 1951 թվականը:

Մազլումյան սրբազանի առաջնորդության տարիներին նրա գլխավոր գործակիցներն են հանդիսանում նշանակված կենտրոնական վարչություններ, խորհրդակցական բնույթով:

Մազլումյան սրբազանի մահից հետո Մայր Աթոռի կարգադրությամբ և նշանակումով,

որպես էջմիածնի թեմի, հունահայ թեմը ղեկավարում է եգիպտահայ թեմի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը՝ այցելու թեմական առաջնորդի հանգամանքով, մոտավորապես երկու տարի:

1956 թվականին Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության անդամներից հոգեշնորհ Տ. Իսահակ վարդապետ Ղազարյանը ստանձնում է հունահայ թեմի առաջնորդական տեղապահի պաշտոնը, Աթենքի կենտրոնական վարչության հրավերով:

1957 թվականի հուլիսի 7-ին, Հունաստանի հայոց թեմական խորհրդին ուղղված վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակով առաջնորդ և Հայրապետական պատվիրակ է նշանակվում Տ. Իսահակ վարդապետը: Այդ առթիվ Վեհափառ Հայրապետը գրում էր.

«Նկատի ունենալով հունահայ թեմը առաջնորդով մը օժտելու անհրաժեշտությունը՝ ի շինություն և ի պայծառություն ձեր եկեղեցական կյանքի, և ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ պետականորեն իբրև առաջնորդություն (մետրոպոլիա) ճանչցված ձեր թեմը անհարմար է և ոչ օգտակար՝ երկար ժամանակ թողուլ առանց հոգևոր պետի, և հաստատելով, որ վերջին մեկ տարվան ընթացքին ձեր առաջնորդական տեղապահը իր կենդանի խոսքով և գործով, իր նվիրումով և ժողովրդասիրությամբ արդյունավետ դարձուցի իր հոգևոր աշխատանքը ձեր թեմին մեջ, Մենք Մեր այս գրով հոգեշնորհ Տ. Իսահակ վարդապետ Ղազարյանը Հայրապետական պատվիրակ կնշանակենք հունահայոց թեմին, որպեսզի իբրև առաջնորդ ղեկավարե ձեր թեմը և այդ հանգամանքով հանչցվի նաև պետական իշխանության կողմե՝ համաձայն ձեր բարեխնամ երկրի օրենքներուն»:

Քանի որ մինչև վերջերս Հունաստանում չկար մի թեմական կանոնադրություն առաջնորդ ընտրելու մասին, շատ բնական էր, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայրապետական նվիրակ կամ առաջնորդ նշանակեր հունահայերի համար, առաջնորդ՝ որ միշտ հանանչվել էր պաշտոնապես հույն կառավարության կողմից որպես «հայոց միտրոպոլիտ»:

Այս պարագային էլ, 1957 օգոստոս 26 թվակիր պաշտոնագրով, Հունաստանի թագավորության Կրթական և կրոնական գործոց ազգային նախարարության նախարար պր. Ա. Օրգոստոպուլոսը «Հունաստանի ուղղափառ հայոց առաջնորդ» հոգեշնորհ Տ. Իսահակ վարդապետին հայտնում էր իր վսորին գոհունակությունն ու հրճվանքը «այս բարձր և սուրբ պաշտոնի» ստանձնման առթիվ և իր հավանությունն էր տալիս Վեհափառ Հայրապետի կողմից Իսահակ վարդապետի հունահայոց թեմի առաջնորդ նշանակմանը (պրոտոկոլ № 77650):

Հունաստանի թագավորության Կրթական և կրոնական գործոց ազգային նախարարությունը իր պաշտոնական գրության պատճենն ուղարկել էր նաև օտար դավանության բաժնին, Ներքին գործոց նախարարության ընդհանուր տեսչության, Ներքին գործոց նախարարության օտարների սպասարկության բաժնին և Արտաքին գործոց նախարարության կրոնական գործոց տեսչության՝ ի գիտություն:

Հունահայ թեմի Կենտրոնական վարչությունը, որն արդեն 15 տարուց ավելի է, ինչ պահում էր իր գոյությունը, նշանակված լինելով Մազլումյան սրբազանի առաջնորդության օրերին, մոտ մեկ տարի աշխատելուց և համագործակցելուց հետո առաջնորդի հետ, ճիշտ այն պահին, երբ Մայր Աթոռը հոգեշնորհ Տ. Իսահակ վարդապետի պաշտոնը օրինականացնում էր՝ նրան նշանակելով Հայրապետական պատվիրակ, Մայր Աթոռ ուղարկած իր 1957 թվականի հունիս 28-ի հեռագրով և 1957 թվականի հունիս 29 թվակիր նամակով, «առաջնորդական պատասխանատու և փափուկ պաշտոնին» համար անհարմար էր գտնում առաջնորդին և պահանջում Իսահակ վարդապետի հեռացումը Հունաստանից:

Վեհափառ Հայրապետի նախագահության տակ Գերագույն Հոգևոր խորհուրդը հանգամանորեն քննելուց հետո հունահայոց եկեղեցական տագնապը, 1957 հուլիս 20 թվակիր նամակով պատասխանեց Աթենքի Կենտրոնական վարչության.

«Իրոք շատ ցավալի է, որ երիտասարդ մի վարդապետ, որ մոտ մեկ տարի է ինչ ձեր թեմում աշխատում է իբրև առաջնորդական տեղապահ, և որի մասին ոչ մի դժգոհություն չէիք հայտնել, հանկարծ ձեր ամբաստանություններով մեղադրվում է այն պահին, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշանակում է նրան Հայրապետական պատվիրակ:

Անսպասելի էր այս Մայր Աթոռիս համար և անբացատրելի, վասնզի Վեհափառ Հայրապետը վստահ էր, թե դուք ուրախությամբ պիտի ընդունեիք Իր որոշումը ձեր առաջնորդական տեղապահի մասին:

Մեզ խոր վիշտ է պատճառում նաև ձեր այն պնդումը, թե Մայր Աթոռը նախօրոք չի առել ձեր համաձայնությունը և գրում եք նույնիսկ՝ «հայտնի է Ձերդ Վեհափառության, որ գաղութս ի հոգևորս ենթակա ըլլալով հանդերձ Մայր Աթոռ Ս. Էջմիածնա և անոր Հայրապետին, ի վարչական ենթակա է Ազգային Սահմանադրության ժողովրդական սկզբունքներուն և տրամադրություններուն»:

Մեր կարծիքով այս ոգով չէ, որ պետք է խոսեիք Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ Մայր Աթոռը ապրաստանելու դիրքի մեջ դնելով իրենց դեմ:

Թյուրիմացության մեջ եմ ընկնում կարծելով, թե հունահայ թեմը միայն ի հոգևոր ենթակա է Մայր Աթոռին: Այդ բանաձևը վերաբերում է Մայր Աթոռի և Կիլիկյան Աթոռի հարաբերություններին: Մայր Աթոռը լրիվ իրավունք ունի Հայրապետական պատվիրակ նշանակելու և առաջնորդ առաջարկելու որևէ թեմի համար, ինչպես արվել է շատ հաճախ անցյալում: Սրանով բնավ չեն խախտվում սահմանադրական ժողովրդական սկզբունքները, որովհետև այդ առաջարկությունից հետո ժողովուրդը օրինավոր ընտրությամբ կարող է ընտրել կամ չընտրել տվյալ թեկնածուն: Բայց ոչ մի դեպքում որևէ թեմական խորհուրդ կամ կենտրոնական վարչություն իրավասություն չունի ի հառաջագույնն մերժելու հայրապետական որոշումը Իր պատվիրակի նկատմամբ»:

Այնուամենայնիվ, հակառակ այն իրողության, որ Մայր Աթոռում բազմաթիվ հեռագրեր ստացվեցին հունահայ զանազան եկեղեցական և ազգային կազմակերպություններից, որոնք ամբաստանում էին Աթենքի Կենտրոնական վարչությանը՝ հունահայ գաղութի ծոցում այսպիսի արվեստականորեն և այլ նպատակներ հետապնդող կացություն ստեղծած լինելուն համար, Մայր Աթոռը շարունակեց գործակցել և բանակցել վարչության հետ, նրա առաջ երբեմ չհանեց իրավական-կանոնական դժվարություններ, աշխատեց հաշտարար և անկողմնակալ ոգով վարչության հետ, և երբ որոշ անհամաձայնություններ ծագեցին առաջնորդական տեղապահի և Կենտրոնական վարչության միջև, Մայր Աթոռը կամեցավ հարցը քննել անկողմնակալորեն և այնուհետև հանգել առարկայական եզրակացության, ապա անելու համար համապատասխան կարգադրություններ, ի հարկին նույնիսկ եռ կանչելով Իսանակ վարդապետին, երբ կենտրոնական վարչության՝ նրա դեմ կատարած ամբաստանությունները առարկայական և օրինավոր քննությամբ նշվեին: Բայց Կենտրոնական վարչությունը Մայր Աթոռի բոլոր առաջարկները և կոչերը մերժեց և փորձեց ժխտել Մայր Աթոռի՝ հարցը քննելու իրավունքն իսկ: Կենտրոնական վարչությունը կտրուկ ասում էր. «Մենք բացարձակապես չենք հանդուրժում որևէ հոգևոր առաջնորդ, որ նշանակված լինի Ս. էջմիածնից»:

Հունահայ այսպես կոչված տագնապի առիթով էլ դժբախտաբար «ձայն բարբառոյ յանապատի» մնացին հայրապետական հաշտարար ու խաղաղասիրական ոգով գրված հորդորները ու կոչերը: Վեհափառ Հայրապետը, իր 1958 թվականի մարտ 1 թվակիր պաշտոնական մի գրության մեջ, ուղղված արտասահմանի մեր մի շարք բարձրաստիճան հոգևորականներին, գրում էր. «...Մեր բոլոր կոչերը անտեսվեցան հանկարծ նեղրոնական վարչության կողմն: Մենք ամեն գնով Իսահակ վարդապետը պարտադրելու տրամադիր չենք: Քանիցս գրեցինք իրենց, որ Մայր Աթոռը թեմն այս խնդիրը, ի հարկին Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը ուղարկելով իրև անաչառ քննիչ: Սակայն համառորեն և անխորհուրդ կերպով Մեր բոլոր հայրական ու հաշտարար առաջարկները մերժեցին և նույնիսկ իրենց համակիներով համարձակորեն ժխտեցին Մայր Աթոռի հեղինակությունը և իրավունքը հունահայ թեմի ներքին տագնապով զբաղելու: Եվ այս բոլորը մարմնի մը կողմե, որուն գոյությունը որևէ իրավական հիմունք չուներ: Անա թե ինչու Մենք հետզհետե համոզվեցանք, թե անոնց միտքը ծուռ է և իրենք ոչ թե Իսահակ վարդապետին հետ հաշիվ ունին (զոր իրենք իսկ հրավիրած էին և մեկ ամբողջ տարի գործակցած էին առանց որևէ դժգոհության), այլ իրենց նպատակն է մերժել Մայր Աթոռի հեղինակությունը և հնար մը գտնել Անթիլիասին համբան բանալու: Եվ եթե այդ է իրենց մտադրությունը, անշուշտ համաձայնության որևէ եզր գտնել հնարավոր չէ: Ամեն տեղ նույն հակառակորդն է, որ նույն ոգիով, նույն նպատակներով և նույն մեթոդներով կպայքարի Մայր Աթոռի դեմ, զուտ քաղաքական նպատակներով»:

Տխուր է մի ավելորդ անգամ ևս այստեղ հաստատել, որ Անթիլիասը և նրան գործակից մի շարք մարդկանց խումբը բոլոր միջոցներով ձգտում են իրենց ազդեցության տակ առնել Սիսյան էջմիածնական բեմերը:

Այս անգամ հերթը հունահայ թեմին է հասել: Այստեղ կարող, խնդրո առարկա հարցը առաջնորդի անձը չէ, այլ Ս. էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետի հեղինակության և գերագանության հարցը, որի դեմ սուր է հոնում Աթենքի Կենտրոնական վարչությունը: Այս դեպքում առաջնորդն է Բարության նախագը, զոնը:

«Այստեղ ևս վերին միջամտություններն են. որ վճռական դեր կատարեցին հոգատ անթիլիասականներուն,— գրում է Վեհափառ Հայրապետը նույն նամակում:— Մենք լրիվ համաձայն ենք, որ առաջնորդները նշանակվի ըլլալու չեն, սակայն Հունաստանի պարագան բացառիկ էր, տրված ըլլալով որ՝

ա) Թեմը որևէ կանոնադրություն չուներ, որուն հիման վրա կարելի ըլլար առաջնորդ ընտրել.

բ) Հին կեդրոնական վարչությունը որևէ օրինական հիմք չուներ և ընտրված մարմին չէր, այլ 16 տարի առաջ նշանակված մարմին մը նախկին առաջնորդի կողմէ.

գ) Նախկին առաջնորդը ևս ընտրված չէ, այլ նշանակված իր ատենին Պոլսո պատրիարքին կողմէ:

Ահա այս բոլորը ի նկատի ունենալով. Մենք Հայրապետական պատվիրակ և առաջնորդ նշանակեցինք Իսահակ վարդապետը, այն մտածումով, որ երբ մոտ ապագային հնարավոր կըլլա կանոնադրություն մը մշակել, տեղի կունենան ընտրություններ թե՛ առաջնորդի, թե՛ օրինավոր կեդրոնական վարչության մը»:

Բայց Մայր Աթոռը վստահ է արդարության և իրավունքի վերջնական հաղթանակին, և վստահ է մանավանդ հունահայ օրինապահ և կարգապահ ժողովրդի արթնամտության և կոռվին:

Անհպատա Հայրապետը, Իր պաշտոնական մի ուրիշ նամակում. ընդհանրապես խոսելով այսօրվա մեր Սփյուռքի եկեղեցական տագնապի մասին, գրում էր. «Կխորհինք, թե այսքան շար գործերու և եկեղեցականց արարքներու առջև, Մայր Աթոռի Դասնակալ մը անտարբեր չէր կրնար մնալ: Պատմության առջև դատապարտելի պիտի ըլլանք, եթե տկարանանք Ս. էջմիածինը պաշտպանելու սուրբ գործին մեջ: Եվ այդ պաշտպանության սրբազան գործը պիտի շարունակենք, և պետք է շարունակենք, մեր բոլոր հոգևոր-բարոյական զենքերով և օրինական միջոցներով, արթնցնելու համար խիղճը համայն հայ հավատացյալ ժողովրդին: Եվ չենք տարակուսիր, թե այս սուրբ աշխատանքի ճանապարհին վրա պիտի գործակցին Մեզ Մեր բոլոր Աթոռները, Մեր բոլոր հոգևորականները անվերապահորեն: Կիլիկյան Աթոռի տագնապը ինչքան ատեն իր սահմաններուն մեջ էր, բնական է, որ միջամտությունը եղբայրական հորդորի բնույթը ուներ: Մեր ներկայությամբ Անթիլիաս և Կահիրեի Սպիսկոպոսական ժողովի առաջարկություններով Մենք կամեցանք մասնավոր Աթոռի մը մեջ ստեղծված վտանգավոր տագնապը լուծել ընդհանուրով և ի շահ ընդհանուրին, իսկ երբ Մեր սիրո կոչը և հորդորները լսելի չեղան, Մենք ճարահատ հաշվեցանք: Մենք երբեք հրահանգներ տալու հովեր չառինք, Մենք երբեք դատապարտության վճիռներ չարձակեցինք, Մենք երբեք բշնամական ոգի չսնուցանեցինք Անթիլիասի և անոր Դահակալին հկատմամբ և չմաչալեցինք իրենց հերին անչատումը կամ ուրիշ Աթոռի մը ստեղծումը. այլ միշտ իրարհասկացողության, միության և խաղաղության ջատագովը մնացինք: Սակայն երբ Անթիլիաս Մեր հայրապետական թեմերու մեջ ոտնձգություն ըրավ, և ուղղակի հարձակումներ էջմիածնի և էջմիածնի հավատարիմ հոգևորականներու և ժողովուրդի դեմ, գանոնք քաղաքականապես կասկածելի և վտանգավոր տարր հռչակելով հրապարակով (Զարեհ և Խորեն եպիսկոպոսներու հայտարարությունները, հարերը, որոշ թերթերու խմբագրականները և այլն) և երբ նույն Անթիլիասը ծրագիրներ կմշակե և գործադրության կդնե Ս. էջմիածնեն բաժանելու Երուսաղեմի Աթոռը, Հունաստանի թեմը, Պարսկաստանի Մեր թեմերը և նաև մյուս Մեր առաջնորդական վիճակները, այդ պարագային անշուշտ Մենք այլևս ձեռնածալ չենք կրնար մնալ: Այս պանուս կացությունը հիմնովին տարբեր է: Այլևս մենք կգտնվինք ոչ թե Կիլիկյան Աթոռի տագնապի մը առջև, այլ եկեղեցական հերձվածող ափ մը խելակորույս և մոլեգնած հոգևորականներու առջև, որոնք Անթիլիասի մեջ նստած կփորձեն «էջմիածինը տակնուվրա ընել» (Խորեն եպիսկոպոսի խոսքերն են): Ոչ մեկ նկատում, ոչ մեկ կողմնակի հաշիվ, նույնիսկ ոչ մեկ ձախողանք Մեզ չեն կրնար շեղեցնել Մեր ուղիղ նպատակեն: Մենք ամեն գնով և Մեր բոլոր հնարավոր միջոցներով պիտի պաշտպանենք Ս. էջմիածինը: Անոնք ալ անշուշտ ամեն գնով և իրենց բոլոր միջոցներով պիտի աշխատին «տակնուվրա ընել» Ս. էջմիածինը:

Մեր հույսը պիտի ըլլա Աստուծո և հայ ժողովուրդի հավատին ու ոգեշնչության վրա: Մեր պայքարը շինարար է, անոնց պայքարը՝ քանդիչ: Մեր պայքարի նպատակն է միություն և խաղաղություն: Անոնց պայքարի նպատակն է պառակտում, հերձում, ցրում: Անոնց պայքարը քաղաքական կուսակցության մը պատվանդան դարձած է, Մեր պատվանդանը Ս. էջմիածինն է և մեր վերածնած Մայր Հայրենիքը: Մեր պայքարը սիրո արդյունք է, անոնց պայքարը՝ ատելության արդյունք: Ստույգ է, որ միշտ սերը կհաղթե, որովհետև միայն սերն է շինարար, ատելությունը երբեք ոչինչ չէ շինած, ոչինչ չէ ստեղծած: Ան կուգա ու կանցնի մարախի ավպի մը նման, անշուշտ ավերներ գործելով: Մեր սերունդի պարտքը պիտի ըլլա հնարավոր չափով արագ հաղթանակել չարիքը ու վերահաստատել Հայ Եկեղեցվո միությունը, որպեսզի հնարավոր չափով նվազ ըլլա ցրվումը և ավերումը: Ուրիշ հանապարհ չկա այլևս»:

Հերձվածի և պառակտման տխուր ասպետները աշխատում են նաև, ինչպես հայտնի է, խանգարել նուանուայ գաղութի և թեմի խաղաղությունը, ճեղքել մեր ժողովրդի միասնականությունը: Վերոնշյալով պետք է արձանագրել, որ ներքին աշխատանքը շարունակվում է Սիդնեյում եկեղեցական դատարանը Հայ եկեղեցու դեմ, Ս. Էջմիածնի դեմ, շարունակվում են մեր ժողովրդի ազգային-եկեղեցական միասնությունը քանդելու բնույթ ունեցող դատապարտելի և պատվաստական աշխատանքները:

Մեր Եկեղեցին իր սկզբնավորության առաջին իսկ օրերից կազմավորվել է որպես Ազգային եկեղեցի, իր ժողովրդավարական վարչաձևով, ընտրական և ժողովրդական սկզբունքներով: Մեր եկեղեցին միասնական է եղել... հայ ժողովրդի կամքով ու շանթերով, միասնական է եղել իր Գետով, իր դավանանքով, ժողովրդավարական վարչաձևով, իր ձեռերով ու արարողություններով: Մայր Աթոռին խորթ են եղել կրոնական բռնապետությունը, աշխարհիկ իշխանության ձգտելու ճիվանդագին փառասիրությունը: Մայր Աթոռը երբեք ճանդես չի եկել իր հոգևոր իշխանությամբ որպես հայ ժողովրդից, օրենքից և իրավունքից վեր կանգնած մի հաստատություն: Մայր Աթոռի պատմությունն է եղել առաքելական պատգամը. «Մի՛ տիրելով վիճակացն, այլ օրինակ լինել հոտին»:

Ապա ուրեմն, գրում է Վեհափառ Հայրապետը, «ի՞նչ սեր Աստուծո, ե՞րբ ու ի՞նչպես Մայր Աթոռը քաղաքական տեսակետներ կամ պատգամներ կամ առաջադրած մեր նվիրապետական աթոռներում և կամ թեմականներում: Երուսաղեմի և Կոստանդնուպոլսո Աթոռները և մեր առաջնորդությունները ի՞նչ այդպիսի հրահանգներ են ստացած և ինչո՞վ, և ի՞նչպես Մայր Աթոռը կաշկանդած է, ունենց ներքին վարչական-կազմակերպչական ինքնավարությունը: Փաստորեն բոլորը այդ իմաստով, բոլոր մեր արտասահմանյան Աթոռները և թեմերը ինքնավար են և անկախ, և կգործեն համաձայն սահմանադրական կանոններու և տեղական պետական օրենքներում և պայմաններում: Եվ կգտնեն, թե այս արևի լույսի պես պարզ ճշմարտությունը ինչպե՞ս չտեսնել կձևացնեն ոմանք: ...Այո, մեր եկեղեցին սահանչելի կանոնագիծ մրն է, այդ սահանչելիությունը կկայանա միության և ներքին ներդաշնակության ոգիին մեջ, դավանաբանական-կանոնական, հոգևոր-բարոյական և ազգային տեսակետներ:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդեպ ենթակայությունը զուտ կանոնական և հոգևոր-բարոյական ենթակայություն մրն է, ամրացած ազգային գիտակցությամբ: Մանավանդ այսօր, երբ Ս. Էջմիածինը առավել ոգեշնչումով իր առաքելության ոգին համբուն վրա կգտնվի, ինքնակամ և անկաշկանդ, տարբե՛ր պիտի մտածեր և տարբե՛ր ոգիով պիտի գործեր»:

Հայ եկեղեցու միությունից, հայ ժողովրդի հոգեկան-բարոյական ամբողջությունից դեպի խզում, պառակտում տանող բոլոր ճանապարհները կորստաբեր են, վտանգավոր և դատապարտելի:

Ինչպես Վեհափառ Հայրապետն է նշել իր նույն պաշտոնական գրության մեջ, պարտքի և կոչման խորունկ գիտակցությամբ, «մեր բոլոր ուժերով, միախորհուրդ և միակամ, անվարան և անհապաղ պիտի պաշտպանենք մեր Ս. եկեղեցու միությունը, Մայր Աթոռի դարավոր իրավունքները:

Մենք չենք կրնար հաշտվիլ այն մտքի հետ, որ նկեղեցին կրնա իր մեջ բաժանումներ հանդուրժել ըստ քաղաքական դիրքավորումներու և կուսակցության օրվան շահերուն: Եթե այդ մտքի հետ հաշտվինք, ընդմիշտ ընդունած պիտի ըլլանք եկեղեցվո բաժանված, պառակտված և իրարամերժ գոյավիճակը, քանի որ մեր ժողովուրդի ծոցին մեջ ալ եղած են և պիտի ըլլան քաղաքական բաժանումներ և հակամարտություններ:

Այս բոլորին վերջ ավելցնենք, թե Մենք միշտ լավատես կմնանք: Ամբողջ հարցը ժամանակի խնդիր է: Միայն թե այդ օրը ինչքան շուտ գա, այնքան լավ կըլլա, այնքան քիչ ավերներ գործված կըլլան մեր եկեղեցիին և Ազգին կյանքին մեջ և այնքան քիչ չափով նյութական ու բարոյական միջոցներ վատնված կըլլան նումպետս, միջոցներ, որոնք միության, համերաշխության և ներքին գործակցության պայմաններում մեջ այնքան շինարար կրնային ըլլալ հայապահպանման նվիրական գործին մեջ»:

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱԼԻՔՆԵՐ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ ԵՎ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Զերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս.

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Ընդունեցեք իմ եղբայրական սիրո, ուրախության և խաղաղության համբույրը: Տիրոջ ուրախությունը թող եղծուկ լինի Ձեզ և նորոգի Ձեր հոգին: Թող հարուցյալ Տերը՝ երջանիկ կյանքի իսկական աղբյուրը՝ պահպանի և նորոգի Ձեր կյանքը: Թող սուրբն նրա ասավածային զորությունը տարածվի Ձեր հովվության ներքև գտնվող հոգիների վրա:

Եղբայրական սիրով Ձերդ Սրբության ի Քրիստոս անձնվեր՝

ԱԼԵՔՍԻ

ՊԱՏՐԻԱՐՔ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻԱ

ՄՈՍԿՎԱ

Զերդ Սրբություն.

Սիրեցյալ եղբայրական սիրով շնորհավորում եմ Զերդ Սրբությանը Հիսուս Քրիստոսի հարության ուրախալի ողջույնով՝ «Քրիստոս յարեաւ»: Մեր Ս. եկեղեցին Հարության տոնին կանչում է մեզ այդ ուրախությանը զատկական երգով՝ «Ուրախ լեր Ս. Կոյս, զի Որդիդ, յետ երից աւուրց, յարեաւ ի գերեզմանէ, և զնձազէմ որդիք մարդկան»: Մենք ևս ուրախությամբ իրար ողջունում ենք այդ բերկրանքով, որով և նորոգում ենք մեր հովվատը և սիրո փոխադարձ միությունը:

Ողջագուրելով և համբուրելով Զերդ Սրբությանը զատկական համբույրով, ցանկանում եմ Ձեզ և Ձեր եկեղեցուն ի մեռելոց հարուցյալ Տեր Հիսուս Քրիստոսից՝ առատ ողորմություն և խաղաղություն ամենայն աշխարհի:

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ Գ

ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ

ԹՐԻԼԻՍԻ

Զերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս.

«Գիտեմք եթէ Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց, այսուհետև ոչ մեռանի, և մահ նմա ոչ ևս տիրէ». (Հռովմ. Զ 9):

Ցնծալից ալելուիաները, որոնք Զատկվա այս օրերին վերստին հնչում են ամբողջ քրիստոնյա աշխարհով մեկ, ցույց են տալիս ի Քրիստոս հավատացյալ մարդկանց միությունը Իր հարության բերկրանքի մեջ: Մեր փոխության այս մեծ տոնախմբության առթիվ, Ձեզ հղում եմ, սիրեցյալ եղբայր, իմ ջերմագին շնորհավորությունները այն երջանիկ գիտակցությամբ, որ մենք միասին մասնակից ենք եղել նրա հարուցյալ և հավիտենական կյանքին:

«Քրիստոս յարեաւ»,— հոչակում է մեղքի և մահվան վրա տարված մեր Փրկչի հաղթանակի պատգամը: Դա հավատի հաղթանակն է անհավատու-

բյամբ գեմ և ճույսի հաղթանակը՝ ճեսամճատության դեմ: Բայց մեզանից դուրս չիա հաղթանակ, որովհետև մեծ «քաղեցաք ընդ նմին մկրտութեամբն ի մահ, զի որպէս յարեաւ Քրիստոս ի մեռելոց փառօքն Հօր, նոյնպէս և մեք ի նորոգումն կենաց շրջեսցուք: Զի եթէ տնկակից եղաք նմանութեան մահու նորա, այլ և յարութեան նորա լինիցիմք» (Հռովմ. Զ 4—5):

Տարակուսանքների և անորոշության, փորձությունների և տարաբարձությունների մեջ մարդկությունը դեռ փրկություն է աղաղակում: Որպես Քրիստոսի անդամները, որոնք նույնիսկ այժմ բաժանում են հավիտենական կյանքի նրա պարգևը, մեզ է մնում վկայել, որ փրկությունը շանված է և որ միայն «ի Քրիստոս» է, որ մենք գտնում ենք մեր հույսն ու խաղաղությունը:

Ես աղոթում եմ Ձերդ Սրբության և Ձեր Ս. Եկեղեցու բոլոր անդամների համար, որպեսզի Դուք բոլորդ առատորեն մասնակից լինեք մեր Տիրոջ հարության հույսին և հրճվանքին:

Ձեր անկեղծ և սիրող եղբայր ի Քրիստոս,

ՉԵՈՖՖՐԻ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՆՏԲԵՐԻԻ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ
ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ

ԼՈՆԴՈՆ

«Հշմարտապէս յարեաւ Քրիստոս»:

Եղբայրական մեծ սիրով մեր շնորհակալությունն ենք հայտնում այն մաղթանքների համար, որ բարեհաճել էիք մեզ ուղղել Տիրոջ հարության լուսափայլ տոնի առթիվ:

Մեր հերթին, մեր սրտի խորքից ցանկանում ենք Ձերդ Սրբության, հայ հոգևորականության, հավատացյալներին և համայն հայ օրենյալ ժողովրդին՝ Ձերդ Սրբության հովվապետությամբ լիակատար առողջություն, գործոց հաջողություն, ուրախություն և խաղաղություն: Աղոթում ենք առ հարուցյալ Քրիստոս, որ օրհնի իր բոլոր սուրբ եկեղեցիների գործը, որը ելիրված է խաղաղության հաստատման և աշխարհի բոլոր ազգերի եղբայրացման:

Ի Քրիստոս եղբայրական սիրո ողջագուրումով,

ՀՈՒՍՏԻՆԻԱՆ,
ՊԱՏՐԻԱՐՔ ՌՈՒՄԻԵԻԱՅԻ

ՌՈՒԵԱՐԵՍՏ

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Գոհունակությամբ և ուրախ սրտով տոնում ենք Տիրոջ մեծ Զատիկը: Քրիստոսի Հարության տոնին, համայն Ս. Եկեղեցին երգում է «Փառք յարութեան քո, Քրիստոս, Փառք սքանչելութեան քո, փառք տնօրինութեան քո, մարդասէր Տէր»:

Հարյալ Քրիստոս և փրկեց մեզ մեղքից և մահից: Նրա հարության հաստատով, նորոգում ենք մեր հոգիները և ընդունում փրկության շնորհատու պտուղները: Ինչպե՞ս չզոչենք՝ «Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ըստ բազում ողորմութիւնն իւրում ծնաւ զմեզ վերստին ի յոյսն կենդանի» (Պետրոս Ա 3):

Հավատո և սիրո այս հանդիսավոր և պայծառ տոնի առթիվ, ողջունում եմ Ձերդ Սրբությանը եղբայրական սրտագին սիրով և հրեշտակային ողջույնով՝ «Քրիստոս յարեաւ»:

Հարուցյալն ի մեռելոց կենսատու Քրիստոսը բոլոր բաշխի Ձեզ և Ձեր Ս. Եկեղեցուն իր առատ օրհնությունը և բոլոր ամբողջ աշխարհին պարգևի իր աստվածային խաղաղությունը:

Ձերդ Սրբության խորհարհ եղբայր ի Քրիստոս,

ԿԻՐԻԼ,
ՊԱՏՐԻԱՐՔ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ

ՍՈՖԻԱ

Զերդ Սրբություն.

Սրտագին ուրախությամբ կարդացի Ձեր զատկական շնորհավորության գիրը: Շատ շնորհակալ եմ Ձեր եղբայրական շնորհավորանքի և բարի ցանկությունների համար: Խնդրեմ ընդունել իմ շնորհավորանքը մեր Աստուծո և Փրկչի Ս. Հարության տոնի առթիվ:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Ամբողջ հոգով, Զերդ Սրբությունը և Ձեր եկեղեցուն ցանկանում եմ Աստուծո բոլոր բարիքները:

Ամենամեծ հարգանքով և սիրով Ձեր եղբայրն ի Քրիստոս,

ՅԱՆ ԿԻՑՎԻՏ

ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՏԱԼԻՆ

Շնորհավորում եմ Զերդ Սրբության և Ձեր ժողովրդի Ս. Զատկի պայծառ տոնը: Հարուցյալ Քրիստոսը բոլոր պահապան և հովանավոր լինի սպիտակափառ Արարատի ստորոտում գտնվող Հայկական հին եկեղեցուն:

ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ

ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՌԻԳԱ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Անդրկովկասի հավատացյալ մուսուլմանների կողմից բույլ տվեք շնորհավորել Ձեզ և բոլոր հավատացյալ հայերին՝ Քրիստոսի հրաշափառ Հարության տոնի առթիվ: Մաղթում ենք Ձեզ խաղաղություն, երկար տարիների կյանք և մեծ եռանդ՝ ամբողջ աշխարհում ժողովուրդների միջև եղբայրության և բարեկամության ամրապնդման գործում:

ՀԱՔԻՄ ԶԱԴԵ ԴԵԲԻՐՈՎ,

ՇԵՅԽ-ՈՒԼ-ԻՍԼԱՄ, ՄՈՒՖԹԻ

ԲԱՔՈՒ

ՆԿԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻՑ

Ընդունեցեք ամենուս զատկական շնորհավորությունները և սրտագին մաղթանքները Ս. Աթոռիդ պայծառացման, վերիդ բաստատության, արևշատության, եկեղեցանվեր ձեռնարկներու հաջողության համար: Թող Ս. Հարության ազատարար օգին զգաստությամբ խորացնե մարդոց հոգին, Փրկչին իրավ խաղաղություն հաստատելու երկրի վրա բոլոր ժողովուրդներու բարեության համար:

ԳԱՐԵԳԻՆ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱԶԱՏՈՒՐՅԱՆ

ՊԱՏՐԻԱՐՔ ԹՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ

ՍՏԱՄԲՈՒԼ

Զատկի առթիվ խոնարհ շնորհավորություններ իմ և միաբաններու կողմեն: Հարուցյալ Տիրոջմեն Ձեզի Սրբոցյան համար կխնդրեմ ուժ և հաջողություն Ձեր սուրբ գործին մեջ:

ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆ
ԸՆՏՐՅԱԼ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Փրկչի հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ, Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին նաև բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ, ամենաջերմ և հարգալիր զգացմունքներով գրված, արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերի թեմական առաջնորդներից, թեմական և եկեղեցական խորհուրդներից, հոգևոր հովիվներից, ազգային-եկեղեցական և մշակութային կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

ԿՐՈՆԱԿԱՆ

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԻՆ

(Հոգեգալստյան տոնի առթիվ)

Հոգեգալստյան տոնը փակում է Քրիստոսի երկրավոր տնօրինությունների և ավետարանական պատմության շրջանը։

Հոգեգալստյան տոնին բացվում է Քրիստոնեական Եկեղեցու կյանքում այն նոր շրջանը, որը կոչվում է առաքելական շրջան և տևում է մինչև Ա դարի վերջը, մինչև Հովհաննես ավետարանչի մահը։

Դա այն շրջանն է, երբ Քրիստոսի հրաշափառ համբարձման դեպքից հետո առաքյալները Երուսաղեմից սկսյալ մինչև «ընդ ամենայն երկիր» տարածեցին Ավետարանի քարոզությունը «գործակցությամբ Տեառն», այսինքն Քրիստոսի երկնային պաշտպանությամբ և առաքելական հրաշքների զորությամբ, ինչպես պատմվում է Մարկոսի Ավետարանի վերջին գլխում (ԺԶ 20)։

Ս. Հոգու իջման կամ Հոգեգալստյան դեպքով սկսվում է Եկեղեցու կազմակերպության առաքելական գործունեությունը, Ավետարանի Պաղեստինից դուրս քարոզության բնագավառում։

Համբարձման դեպքից հետո առաքյալները մտքով ու սրտով լուսավորված, Ձիթենյաց սարից, Գեթսեմանիի և Կենտրոնի ձորի ճանապարհով վերադարձան քաղաք՝ Երուսաղեմ, Մարկոս ավետարանչի մոր տունը, և «նստին ի վերնատունն», վերջին հանդիսավոր ընթրիքի ընդունարանը, «ուր վանք իսկ էին», և Քրիստոսի պատվերի համաձայն, սպասեցին «աւետեացն Հօրն», ստանալու համար «զօրութիւն ի հասանել Հոգւոյն Սրբոյ ի վերայ ձերոյ և լինելու Քրիստոսի աննկուն «վկայք յԵրուսաղէմ և յամենայն Հրէաստանի... և մինչև ի ծագս երկրի» (Գործք Ա 4, 8)։

Առաքյալների սրտում դեռ արձագանքում էին Հիսուսի հրաժեշտի վերջին ու սրտառուչ խոսքերն ու մտածումները սրբազան պատգամի վճռականությամբ, երբ արդեն «մարմնով» հեռացել էր սիրելի Վարդապետը, որի հետ նրանք կապվել էին անքակտելի բարեկամությամբ և բարոյական մի ուխտով, և որին այլևս «տեսանելի աչօք» չպիտի տեսնեին։ Բայց նա «հոգեպես», կենդանի ներկայությամբ նրանց հետ, նրանց մեջ պիտի լիներ «մինչև ի կատարած աշխարհի» (Մատթ. ԻԸ 20), որպես ներշնչման, հույսի և խրախույսի տևական զորություն։

Առաքյալները կանգնել էին ավետարանական քարոզության մի նոր ու դժվար հանգրվանի առաջ։ Նրանց առաջ բացվել էր առաքելական գործունեության ընդհանուր շրջանակը։ Քրիստոսի համբարձումից հետո սկսվում է Քրիստոնեական Եկեղեցու առաքելական գործունեությունը։ Մինչ այդ մարմնով Իր Եկեղեցու հետ էր Տերը, առաջնորդում և ղեկավարում էր այն։ Համբարձումով Քրիստոս լրացրեց Իրեն հանձնված երկրավոր առաքելությունը։ Նա կատարեց փրկագործությունը, կրեց չարչարանքներ, թա-

վեց իր արյունը աշխարհի և մարդկանց փրկության համար, և իր հրաշափառ հարությունից հետո 40 օր Իր Եկեղեցին կազմակերպեց, ապա «Համբարձաւ փառօք և նստաւ ընդ աջմէ Աստուծոյ» Իր համբարձումից հետո, Քրիստոս Իր եկեղեցին ղեկավարում է Իր պատգամներով և Ս. Հոգու զորությամբ, որն իջավ առաքյալների վրա, համբարձումից 10 օր հետո, «ի կատարել աւուրցն Պենտեկոստէից» (Գործք Բ 1)։

Հոգեգալստյան տոնին, Պենտեկոստեի օրերին, Վերնատան մեջ, կազմակերպվեց Սրուսաղեմի առաջին քրիստոնեական Եկեղեցին, որը սովորաբար կոչվում է նաև Աշխարհամատուռ։

Համբարձումից մինչև Հոգեգալուստ երկարող 10 օրերի ընթացքում, առաքելական խումբը, ի գլուխ ունենալով Ս. Կույսը, աշակերտների, յուղարեր կանանց մոտ 120 հոգի հաշվող խումբը, անձկանոք և մեծ հույսով սպասում էին, հոգեպես պատրաստված, ընդունելու երկնային զորությունը և ապա ձեռնարկելու առաքելական քարոզության։

Անցան աղոթքի, առանձնության, ապաշխարության և անձկագին սպասման 10 օրերը, որոնց ընթացքում «ամենեքեան էին հանապազորդեալ միաբան յաղօթս... ի Տաճարին գովէին և օրհնէին զԱստուած»։

Եվ ահա հրեական Պենտեկոստեի հաջորդ օրը, երբ առաքյալները, «առնուանց իբրև հարիւր և քսանից... էին ամենեքեան միաբան ի միասին», Քրիստոսի խոստման համաձայն, Մխիթարիչ Ս. Հոգին իջավ, «և ամենեքեան լցան Հոգւով Սրբով։ Ս. Հոգին, աստվածային շնորհաց զորությունը իջավ Վերնատան մեջ բոլոր հավատացյալների վրա հավասարապես, նեռքեն մի զորություն, «որ անոնց հոգիին վրա կազդի, միտքը կլուսավորե, սիրտը կուղղե, կամքը կզորացնե, վարանումը կփարատե, արիություն կներշնչե և ազդեցություն ընելու կարողություն կուտա։ Այդ էր, որ առաքյալներուն պետք էր, այդ էր, զոր Հիսուս խոստացեր էր, և այդ էր, որ հատուկ և հայտնի կերպով նույն օրը պարգևվեցավ Վերնատան մեջ եղողներուն» (Սրմանյան, «Համապատում», էջ 1018)։

Պենտեկոստեն, որը հունարեն բառ է և նշանակում է հիսներորդ կամ հիսներորդ օր և մեր լեզվում թարգմանվել է «Հինունք» (հիսուն) բառով, հրեական Զատկից հետո հիսներորդ օրում կատարվող «գոհաբանության տոն» էր։ Պենտեկոստեի տոնի օրը հրեաները նշում էին Սինա լեռան վրա Մովսիսական օրենքի տվչությունը և Հին Ուխտի հոչակման հիշատակը, որն ըստ եբրայական տոմարի, հանդիպում էր միշտ հրեական Զատկից իբր 50 օր հետո։ Պենտեկոստեի տոնը միաժամանակ կոչվում էր Նրանց մոտ «Ծօն երեխայրեաց հնձոց», երբ նոր հունձի երախայրիքը տարվա առաջին ցորենը, պատրաստած նկանակների և պանների (Գաց) ձևով նվիրում էին Եհովային, յոթ երինջների և մի զվարակի (նոր հոտից) և խոյերի զոհամատ։ Հնձոց տոնը կատարելուց հետո միայն կարելի էր ուտել տարվա նոր ցորենը։

Քրիստոնեական Պենտեկոստեն տոնն է առաքյալների վրա Ս. Հոգու հեղման, Եկեղեցու հիմնարկության, այսինքն քրիստոնեական օրենքի տվչության և նոր Ուխտի հոչակման։ Սինա լեռան վրա Եհովան օրենքը տվեց, իսկ Վերնատան մեջ Աստված Իր Ս. Հոգին՝ շնորհը տվեց, «զնոգին ճշմարտութեան, որ ի Հօրէ ելանէ» (Յովհ. ԺԵ 26)։

Հոգեգալստյան տոնը կամ Պենտեկոստեն քրիստոնեության երկու ամենահին տոներից մեկն է, Զատկի տոնի հետ։ Առաքելական դարում, Պենտեկոստեն ոչ միայն Ս. Հոգու առաջին տեսանելի հայտնության տոնն էր, այլ նաև Զատիկից մինչև Հոգեգալուստ երկարող հիսուն օրերի տոնը, «ցնծալից տոնախմբություն մը, որ կհիշեցներ Հիսուսի Իր հարությունեն ետքը երկրի վրա անցուցած օրերը և կընդգրկեր Հարության, Համբարձման և Ս. Հոգվույն հեղման տոները»։

Զատկական այս հիսուն օրերի կամ ժամանակաշրջանի տոնախմբությունը շատ հին սովորություն էր Ընդհանուր Եկեղեցու կյանքում։ Ամբողջ այդ հիսուն օրերի շրջանը համարվում էր միակ և նույն մի կիրակի հիսուն օրերի վրա երկարաձգված։ Այդ հիսուն օրերին Եկեղեցին պահեցողություն չէր պահում և աղոթքները պետք է լինեին հոտընկայս, այսինքն առանց ծնրադրության։ Հետագայում էր, որ միասնական այս տոնախմբությունը չպահվեց և յուրաքանչյուր տոն՝ Հարություն, Համբարձում, Հոգեգալուստ, եղավ առանձին տոն և քրիստոնեական հասկացողությամբ Պենտեկոստեն կոչվեց Հոգեգալուստ։ Առաջներում Հոգեգալստյան տոնը մեր Եկեղեցում տոնվում էր մի օր միայն։ Շնորհալին էր (ԺԲ դար), որ տնօրինեց ամբողջ յոթնյակի ընթացքում նշել Հոգեգալստյան տոնը։ Հոգեգալստյան առաջին օրվա շարականը՝ «Առաքելոյ աղաւնոյ և կցորդը՝ «Կենդանարար Աստուածդ, ընծայվում է Մովսես Խորենացուն (ոմանք այն ընծայում են Հովհաննես Մանդակունուն), իսկ Բ, Գ, Դ և Ե օրերի շարականները գրել է Շնորհալին և Զ և Է օրերինը՝ Ներսես Լամբրոնացին։

Հոգեգալստյան օրը Վերնատան մեջ Ս. Հոգին հայտնվեց որպես մարդկային մտքի և սրտի վրա ներգործող աստվածային լույս և միաժամանակ մաքրող, սրբող հուր։ Պո-

զոս առաքյալը խրատում է նորադարձ Թեսաղոնիկեցիներին՝ չհանգցնել Ս. Հոգու լույսը՝ «զՀոգին մի՛ շիջուցանէք», այսինքն՝ չմարել մարդու մեջ աստվածադիր հոգու նվիրական հուրը (Ա Թեսաղ. Ե 19), որովհետև Ս. Հոգու լույսի շիջումը հոգեկան և բարոյական մահ, խավար է մարդու համար. Ս. Հոգին աստվածային այն ներգործող լույսն է, ուրեմն, որ պայծառացնում է մարդու միտքը, սիրտը, ընկալելու համար գերագույն ճշմարտությունները, լուսավորում է մարդու ճանապարհը դեպի Աստծու, ընկերոջ և անձի նկատմամբ իր պարտականությունների կատարումը։ Ս. Հոգու լույսով է, որ հավատացյալը թափանցում է Աստծու էության և արարչության խորհրդին և նպատակներին։ Առանց Ս. Հոգու լույսին՝ մարդկային միտքը կխարխափեր խավարի, անտարբերության և տարակուսանքի մռայլ ճանապարհների վրա։

Ս. Հոգին նաև ճուր է, սրբական կրակ, որ ջերմացնում է մեզ, պողպատում մարդու կամքը, համբերելու համար իր առաքելության ճանապարհին ընկած դժվարություններին, մաքրազարդում մարդու զգացմունքները, բեղմնավորում մեր սիրտը, մեր բարոյական կյանքը, բողբոջելով և աճեցնելով մարդու կյանքում Աստծուն հաճելի և ընկերոջ օգտակար արարքներ, մեր կյանքը դարձնելով պատարագ, նվիրում, «ցնծալ պտղովք արդարութեան ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, ի փառս և ի գովեստ Աստուծոյ»։

Այս լույս և հուր Հոգին՝ մարդու մեջ եղած աստվածային հոգին, միաժամանակ ճշմարտության Հոգին է, որ «ի Հօրէ ելանէ» և որ իր պայծառ իմաստությամբ, իր սիրո ջերմությամբ և իր սրության ճաճանչով ասվորեցնում, առաջնորդում և խրատում է մեզ, որպեսզի միշտ և ճշմարտապես «բացցին աչք մեր» խաբուսիկ երևույթներից վեր, դեպի բուն և իսկական ճշմարտությունը, որպեսզի միշտ արթնանվի և բոցավառվի որպես «անկեզ մորենի» ճշմարտության սերը և ձգտումը մեր մեջ, որպեսզի վառ ու կենդանի մնան Աստծու պարգևած շնորհները՝ հոգևոր կենդանության կրակը, կոչման գիտակցությունը, բանականության լույսը և խղճի ձայնը մարդու մեջ։ Մարդու կյանքը «հոգևանգ ճրագ մըն է, որուն մէջ կվառի Հոգիի լույսը»։ Ճշմարտության աստվածային հոգու շիջումը, խավարումը, հակառակ դեպքում, կլիներ մարդու մեծագույն չարիքը, հոգեկան ու բարոյական անդամալուծությունը, մահը։

Ճշմարտության ոտնահարումով, բռնաբարումով «Հոգի՛ կուտամ» և ապա «կշիջի»։ Ներսես Լամբրոնացի հայրապետը, իր ներողության ասացեալ ի հրաշափառ գալուստ Հոգւոյն Սրբոյ» ճառի մեջ, Հիսուսի բերանով դիմում է Ս. Հոգուն. «...է՛լ այժմիկ սիրոյ աղբիւր սիրով առ նոսա. և մխիթարեա՝ զոսա ի պանդխտութեան վայրն՝ նեղեալ և անցաւոր կենաց տառապին։ Դարձո՛ զնոսա ի ներութեանցն. զոր ի զուր խռովեցուցանէ թշնամին, նայեալ յայս բազմապատիկ օթևանս՝ զոր պատրաստեցաք նոցա։ Բաշխեա՛ նոցա իմաստություն առատ, զի մի՛ եղեռնագործն մոլորեցուցէ զնոսա։ Հաղորդեցայ կարեաց նոցա, և ծանեայ փորձիւ, զի տկար և դիւրակործան բնութեան են վիճակեալ. վասն այնորիկ աղաչեմ, անմեկնելի լե՛ր ի նոցանէ. և զօրացո՛ զնոսա ընդդէմ ամենայն փորձանաց։ Նահանջեա՛ զկամս մարմնոցն, և զորացո՛ զկամս մտացն։ Քեզ տամ զնոսա. քեզ յանձն առնեմ զնոսա. զքեզ խոստացայ նոցա. և այժմ ի քեզ ամրափակեմ զնոսա զամենեսեան. որպէս զի մի՛ լիցի ի նանիր հեղումն արեան իմոյ, որ վասն նոցա։ Առատացո՛ ի նոսա, ո՛վ համագոյակից իմ հոգի՝ զշնորհս բժշկութեան, զմարգարէութիւն, զխորհելն զվերինս, զատելն զներքինս։

Այդ նույն աստվածային ճշմարտության և արդարության Ս. Հոգին է առաջնորդել Հայաստանյայց եկեղեցուն իր ողջ պատմության ընթացքում։ «Զօրացուցիչ, աստուածացուցիչ, միշտ ընդունող, սրբող» Ս. Հոգու զորությամբ և ներգործությամբ է, որ հայ ժողովուրդը անկորուստ և անաղարտ է պահել իր ազգային-եկեղեցական ինքնուրույնությունը, իր հավատի ուղղափառությունն ու ճշմարտությունը։ Մեր Եկեղեցու պայծառ դեմքերից մեկը, Հովհան Երզնկացին, գրում է, որ Ս. Հոգու ներգործությամբ, «ուղղափառ հաւատոյ քո լոյս՝ ո՞վ Եկեղեցի Հայոց, ոչ նուազեցաւ, ի բարի սերմանս ցորենոյդ՝ որոմն ոչ խառնեցաւ, զաղբիւր յստակ աւանդութեանց քոց՝ աղտաղտուկ ջուր օտարոտի ուսմանց ոչ պղտորեցաւ, ի ստուգութեան և ի ճշմարտութեան հացն քո կենդանական՝ մեռելական իմոր և հերձուած քաղտախութեան չարութեան ոչ կանգնեցաւ, յոսկի անարիւ հաւատոյն և յարծաթ յուսատեսիլ բանին՝ պղինձ ժանգահոտ և կապար սեւթույր ոչ գտաւ։

Ճշմարտության այդ Հոգին է, որ իշել է մեր Եկեղեցու վրա ձեռնադրության շնորհաբաշխության ժամանակ. «Քոմ ամենազոր էութեանդ խոստովանիմք զամենայն պարգև ի մեզ ծաղկեալ և աճեցեալ, որ ձեռնադրես առաքեալս, կեցուցանես մարգարէս, ուսուցանես վարդապետս, բարձրացուցանես համբերս, և բանաս զփակեալ ականջս խլեաց» (Նարեկացի)։

Այսօր բովանդակ աշխարհը, մարդկութիւնը ավելի քան երբեք կարոտ է աստուածային այդ Մխիթարչին, որպէսզի նա օգնական լինի մեզ մեր տկարութիւնների մեջ, շարի ու կեղծիքի դեմ մեր ամենօրյա պայքարի մեջ, օգնական լինի մեր հոգեկան, բարոյական կարիքների մեջ, ամոքիչ՝ մեր ցավերին, հույս՝ մեր վհատության ժամերին և սայթաքումների մեջ, լույս՝ մեր երերուն, երկրավոր կյանքի ճանապարհների վրա։

Աշխարհ առանց այդ ճշմարտության ոգուն անմխիթար է, անհանգիստ և բաժան-բաժան ինքնիր մեջ։ «Եւ աղաչեցից զՀայր, և այլ Մխիթարիչ տացէ ձեզ, զի ընդ ձեզ լինիցի։ ի յաւիտեան» (Յովհ. ԺԴ 16)։

Ճշմարտության ուրացումը, ճշմարտության սգու ժխտումը աղետավոր է աշխարհի համար, ընկերությունների և ընտանիքների, և վերջապես մարդկության համար։

Սակայն միշտ չէ, որ սիրով լսվում է ճշմարտության ձայնը։ Շատերի սրտերում իշխում է ոչ թե ճշմարտության ոգին, այլ նեղձիրի, ստի և խաբեության ոգին, ոչ թե մեղայուն, աստուածային ոգին, այլ խարուսիկ, ժամանակի ոգին, որը փոփոխվում է ըստ պարագայի և պայմանների։

Այսօր էլ մեր եկեղեցին ավելի քան երբեք կարիքն ունի ճշմարտության այդ հոգիին, «յաւատութենէ նորա կաթիլս իմաստից ընդունելս-ու (Համբոնացի) և ճշմարտության Հանապարհով ընթանալու համար։

«Էջ այժմիկ, սիրոյ աղբիւր, սիրով առ մեզ և մխիթարեա զմեզ...։ Զունիմք զօրութիւն հանդիսանալ ի մարտ ճգնութեան, խնդրեմք հառաչմամբ մի՝ տալ զմեզ ի փորձանս զայանակալին չարութեան։ Տո՛ւր ծարաւեացս կգինի սիրոյ քո արբեցութեան, զմատուցեալն այսօր ի սուրբ Վերնասանն։ Զի մխիթարեսցուք ի խաչիս մերոյ տրտմութեան, և ի հանդերձեալ կենացն յոյս կալցուք ապատման։

Ո՛վ բարերար Ս. Հոգի, և յայս նուէրս, որ ի քոյոցս քեզ բուրումն օրհնութեան, հոտոտեա քաղցրութեամբ, Աստուած իմ Հոգի հեզութեան։ Եւ քեզ օրհնութիւն ի մէջ մի բերան ընդ Հօր և Որդւոյ ի մշտնջենաւոր կեանսդ, և յանմահաճան։

Ա. Հ.

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

Եւ ի կատարել աւուրցն Պենտակոստէից էին ամենեքեան ի միասին: Եւ եղև յանկարծակի ճնչիւն յերկնից՝ եկեալ իբրև սաստիկ հողմոյ, և ելից զամենայն տունն յորում նըստէին: Եւ երևեցան նոցա բաժանեալ լեզուք իբրև ի հրոյ, և նստաւ իւրմանչիւր ի վերայ նոցա: Եւ լցան ամենեքեան Հոգւով Սրբով, և սկսան խօսել յայլ լեզուս որպէս և Հոգին տայր բարբառել նոցա: Եւ էին յԵրուսաղէմ բնակեալ Հրեայք, արք երկիւղածք, յամենայն ազգաց որ ի ներքոյ երկնից: Եւ իբրև եղև բարբառս այս, եկն միաբան բազմութիւնն և իրարանցաւ, զի լսէին յիւրաքանչիւր լեզուս խօսել նոցա: Սքանչանային ամենեքեան և զարմանային և ասէին ընդ միմեանս. Ո՞չ ասասիկ ամենեքեան սոքա որք խօսին՝ Գալիլեացիք են. Եւ զիա՞րդ լսեմք մեք յիւրաքանչիւր բարբառս մեր յորում ծնեալ եմք. Պարթևք և Մարք և Իղամացիք և որ բնակեալ են ի Միջագետս, ի Հրէաստանի և ի Գամիրս, ի Պոնտոս և յԱսիա, ի Փռիւգիա և ի Պամփիլիա, յԵգիպտոս և ի կողմանս Լիբէացւոց որ ընդ Կիւրենացիս և որ եկք Հռովմայեցիք, Հրեայք և եկք նոցուն, Կրետացիք և Արաբացիք, լսեմք խօսիլ նոցա ի մեր լեզուս զմեծամեծս Աստուծոյ: Սքանչանային ամենեքեան զարմացեալք, և ասէին ցմիմեանս, Զի՞նչ կամիցի այս լինել: Եւ կիսոցն ընդ խաղ արկեալ ասէին թէ Քաղցուալից իցեն:

Յարուցեալ Պետրոս հանդերձ մեռասանիւքն՝ ամբարձ զձայն իւր և խօսեցաւ ընդ նոսա, Արք Հրէաստանեայք և որ բնակեալ էք յԵրուսաղէմ, ամենեքին, այս ձեզ յայտնի լիցի, և ունկն դիք բանից իմոց. Ոչ որպէս դուք կարծէք թէ սոքա արբեալ իցեն, զի դեռ երեք ժամք են աւուրս: Այլ այս է որ ասացաւ ի ձեռն մարգարէին Յովելայ. Եւ եղիցի յետ այսորիկ յաւուրս յետինս, ասէ Աստուած, հեղից յՈգւոյ իմմէ ի վերայ ամենայն մարմնոյ, և մարգարէասցին ուսուցեալք ձեր և դստերք ձեր, և երիտասարդք ձեր երազովք յերազեսցին: Եւ ի վերայ ծառայից իմոց և ի վերայ աղախնանց իմոց յաւուրսն յայնոսիկ հեղից յՈգւոյ իմմէ, և մարգարէասցին: Եւ տաց նշանս յերկինս ի վեր, և նշանս յերկիր ի խոնարհ՝ արիւն և հուր և մրրիկ ծխոյ: Արեգակն դարձցի ի խաւար, և լուսին՝ յարիւն, մինչչև եկեալ իցէ օր Տեառն մեծ և երևելի: Եւ եղիցի ամենայն որ կարդասցէ զանուն Տեառն՝ կեցցէ:

(ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ, Բ 1—21)

ԾԱՂԿԱՔԱՂ ՇԱՐԱԿԱՆՈՑԻՑ

ՇԱՐԱԿԱՆՔ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ

Առաքելոյ աղաւնոյ իջանելով մեծաձայն ճնշմամբ ի բարձանց,
Ի նմանութիւն լուսոյ փայլման հրազինեաց անկիզելի գաշակերտսն,
Մինչդեռ նստէին ի սուրբ վերնատանն:

Անհիւրական աղաւնի, անճնեալի որ ինքն զխորս Աստուծոյ,
Զոր առեալ ի Հօրէ պատմէ զանուր և զմիւսանգամ գալուստն,
Զոր քարոզեցին համագոյական:

Սրճնութիւն ի բարձունս, ելողին ի Հօրէ Հոգւոյն Սրբոյ,
Որով առաքեալքն արբեցան անմահական բաժակաւն,
Եւ հրաւիրեցին զերկիրս ի յերկինս:

Կենդանարար Աստուած, մարդասէր Հոգի,
Զժողովեալսն միաբանական սիրով լուսաւորեցեր հրեղինօք լեզուօք.
Վասն որոյ և մեք այսօր ասենք զգալուստ քո սուրբ:

Զուարճացան քո գալստեամբն սուրբ առաքեալքն,
Կոչելով ի միասին զցրուեալսն ի միմեանց բազմաձայն լեզուօք.
Վասն որոյ և մեք այսօր ասենք զգալուստ քո սուրբ:

Հոգևորական սուրբ մկրտութեամբ,
Զարդարեցեր նոքօք զտիեզերս ի զգեստս լուսափայլս և նորափեսուրս.
Վասն որոյ և մեք այսօր ասենք զգալուստ քո սուրբ:

ՀԱՅԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՔԱՂՎԱԾՔՆԵՐ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1958 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի ՆԻՍՏԻՑ

Գերագույն Հոգևոր Խորհրդի սույն նիստում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, քննարկվեց Հայ և Անգլիկան եկեղեցիների միջև բարեկամական ավելի սերտ հարաբերություններ հաստատելու նպատակով, առաջիկա բանակցությունների հարցը և որոշվեց, Քենտրբերիի Արքեպիսկոպոս Նորին Ամենապատվություն դոկտ. Ջեոֆֆրի Ֆիշերի համաձայնությունը ստանալուց հետո, 1958 թվականի ընթացքում Երուսաղեմի հայոց Ս. Հակոբյանց վանքում հրավիրել առաջին ժողովը։

Վեհափառ Հայրապետի անունից և Հայաստանյայց Եկեղեցու կողմից միջեկեղեցական այդ բանակցություններին կմասնակցեն Երուսաղեմի հայոց ընտրյալ պատրիարք ամենապատիվ Տ. Տիրան արքեպիսկոպոսը որպես նախագահ, Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Փարիզի հայոց առաջնորդ գերապատիվ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանը և մի վարդապետ։

Միջեկեղեցական այդ ժողովի օրակարգի մշակումը թողնվել է երկու պատվիրակությունների հայեցողությանը։ Երուսաղեմի այդ ժողովը պետք է հանդիսանա հայ և Անգլիկան եկեղեցիների միջև փոխադարձ իրարհասկացողության լուսարանիչ ժողով։

1958 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ՆԻՍՏԻՑ

Գերագույն Հոգևոր Խորհրդի սույն նիստում մեծ ուրախությամբ քննարկվեց Վեհափառ Հայրապետի ծննդյան 50-ամյակը (20 սեպտեմբերի 1908 թ.) և դահակալության երրորդ տարեդարձը համազգային հանդիսությամբ և լայնորեն նշելու հարցը և որոշվեց.

1) Վեհափառ Հայրապետի ծննդյան 50-ամյակի ուրախ առիթով, մինչև 1958 թվականի սեպտեմբեր ամիսը լույս ընծայել Վեհափառ Հայրապետի կենսագրությունն ու սրբատառ կոնդակների և քարոզների մի հատընտիր, 20—24 տպագրական մամուլ ծավալով, մի հատորում։

2) Կազմել հոբելյանական հանձնաժողով հետևյալ կազմով. Մայր Տաճարի լուսարարապետ և Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան (նախագահ), Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյան, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ պրոֆ.-դոկտ. Ա. Ղարիբյան, պրոֆ. Ա. Առաքելյան և դոցենտ Ա. Տիրացյան, Հոգևոր Ճեմարանի փոխ-տեսուչ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյան (քարտուղար) և «էջմիածին» ամսագրի խմբագիր պր. Ա. Հատիտյան։

1958 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի ՆԻՍՏԻՑ

Գերագույն Հոգևոր Խորհրդի սույն նիստում հաստատվեց Շիրակի նորընտիր թեմական խորհրդի հետևյալ կազմը. հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյան (առաջնորդական փոխանորդ)՝ նախագահ, արժանապատիվ Տ. Հակոբ ավագ քահանա Քելամյան, արժանապատիվ Տ. Նորայր քահանա Սարգսյան, Հովհաննես Գործակալյան, Նարսես Ներսեսյան, Հովհաննես Ստեփանյան, Գրիգոր Աղիլյան և Գևորգ Հատիտյան՝ անդամներ։

Սույն նիստում հաստատվեց նաև Ապարանյան թեմի նորընտիր թեմական խորհրդի կազմը, որի մեջ մտնում են հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյան (առաջնորդական փոխանորդ)՝ նախագահ, արժանապատիվ Տ. Սարգիս քահանա Անդրեասյան (քարտուղար), արժանապատիվ Տ. Հովսեփ քահանա Քյոսեյան, Պարոն Շահբաղյան, Գրիգոր Կյուլյան, Սուրեն Թարայան և Խաչիկ Վարդանյան՝ անդամներ։

1958 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի ՆԻՍՏԻՑ

Գերագույն Հոգևոր Խորհրդի սույն նիստում լսվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավոր հաշվապահ պր. Գառնիկ Քեհյայանի զեկուցագիրը հայրենի և Սովետական Միության մեր եկեղեցական թեմերի (Արարատյան, Շիրակի, Աղբրեջանի, Վրաստանի, Հյուսիսային Կովկասի) 1957 տարվա բյուջեների կատարման և 1958 թվականի նախահաշիվների քննարկման և հաստատման մասին։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը մանրամասն քննելուց հետո զեկուցագիրը, որոշեց հաստատել թեմերի 1957 թվականի հաշվետվությունը և 1958 թվականի նախահաշիվները։

1958 Թ. ՄԱՐՏԻ 7-Ի ՆԻՍՏԻՑ

Գերագույն Հոգևոր Խորհրդի սույն նիստում կարդացվեց Մոսկվայի և Համայն Ռուսիոց Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիի հրավեր նամակը, ուղղված Վեհափառ Հայրապետին, սույն թվականի մայիսի կեսերին Մոսկվայում կայանալիք Ռուս Պրավոսլավ Եկեղեցու Պատրիարքության վերահաստատման 40-ամյակին նվիրված հանդիսություններին մասնակցելու մասին։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը սիրով ընդունեց Նորին Սրբության հրավերը և խնդրեց Վեհափառ Հայրապետին՝ անձամբ գլխավորել Ռուս Պրավոսլավ Եկեղեցու Պատրիարքության վերահաստատման 40-ամյակի հանդիսություններին մասնակցելու հրավիրված Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատվիրակությանը, որի կազմի մեջ են մտնում, որպես ուղեկիցներ, գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տ. Հովհաննիսյանը և գավազանակիր հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Մնջարյանը։

Գերագույն Հոգևոր Խորհրդի սույն նիստում որոշվեց Վեհափառ Հայրապետի անունից ողջույնի շնորհավորական հեռագիր ուղարկել նորակազմ Միացյալ Արաբական Հանրապետության նորընտիր Նախագահ Նորին Գերազանցություն պր. Գամալ Աբդել Նասերին՝ նրա Նախագահ ընտրության երջանիկ առիթով։

1958 Թ. ՄԱՐՏԻ 21-Ի ՆԻՍՏԻՑ

Գերագույն Հոգևոր Խորհրդի սույն նիստում լսվեց Մայր Աթոռի տնտեսագիտական կառավարչության պետ պր. Հ. Սեդրակյանի զեկուցումը Մայր Աթոռի 1958 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշվի մասին։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը քննեց Մայր Աթոռի 1958 թվականի տարեկան բյուջեն ըստ գլուխների և հոդվածների և հաստատեց այն։

1957 թվականի հաշվետվությունը Գերագույն Հոգևոր Խորհրդում կքննվի Վերստուգիչ հանձնաժողովի ստուգման աշխատանքների ավարտից հետո, արդյունքների մասին զեկուցագրի հետ միասին։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ՍՐԹԻՎ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌՈՒՄ

Ապրիլի 6-ն է, կիրակի, Զատիկ։

Մայր Տաճարում նորից թնդաց խնկաբույր շարականների և հարության երգերի հոգեպար և քաղցր մեղեդին։

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ»։

Զատկի տոնն է։ Ուրախ է Մայր Աթոռը, ուրախ է Վեհափառ Հայրապետը, ուրախ են բոլորը։ Գարուն է դուրսը, գարուն է հայ հոգիների մեջ։

Վաղ առավոտից հավատացյալների բազմությունը լցրել է Մայր Տաճարը, վանքի շրջակայքը. Էջմիածնի փողոցներն ու մայթերը, մինչ նորանոր ուխտավորական խմբեր, խնկով և մոմերով, մատաղներով, շտապում են դեպի Մայր Աթոռ։ Զենվում են բազմաթիվ մատաղներ։ Տոնական տրամադրություն է ամեն կողմ։

Մայր Տաճարը նույնպես զարդարվել է տոնականորեն։ Պայծառ փողփոչում են նորահաստատ էլեկտրական նոր ջահերը Մայր Տաճարում, Ավագ և Իշման սեղանների առաջ։ Մոմակալներում առկայծում են անհամար մոմեր, ջինջ արցունքներու նման։ Խնկի «Շավիղ մշուշը» պարուրել է հոգիները։

Ժամը 12-ն է։ Զվարթագին և տոնական զողանջում են Մայր Տաճարի զանգերը։ Վեհափառ Հայրապետը, հայրապետական լրիվ զգեստավորման մեջ, իջնում է Մայր Տաճարը, սուրբ պատարագ մատուցելու։ Խուռն բազմությունը մի պահ ալեկոծվում է խաղաղ, ի տես Վեհափառ Հայրապետի։ Բոլոր շրթունքները աղոթքներ են մրմնջում։ Վեհափառը, իր շուրջը օրհնություն սփռելով, մտնում է Մայր Տաճար։

Մայր Տաճարի երկու դասերի մեջ տեղ են գրավել Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Ինկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը, Խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի օժանդակ ճարտարապետների և ինժեներների խումբը, Մայր Աթոռի պաշտոնեությունը և այլ հրավիրյալներ, ուխտավորներ։

Սկսվում է հայրապետական սուրբ պատարագը։ Վեհափառ Հայրապետին սպասարկում են գերաշնորհ Տ. Սահակ և Տ. Հայկազուն սրբազանները, հոգեշնորհ Տ. Մես-

րոպ և Տ. Մուշեղ վարդապետները, Տ. Հուսիկ արեղան և Տ. Հովհաննես քահանան։

Մայր Տաճարի երգչախումբը, դաշն ու հանդիսավոր, երգում է սուրբ պատարագը։ Ամեն ոգոմ խունկ, լույս, աղոթք և վեհություն։ Քարոզում է Վեհափառ Հայրապետը. սուրբ հարության մեծ ավետիսը տալով բովանդակ հայության։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը նույն հանդիսությամբ առաջնորդվում է Մաղկյա Դահլիճ, ուր բազմելով Հայրապետական Գահի վրա, ընդունում է պետական պաշտոնական անձնավորությունների, Գերագույն Հոգևոր խորհրդի, միաբանության, Հոգևոր Ճեմարանի վերատեսչության և դասախոսական կազմի, վանքի պաշտոնեության և ժողովրդի շնորհավորությունները։

Պաշտոնական այս ընդունելության ժամանակ խոսք առավ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը և հանուն հայ ժողովրդի ու բոլոր ներկաների սրտագին շնորհավորեց Վեհափառ Հայրապետի Զատիկը։

Ապա Վեհափառ Հայրապետը շնորհավորեց բովանդակ հայության Զատիկը, օրհնեց Հայրենի կառավարությունը, հայ մշակույթի անխոնջ մշակներին և համայն Ազգն Հայոց։

Ժամը 4-ին, Վեհարանի սեղանատան մեջ, Ս. Զատկի առթիվ տրվեց ճաշկերույթ։

Ավելի քան սրտահույզ էր մթնոլորտը։ Ազգի ուրը և Ծկնեցու խորհուրդը քով-քովի էին բերել բոլորին, ստեղծելու համար այն ջերմ մթնոլորտը, որը Վեհափառ Հայրապետի նման հավատավոր և հայրենասեր մեծ հոգու ներկայությունը կարող է ստեղծել։

Արտասանվեցին բաժակաճառեր, խոսքեր, արտասանություններ և երգեր։ Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց իր անձի և գործի շուրջ եղած ջերմ և համակրական խոսքերի համար։

Երկու ժամ տևող այս հաճելի սեղանը մի քաղցր առիթ եղավ մի անգամ ևս ապրելու Էջմիածնի անունով, Վեհափառ Հայրապետի գործով և հայ ժողովրդի սիրով։

Վեհափառ Հայրապետի Տերունական աղոթքով վերջացավ զատկական այս ընդունելությունը։

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՄԱՐՏԻ 27-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանում իր երկրորդ շաբաթվան դասախոսությունը կարդաց պրոֆ.-դոկտ. Սվաճյանը «Մարդակազմության մասին» թեմայով, որն ուսանողության կողմից լսվեց մեծ հետաքրքրությամբ։

Վերջում վերատեսուչ սրբազանը շնորհակալություն հայտնեց հարգելի դասախոսին՝ իր օգտակար և բովանդակալից դասախոսության համար։

***

ՄԱՐՏԻ 30-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, ՍԱՂԿԱԶԱՐԴ։ Այս տարի էլ Մայր Աթոռում Սաղկազարդի օրվա սրբազան արարողությունները կատարվեցին մեծ հանդիսությամբ և ավանդական շուքով։

Օրվա առնի ուրախ առիթով Ս. Էջմիածին ուխտի էին եկել բազմաթիվ ուխտավորներ և հավատացյալներ։ Մայր Տաճարի շրջափակը, եկեղեցին լիքն էին ժողովրդական խառն բազմությամբ։ Որը զարմանալի էր, ցնծում և արևոտ Բոլորի ձեռքերին՝ առենու գալար ճյուղեր։ Մայր Տաճարը, Մեծ պահոց տխուր օրերից հետո, զարդարվել է տոնական։ Ամեն կողմ ուրախ տրամադրություն։ Մայր Տաճարում հնչում են ցնծալից՝ Սաղկազարդի տոնին նվիրված հոգևոր շարականներն ու մեղեդիները։

Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը։

Առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը, եկեղեցական թափորով, երգով ու աղոթքով, սրտառուչ բարեմաղթությունների տակ, առաջնորդվում է Մայր Տաճար։

«Հայր մեր»-ի ժամանակ քարոզում է պատարագիչ սրբազանը Սաղկազարդի տոնի և խորհրդի շուրջ, կոչ անելով հավատացյալներին՝ Քրիստոսի առաջ փռել մեր սիրտն ու մաքուր խոհերը, ընդունել Փրկչին միշտ ուրախությամբ, հոգևոր և բարոյական պատրաստությամբ և լինել մաքուր տաճարներ, որտեղ Աստված կարենա բնակվել։

Սուրբ պատարագի ավարտին, Վեհափառ Հայրապետը, ամպհովանու տակ, Մայր Տաճարից առաջնորդվեց դեպի Վեհարան, Իր հայրապետական օրհնությունները բաշխելով հանդիսավոր շքերթի պահին, ճանապարհի երկայնքն ի վար խուռներամ հավաքված բազմության։

Երեկոյան ժամը 5-ին Մայր Տաճարում ավանդական հանդիսությամբ կատարվեց «Դոնբաց էջ»-ի խորհրդավոր արարողությունը։

Մայր Տաճարը նորից լիքն է հավատացյալների բազմությամբ, Ճեմարանականների «Զողորմութեան քո զդուռն բաց մեզ, Տէր» շարականի հաղթական հնչյունների տակ բացվում են Մայր Տաճարի վարագույրները։

«Դոնբաց էջ»-ի արարողության ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ԱՊՐԻԼԻ 2-ԻՆ, ԱՎԱԳ ՇԱԲԹԻ, հետմիջօրեին փակվեց Հոգևոր Ճեմարանը, Զատիկվա արձակուրդի առթիվ։ Երեկոյան ժամերգության ժամանակ ուսանողությունը խոստովանվեց վերատեսուչ սրբազանի առաջ, որը վերջում խոսեց մի գեղեցիկ խրատական Ճեմարանականներին ուղղված, խոստովանության և Ս. Հաղորդության նշանակության վրա։

***

ԱՊՐԻԼԻ 3-ԻՆ, ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ, «ՅԻՇԱՏԱԿ ԸՆԹՐԵԱՑ ՏԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ»։ Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց հոգևոր Տ. Մեսրոպ վարդապետ Անթուրյանը։ «Հայր մեր»-ից առաջ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը աշխարհաբար թարգմանությամբ կարդաց Ս. Բարսեղ Հայրապետի «Վանեցք լեռ», զավակներս, և ես ձեզ իրրև սիրելի և

հարազատ սրբիների՝ Տիրոջ երկյուղը պիտի սովորեցնեմ» ճառը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հավարտ սուրբ պատարագի հաղորդվում է հավատացյալների մի մեծ բազմություն։ Հաղորդվում են նաև Հոգևոր Ճեմարանի ուսանողները։

Երեկոյան ժամը 5-ին, գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսի հանդիսադրությամբ, Մայր Տաճարի Ավագ Սեղանի վրա կատարվում է Ոտնալվայի հանդիսավոր արարողությունը։ Սրբազանը լվանում և ապա օրհնված յուղով օծում է Մայր Աթոռի միաբաններից 12 հոգու ոտքերը, ըստ առաքյալների թվի։ Արարողությունից հետո, հավատացյալներին բաժանվում է օրհնված յուղ։

Ոտնալվայի արարողության ներկա էր Վեհափառ Հայրապետը։

«Ի գիշերի ժամուն հսկումն էր։ Նիկոյան ժամը 8-ին սկսվում է Ավագ հինգշաբթի օրվա մեծ հսկումը, Մայր Տաճարը նորից սղավորվել է։ Սեղանները ու գրակալները ծածկված են սևով։ Թախծոտ մթնոլորտում են Քրիստոսի մատնության ահավոր դեպքին նվիրված ժրդերն ու շարականները։ Կարդացվում են համապատասխան սաղմոսներ և աստվածաշնչական համարներ։ Մինչև ուշ գիշեր Մայր Տաճարում հսկում է նաև հավատացյալ բազմությունը։ Մայր Աթոռի միաբանության հետ։ Սահակ սրբազանը մթության մեջ քարոզում է «Ցուպա, համբուրելո՛վ մատնես զՎարդապետն» բնաբանով։

Հսկումին ներկա է նաև Վեհափառ Հայրապետը, որը և կարդում է մատնության առաջին Ավետարանը։

***

ԱՊՐԻԼԻ 4-ԻՆ, ԱՎԱԳ ՈՒՐԲԱԹ, «ՅԻՇԱՏԱԿ ՁԱՐՁԱՐԱՆԱՑ ԵՒ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ ՏԵՍՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ», ժամը 8-ին Մայր Տաճարում կատարվում է խաչելության կարգը, մասնակցությամբ ամբողջ միաբանության և Ճեմարանի ուսանողության։

Երեկոյան ժամը 5-ին Մայր Տաճարում Վեհափառ Հայրապետը նախագահում է Ավագ ուրբաթի Քրիստոսի Թաղման կարգի կատարման հանդիսության։

Իսման Ս. Սեղանի առաջ պատրաստված է Քրիստոսի գերեզմանը, թաղումը նկարագրող սրբապան իրերով։ Այսօր կարծես տարբեր նշանակություն ունի «Լոյս դուարթ»-ը։ Ապա ողբաձայն հնչում են Թաղման տխուր և մելամաղձոտ մեղեդիները։

Նախատոնակից հետո կազմվում է «Թափօր Թաղմանն»։ Մայր Տաճարում սովորություն է Թաղման կարգը կատարել դուրսը, Մայր Տաճարի շուրջ կազմված թափորով։ Այս բոլորից հետո, Մայր Տաճարում սրտառուչ կերգով հնչում է «Աստուածածին Կոյս Մարիամ» տաղը։ Ապա հաղարավոր հավատացյալներ շրջապատում են Փրկչի գերեզմանը։

***

ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ, ԱՎԱԳ ՇԱԲԱԹ, ՅՈՒՐԱԳԱԼՈՒՅՑ, Երեկոյան ժամը 4-ին Մայր Տաճարում տեսվում է Ճրագալույցի դեղեցիկ արարողությունը, երեք «Ողորմեա»-ների սամնքով։

Վեհափառ Հայրապետը պաշտոնապես իջնում է Մայր Տաճար և կարդում ստեղծագործության պատմությունը Սենդոց գրքից։ Հոգևոր Ճեմարանի դասախոսները հաջորդությամբ և ապրումով կատարում են Դանիելի գրքի հանդիսավոր ընթերցումը։ «Օրհնեցէք, զովեցէք» սաղմոսի դաշն և սրտահույզ երգեցողության հետ, հուշիկ բացվում է Ավագ Սեղանի վարագույրը։ Ճրագալույցի երեկոյան սուրբ պատարագի հանդիսավոր պահն է։ Պատարագում է գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը։ Սուրբ պատարագի ընթացքում, վեհ և հանդիսավոր, հնչում է գիրիժոր-կոնդակոգիտոր Օհան Դուրյանի դաշնավորած «Քրիստոս յարեաւ»-ը, Քրիստոսի հրաշափառ հարության հոգևոր հիմնը, Մայր Աթոռի երգչախմբի կողմից, ղեկավարությամբ եպիսկոպոս պր. Հրանտ Գեորգյանի։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը նախագահում է Զատիկվա նախատոնակի հանդիսության։ Հաղորդվում են շատերը։

Ապա Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով և «Այսօր յարեաւ» շարակնի երգակցությամբ առաջնորդվում է Մայր Աթոռի միաբանական սեղանը, որը օրհնելուց հետո բարեհաճում է սեղանակից լինել «Թաթախման գիշերվա միաբանական ճաշին։

«ՁԵԶ ԵՒ ՄԵԶ ՄԵՏ ԱՒԵՏԻՔ, ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ»։

***

ԱՊՐԻԼԻ 7-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «ԱՒԵՏՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱՇՆԻ» և «ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ», Մայր Տաճարում պատարագից հոգնշնորհ Տ. Հարություն արեղա Մատենչյանը։ Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգիստ ավանն համօրէն ննջեցելոց»։

❁❁❁

ԱՊՐԻԼԻ 10-ԻՆ. ՀԻՆԳՇԱԲԹԻ, Զատկի արձակուրդներից հետո վերաբացվեց Հոգևոր Ճեմարանը։

Ճեմարանում երեկոյան ժամը 4-ին երրորդ անգամ լինելով դասախոսեց պրոֆ.-դոկտ. Սվաճյանը «Եկեղեցական կալվածքների մասին», որը լսվեց հետաքրքրությամբ։

Վերջում վերատեսուչ սրբազանը շնորհակալություն հայտնեց բովանդակալից դասախոսության համար։

❁❁❁

ԱՊՐԻԼԻ 13-ԻՆ, ԿՐԿՆԱՋԱՏԻԿ և «ՑԻՇԱՏԱԿ ԲԻՐԻԱԻՈՐ ՆԱՀԱՏԱԿԱՑՆ ՄԵՐՈՑ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՑԻՆ ԱՌԱՋԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԱՑ»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Տերհակոբյանը։ Պատարագի վերջում քարոզեց դերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, ոգեկոչելով խնկելի հիշատակը մեր բյուրավոր նահատակների։

Ապա Վեհափառ Հայրապետի հանդիսությամբ կատարվեց հոգեհանգիստ։

❁❁❁

ԱՊՐԻԼԻ 17-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 4-ին Հոգևոր Ճեմարանում դասախոսեց Երևանի Պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի երիցագույն դասախոս Գրիգոր Զուքարը «1903 թվականի եկեղեցական կալվածների գրավումը և համաժողովրդական ապստամբությունը նոր փաստաթղթերի լույսի տակ» թեմայով։

Դասախոսության բարեհաճել էր ներկա լինել նաև Վեհափառ Հայրապետը։

Դասախոսությունը լսվեց հարաճուն հետաքրքրությամբ և գոհունակությամբ։

Վերջում վերատեսուչ սրբազանը սրտագին շնորհակալություն հայտնեց շատ չինիչ դասախոսության համար։

❁❁❁

ԱՊՐԻԼԻ 20-ԻՆ, ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԱՄ ԿԱՆԱՉ ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց Գեղարդի վանքի Նորընտիր վանահայր հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը և քարոզեց Հոգևոր Ճեմարանի վերակացու արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարությանը՝ Աշխարհամատրան կամ Կանաչ կիրակիի խորհրդի վրա։

❁❁❁

ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, ժամը 4-ին Հոգևոր Ճեմարանում դասախոսեց Երևանի բժշկական ինստիտուտի ավագ դասախոսներից և վերաբուժական ամբիոնի վարիչ. Բժշկական գիտությունների դոկտ.-պրոֆ. Հակոբ Հակոբյանը «Մարդու նեռվային համակարգը» թեմայի շուրջ։ Դասախոսությունը լսվեց խոր հետաքրքրությամբ։

Վերջում վերատեսուչ սրբազանը ջերմ շնորհակալություն հայտնեց շատ շահեկան և օգտակար դասախոսության համար։

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՊՐԻԼԻ 17-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Ֆինլանդիայի գրողների խումբը, որի կազմումն էին Ֆինլանդիայի շվեդ գրողների միության նախագահ, հայտնի հասարակական գործիչ, դրաքննադատ Յարլ Ուլֆ Տալկվիստը, միության անդամներ՝ բանաստեղծ և նովելիստ Ռոլֆ Պաուլանդը, բանաստեղծ, աստվածաբանության դոկտոր՝ Յալմար Կրուկֆորշը, վիպագիր, տպարանի բանվոր Լեո Օգրենը և ֆինն գրող բանաստեղծուհի Մարիա Լիդա Վարտիան։

❁❁❁

ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ, ՇԱԲԱԹ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Իրանի բռնցքամարտիկների հավաքական թիմի պատվիրակությունը, պատվիրակության ղեկավար պր. Ֆաթհլա Ամիր Ալայի գլխավորությամբ։ Պատվիրակության կազմի մեջ էին երկրի բռնցքամարտի ֆեդերացիայի քարտուղար Մահմուդ Մարդիր Ամանին, բռնցքամարտի սեկցիայի նախագահ Արտաշես Սադինյանը, անվանի բռնցքամարտիկներ՝ Իրանի քառակի չեմպիոն Ամիր Ցավարին, Եռակի չեմպիոններ Հասան Փաքանդամը, Վազիկ Ղազարյանը, Սուրեն Փիրչանյանը, կրկնակի չեմպիոններ՝ Իգարիա Իլխանովը, Կարապետ Քուչարը և ուրիշներ։

Հյուրերը եղան Մայր Տաճարում և Թանգարանում։ Հյուրերին բացատրություն տվեց Թանգարանի վարիչ Տ. Հուսիկ աբեղան։

ՀԱՅՐԵՆԻ ԹԵՄԵՐՈՒՄ

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

(Վերատեսուչ Հոգևոր Ճեմարանի

ԶԱՏԿԻ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԵՐ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՔՎԻ ՀԱՅ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐՈՒՆ

(Տպավորություններ)

Վեհափառ Հայրապետի հրամանով եմեկ-նինք Բաքու, նախագահելու համար դատական հանդիսությանց, որոնք այնտեղ կկատարվին հին տոմարով։ Ադրբեջանի հայոց առաջնորդական փոխանորդ Տ. Տիրայր վարդապետ Մալտիկյանը, նույն նպատակով, մեկնած էր Ռումինիա և Բուլղարիա։

Ապրիլ 9, Ավագ շաբաթի (ըստ հին տոմարի)։ Երևանի օդանավակայանն ենք արդեն Վեհամոր և բարեշնորհ Սարգիս սարկավագ Բեհբուդյանի ու Հակոբ սարկավագ Պողոսպալյանի հետ միասին։ Միջօրեն գեղեցիկ է։ Արևը իր բարի ճառագայթները առատորեն սփռած է Արարատյան դաշտին վրա։ Ամեն կողմ ծյած և ծաղկած են դեղձենիներն ու ծիրանիները։ Գեղեցիկ է իրապես Արարատյան դաշտը նոր գարունքի այս օրերուն։ Ժամը 3.30-ն է։ Մեր ինքնաթիռը թռիչք կառնե թափով ու կբարձրանա Երևանի վրա։ Քաղա՞ք, թե երկրաչափական գիծերու ներդաշնակություն մը, որուն մեջեն կանցնի Հրազդանը իր օձապտույտ ընթացքով ու կերթա կտրաածվի մեր դաշտերուն վրա։ Կբարձրանանք վե՞ր, վե՞ր, տմպերեն ալ վեր։ Ահա կապուտակ Սևանը։ Սավառնակը կճախրե «կապույտին վերև ու կապույտին ներքև»։ Ահա Գեղամա սարերը, ձյունածածկ ու գեղեցիկ։ Ի՜նչ հակապատկեր Արարատյան դաշտին։ Մտածումներս։ Անվերջ շարան մը խորհրդածությանց։ Կշարունակենք մեր ճամբան։ Քիչ հետո Ադրբեջանի հողերուն վրա ենք արդեն, հարթ ու տափարակ, ամենքն ալ մշակված ու բերրի։ Հեռվեն կերևի Կասպյան ծովը, որուն եզերքն ի վեր կոտրվինք դեպի նավթի քաղաքը՝ Բաքու։

Դիմավորության եկած են առաջնորդական փոխանորդի տեղակալ Տ. Վահան ավագ քահանա Գրիգորյանը, Տ. Գրիգոր քահանան, Թեմական խորհրդի անդամները և

իրենց տիկիններով, որոնք ծաղկեփնջերով կողջունեն Վեհամայրը։

Բարի գալստյան պաշտոնական խոսքերեն վերջ, մեր ավտոմոբիլներով կուղղվինք դեպի Բաքու, որ 45 կիլոմետր հեռու է օդանավակայանեն։ Կես ժամ վերջ քաղաքամեջն ենք արդեն։ Մաքուր, կոկիկ, շքեղ քաղաք մըն է Բաքուն, իր բարձր և հրաշալի շենքերովը և լայն, ծառազարդ ճանապարհներովը։ Քաղաքին կեդրոնն է Հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, լավագույն պողոտաներու խաչմերուկին վրա, իր հայկական ոճով և կաթողիկեներով։ Կենչեն եկեղեցիին բոլոր զանդակները անդադար։ Դեցած ենք եկեղեցիի դռան առջև, հրապարակին վրա։ Հսկայական բազմություն մը հավատացյալներու, գրեթե ամեն ազգի։ Ճանապա՞րհ դեպի եկեղեցին. այդ շատ դժվար է, բազմության պատճառով։ Զգեստավորված, «Հրաշափառ Աստուած» շարականի երգակցությամբ կմտնենք եկեղեցի։ Եկեղեցին ներսեն բավական կոկիկ է, չորս սյուներ վեր կբռնեն իր կաթողիկեն։ «Հրաշափառ»-ի երգեցողությունեն վերջ, Տ. Վահան ավագ քահանան, թարգմանը հանդիսանալով քահանայական դասուն և հավատացյալ ժողովուրդին, բարի գալստյան խոսքերուն մեջ կբսե. «Սրբազան հայր, մեկ շաբաթե ի վեր Բաքվի հավատացյալ ժողովուրդը սրտատրոփ սպասում էր Ձեր գալստյան, որպեսզի զատիկական այս տոները կատարվեն ավելի հանդամանորեն և շքեղությամբ։ Մեր հավատացյալ հոտը ծարավն ունի բարձրաստիճան հոգևորականների մխիթարական խոսքերին և Բանին կենաց քարոզության, և մենք վստահ ենք, թե Դուք կլիացնեք մեզ ձեր հոգեշունչ քարոզներով՝ այս սուրբ օրերին»։ Կդառնամ ժողովուրդին։ Հոգիս կհրճվի ի տես այս ծովածավալ ու լուռ բազմության, որ աչք և ականջ դարձած, կսպասե մեր խոսքին։ Ու կխոսինք. «Կուգանք Ս. Էջմիածնեն, Նորին Ս. Օծության հրամանով և կարգադրությամբ։ Ձեզի՝ դասք քահանայից և հավատացյալ ժողովուրդ, կբերենք մեր սիրեցյալ Հայրապետի՝ Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի հայրապետական ողջույններն ու մաղթանքները, մաղթանքները Անոր, որ ասկե ամիսներ առաջ եղավ ձեր մեջ, տեսաք զինքը և մխիթարվեցաք Իր հոգեշունչ քարոզներով։ Ձեզի կբերենք Միածնաէջ Ս. Տաճարի օրհնությունները, որպեսզի դուք մնաք միշտ Անոր հավատարիմ զավակները. Էջմիածինը դարեր շարունակ պահած է ձեզ իր թևերուն տակ, ինչպես հավը՝ իր ձագերը։ Ձեզի կբերենք նաև քրիստոսակոխ Ս. Քաղաքի՝ Երուսաղեմի օրհնությունները. ուր այս խորհրդավոր օրերուն՝ նույն կյանքն ու ներշնչումն է նաև այնտեղի հավատացյալ ժողովուրդի հոգիներուն մեջ։ Ապրեցեք խաղաղ ու մնացեք հաստատուն ձեր Հայրենիքի սուրբ հավատքին մեջ, հավատարիմ այս երկրին ու ժողովուրդին, և թող խաղաղության Իշխանը թագավորե ձեր հոգիներուն մեջ. ամեն»։

Կսկսինք երեկոյան ժամերգությունը։ Աղոթավոր հոգիներուն հայացքները ուղղված են Աստուծո սուրբ խորանին, լուռ և երկյուղած։ Հավարտ ժամերգության, հավատացյալ ժողովուրդը կդիմե աջահամբույրի, և կմտերմանանք իրարու հետ։ Ժամը 8.30-ն է։ Կնստինք ինքնաշարժները և կմեկնինք դեպի «Ինտուրիստ» պանդոկը, ծովահայաց դիրքով և շքեղ կառույցով, բազմած բլրալանջին։ Կառնենք մեր ընթրիքը Տ. Վահան ավագ քահանա հոր և տեղական թեմական խորհրդի անդամներուն հետ, ապա կառանձնանանք մեզ հատկացված սենյակները հանգստանալու։ Ամեն հարմարություններով օժտված է «Ինտուրիստ» պանդոկը։ Պատուհանեն կդիտեմ Բաքուն, գիշերային իր շքեղության մեջ։ Լույսերու քաղաք, ծովն ու ցամաքը իրարու խառնված, ու մինչև արշալույս կատարված երթևեկությունները տեսական կենդանության ապացույցն են այս բազմամարդ քաղաքին։

Ավագ հինգշաբթի։ Ամպամած, բայց ղվարթ առավոտ մը։ Քաղաքը նորեն եռուզեռի մեջ։ Ժամը 12-ին կերթանք եկեղեցի։ Հավատացյալները արդեն լեցուցած են դայն, ու դավիթ սպասողներուն թիվը՝ ոչ պակաս ներսիններին։ Կսկսի Ավագ հինգշաբթի ցերեկային սուրբ պատարագը։ Փոքրիկ երգչախումբ մը ներդաշնակ կերգե նկմալյան պատարագը, ու հավատացյալները երկյուղած հոգիներով վերացած են սուրբ խորհուրդին հետ։ Բեմեն կկարդանք Ս. Բարսեղի սքանչելի խրատական աղոթքը՝ «Լուարուք ինձ, որկեակք իմ։ Լո՞ւ, ամենք ոք կհետևի ընթերցվածին, և ամեն կողմեն կլսվին «Միդա՞յ Քեզ, Տէ՞ր մրմունջներ։ Պատարագը կմոտենա իր վերջավորության, և սարկավագը կձայնե՝ «Երկիւղիւ և հաւատով յառաջ մատիք և սրբութեամբ հաղորդեցարուք»։ Ս. Սեղանին կմոտենան հարյուրավոր խոստովանող ու հավատացյալ հոգիներ, այր թե կին, մանչեր և աղջիկներ։ Հավատացյալները, հաղորդված Տիրոջ մարմնով, մխիթարված դուրս կելլեն կամաց-կամաց։ Շատ է թիվը եկեղեցիին մեջ մնացողներուն. չէ՞ որ քիչ վերջը «Ոտնալվա»-ն պիտի սկսի. ծարավը ունին այդ արարողության՝ լվացումը հոգիներու և մարմնի։

Երեկոյան ժամը 6-ին դարձյալ կհնչեն եկեղեցիի զանգակները, և Աստուծո տունը արդեն լեցված է ժողովուրդով։ Խորանին վրա նոր Դասք քահանայից և դպրաց գրված են իրենց տեղերը։ Ու նախ՝ «Աղբաձայն «Ողորմեա ինձ, Աստուածն» սաղմոսը։ Ավետարան, Գիրք և տաղեր իրարու կհաջորդեն, կօրհնվին յուղն ու ջուրը, և դպիրները կսկսին «Վերաձգող երկնից» և «Այսօր անճառ» շարականները։ Կլվանք ոտքերը քահանաներու և դպիրներու, ու նորեն զգեստավորված կդառնանք ժողովուրդին, քարոզով մը բացատրելու համար արարողության նշանակությունը։ Գեղեցիկ է սովորությունը Հայաստանի և Կովկասի հայ ժողովուրդի «Ոտնալուա»-յին. հարյուրավոր թղթիկներու մեջ կանխավ ծրարված կարագ յուղը կօրհնվի և հավարա արարողությանց կբաժնվի ժողովուրդին։

Գիշերվան ժամը 9-ն է։ Նորեն կհնչե հայ եկեղեցիի զանգակին ղողանջը։ «Խավարման գիշեր» ասա, ինչպես կբսե ժողովուրդը «Լացի գիշեր»։ Դարձյալ լիքն է եկեղեցին ժողովուրդով, գավիթը և ամեն կողմ հավասարապես։ Բոլոր ավետարաններու ընթերցումները և տխուր շարականներու ծանր երգեցողությունները կառինքնին հոգիները հավատացյալ հարուն, ու մեկ շուն, դարձած, կհնաբին արարողությանց։ Հազվագյուտ է տեսնել եկեղեցիներ, ուր այսքան թիվով աղոթավորներ երկար ժամերով կենան այսպես լուռ և երկյուղած։ Կմոտենա խավարման պահը։ Խոր լռության և խորհրդավորության մեջ, կսկսինք «Փառք ի բարձունս» հրեշտակներուն օրհներգը, որ բոլոր բերանները մեղմորեն կձայնակցին։ Լուռ խորհրդավորության մեջ մեղմանուշ կլսվի Հակոբ սարկավագ Պոզապալյանի ձայնը՝ «Ո՞ւր ես, Մայր իմ, քաղցր և անուշ։ Հիսուսի աղերսող ձայնն է, ուղղված Իր Մորը, տվայտանքի այդ գիշերվան մեջ։ Կբարձրանանք բեմը ու կխոսինք քարոզը՝ «Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս» բնաբանով։ Կանդրադառնանք Քրիստոսի Գեթսեմանիի, խաչի ճանապարհի և Գողգոթայի կյանքին, և հուզումով կապրինք այդ պահը մանավանդ, երբ կլսեինք հավատացյալ ժողովուրդի լացը, խորհրդավոր այդ գիշերվան մեջ։ Այն ժամանակ միայն փաստացիորեն հասկացանք, թե ինչո՞ւ համար այդ գիշերվան «Լացի գիշեր» ըսած է հայ ժողովուրդը։ Պահեր կան մարդկային ամբողջ կյանքին մեջ, որ իրապես ապրված ամբողջ կյանք մը կարժեն. իսկ երբեմն ապրված ամբողջ կյանք մը իրական պահ մը իսկ չատեղծեր մեջ մեջ։ Ու այդ պահը ինձի համար ապրված լրիվ կյանք մը կարժեր։ Գիշերային ժամերգության վերջավորության, Տ. Վահան ավագ քահանան, յոթանասունհինգամյա այդ կորովի և հավատավոր եկեղեցականը, մեկ ու կես ՀԱՄ շարունակ, հուզումով կարդաց ու երգեց այդ գիշերվան «Կոտակ»-ը, երբ. նույն ոգին ու լացը ավելիով պոռթկացին հավատավոր սրտերեն դուրս։ Գիշերվան ժամը 2-ը անցած էր, երբ ժողովուրդը դուրս կելլեր Աստուծո տունեն։

Ավագ ուրբաթ։ Երկինքն ալ տխուր՝ օրվան խորհուրդին պես, և թեթև անձրևը երկնքի ալ լացը կհիշեցներ մեզ։ «Կարգ խաչելութեան» արարողութենեն վերջ, կանխավ լրացած կարեգարդությունի մը համաձայն, Տ. Վահան ավագ քահանայի և երկու սարկավագներուն հետ, պաշտոնական երթով մը կմեկնինք դեպի Կառավարական շենքը, պաշտոնական այցելություն մը տալու համար Կրոնական գործերու խորհրդի լիազոր պր. Մամեդովին։ Սիրով կընդունի մեզ, և իր սենյանին շուրջն ենք արդեն։ Պր. Մամեդովին կհաղորդենք Վեհափառ Հայրապետի արտագին ողջույնները և բարեմաղթությունները Սովետական Ադրբեջան երկրի և Հայաստանի եղբայր ժողովուրդին, անոնց բարգավաճման և առաջդիմության համար։ Պր. Մամեդովը զգացումով կհայտներ շնորհակալությունները Նորին Ս. Օծության այս շնորհաբեր այցելության համար իրենց երկիրը. «որուն հիշատակը դեռ շատ թարմ է,— ըսավ,— իմ և ժողովուրդիս սրտերուն մեջ։ «Ճարեք, Սիրազան, ավելցուցեք պր. Մամեդովը,— մեր խոր հարգանքները Նորին Ս. Օծության Վազգեն Ա Կաթողիկոսին, հայ ժողովուրդին և անոր ղեկավարներուն, և թող մեր եղբայրական երկիրները, ձեռք-ձեռքի տված, կերտեն ինչ որ գեղեցիկ է և ինչ որ տևական է։ Ապա, մտերմական խոսքերե վերջ, հրաժեշտ կառնենք իր դրասենյակեն։ Կմեկնինք նույն շքախմբով դպի Անդրանիկասի մուսուլմաններու Հոգևոր վարչության նախագահ Շեյխ-ուլ-Իսլամի բնակարանը։ Ծոմապահության առնին առիթով, առանձին կգտնենք զինքը իր գրասենյակին առաջ։ Ալեհեր պատկառելի ծերունի մը, որ սակայն չէ կորսնցուցած ոչ իր թարմությունը և ոչ ալ իր զվարթախոս բնավորությունը։ Կհաղորդենք Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները և հայ հոգևորական դասու սրտի լավագույն ցանկությունները իրեն և ամբողջ մուսուլման ժողովուրդին։ Շեյխ-ուլ-Իսլամը իր կարգին շատ ջերմ խոսքերով դրվատեց Վեհափառ Հայրապետի կատարած գործը, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս։ «Երիտասարդ է Ան,— ըսավ,— և մանավանդ շատ սիրված Իր ժողովուրդեն և առհասարակ ա-

մենքեն։ Կփափագեի, որ Անոր ամբողջ կյանքը մնար միշտ երիտասարդ, հաստատելու համար այս տեսակ երիտասարդ հոգևորականներ Հայ Եկեղեցիին համար։ Այս խոսքերը արտասանեց հուզումով, ասելով մեր երիտասարդ սարկավագներու աչքերուն մեջ։ Մեծ հետաքրքրությամբ զանազան հարցեր ուղղեց մեր Ամենարանի մասին։ Հրաժշտ կանենք իրմե, ու կերթանք եկեղեցի, կատարելու համար Խաղման կարգը։ Քրիստոսի գերեզմանը խորհրդանշող անպատուսի գերեզմանը խորհրդանշող անպատուսի սեղան մը հարդարված էր, որուն շուրջը ծնկաչոք կատարեցինք կարգը։ Ապա «Պարգևատուն» շարականի ծանր երգեցողությամբ, թափորով մեկ անգամ միայն շրջան կատարեցինք եկեղեցիին մեջ, ի գոհացման հավատացյալ հոտին։

Ավագ շաբաթ։ Տ. Վահան ավագ քահանայի և Սարգիս սարկավագի հետ կմեկնինք՝ այցելելու քաղաքի ռուս քույր եկեղեցիները։ Անոնցմե միայն երկուքը կրցանք այցելել։ Եկեղեցիները լի են հավատացյալներու բազմությամբ։ Քրիստոսի գերեզմանին շուրջը՝ տնական աղոթողներ։ Ռուս քահանաները իրենց հոգևոր պարտականությունները կկատարեն ժրաջանորեն. հարյուրավոր հոգեհանգիստներ, հացերու օրհնություններ։ Եկեղեցիներուն մեջ, գավիթները, փողոցներու մայթերուն վրա, ամեն տեղ հավատացյալներու անհկարագրելի բազմություն։ Չէ՞ որ ծանոթ է ռուս մեծ ժողովուրդի բարեպաշտությունը։ Երկու քույր եկեղեցիներուն ալ կհաղորդեմ Վեհափառ Հայրապետի ողջույնները և Ս. Զատկի շնորհավորությունները։ Կընդունինք փոխադարձ ողջույններ ավելի պերճախոս բառերով։ Դեռ ավելին։ Մեր անունը հիշելով իրենց կրոնական մաղթանքներուն մեջ, աղոթքներ կուղղեն առ Աստված։ Խորապես զգածված այս հոգևոր եղբայրական արտահայտություններեն, ողջագուրմամբ հրաժեշտ կառնենք իրենցմե ու կշրջագայինք քաղաքի տեսարժան վայրերը։

Երեկոյան ժամը 5-ն է։ Հնչեցին դարձյալ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիի զանգերը։ Գունդ-գունդ բազմություն մը ամեն ազգերե, դեպի հայոց եկեղեցին։ «Թաքախման» Երեկոյան սուրբ պատարագն է։ Այսպես կկոչեն «Ճրագալույց»-ի երեկոյան պատարագը Հայաստանի և այս կողմերու հայերը։ Ո՞վ խիղճ ունի բացակայելու այս պատարագեն։ Կսկսինք ժամերգությունը և կից պատարագը Ճրագալույցի։ Անսովոր բազմություն մը հավատացյալներու խռնված է ամեն կողմ։ Խուտովանողներու շարանները ծայր և վերջ չունին։ Կարելի՞ է այսոր չհաղորդվիլ։ Հապա ինչպե՞ս ճաշակել Երեկոյան սեղանը տուներեն ներս։ Ամեն ոք զիրար կողջունեն, մեզ կողջունեն և կհայտնեն, թե այս եկեղեցին այսպիսի բազմություն չէր տեսեր, նույնիսկ տոնական օրերուն։ «Օրհնյալ լինի Ձեր այցելությունը և թող օրհնվի հավատացյալ հայ ժողովուրդը»։ Շարունակ կկրկնեն քահանաները։ Կավարտի Ճրագալույցի արարողությունը։ «Լուսաւորեա, Երուսաղէմ, զի հասեալ է լոյս քո։ Մարգարեական գրքերը, Դանիելը, «Օրհնեցէք, գովեցէք» վերջ կգտնեն, ու կամաց-կամաց կբացվի ավագ խորանին կարմիր վարագույրը, օրվան հանդիսավորությամբը։ Պատարագիչը մենք ենք։ «Քրիստոս յարեա՛ ի մեռելոց»,— կլսվի ամեն բերաններե։ Ու կշարունակվի աստվածային խորհուրդը, ի գոհացման հավատավոր հոգիներու։

«Հայր մեր»-են առաջ կդառնանք ժողովուրդին՝ ավետելու Քրիստոսի հարությունը, «Ջէ աստ, այլ յարեաւ ընաբանով։ Ամեն հավատացյալ բացած է իր հոգին Քրիստոսի Ավետարանի մաքուր շուրերուն, որ կբաշխվի իրենց Աստուծո Ս. Սեղանեն։ Կնայիմ ամենուն աչքերուն, կզգամ, թե ծարավը ունին հոգեկան մխիթարության, և կգանան ապրիլ պահը Ս. Խորհուրդին։ Ս. Հաղորդության պահն է, կարդով իրարու ետևե հարյուրավորներ կուգան հաղորդվիլ Քրիստոսի մարմնով և արյամբ։ Կվերջանա հարության նախատոնակն ալ, ու ժողովուրդը քահանա հայրերուն կդիմե, որպեսզի իրենց տունները երթան ու օրհնեն կանխավ զարդարված սեղանը, Աստուծո բարիքներովը լեցուն։ Գեղեցիկ սովորություն մը միայն, որ այս կողմերը հանդիպեցա. մինչև որ չօրհնվի «Թաքախման» Երեկոյան սեղանը հոգևորականի մը կողմե, ընթրիքը կարծես չի ծառայեր իր նպատակին։ Քահանաներ կցրվին հավատացյալներու տուները, օրհնելու հարյուրավոր սեղաններ։

Զատկի կիրակի։ Տոներուն ամենեն մեծը։ Ժողովուրդը, ավելի մաքուր ու կոկիկ հագված, նորեն լեցված է եկեղեցին։ Կսկսինք սուրբ պատարագը ժամը 12-ին։ Հանդիսավոր օրերու ամենեն նվիրականը։ Ամեն ոք իրար կողջունեն «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» ըսելով։ Պատարագի քարոզին մեջ Վեհափառ Հայրապետի կողմե կշնորհավորենք Թաքվի հայ ժողովուրդի Ս. Զատիկը և նույն պահուն կկարդացվի նաև Նորին Ս. Օծության զատկական շնորհավորական հեռագիրը, տղղված հոգևորական դասուն, Թեմական խորհրդի անդամներուն և հավատացյալ հոտին։ «Աստված կյանք տա Հայրապետին»,— կկրկնեն բոլոր բերանները օրհնալիր։ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»,

մահուամբ վամահ կոխեաց, և յարութեամբն իւրով մեզ ազատս պարգևեաց»։ Այս բնաբանով վեր կառնենք մեր ժողովուրդի ընդհանուր հարութիւնը իր բոլոր մարզերուն մէջ։ Պատարագեն վերջ, տեղվոյն ազգային ներեն փաստաբան Վաղարշակ Հակոբյանը իր բնակարանը կհրավիրեն Վեհամայրը և մեզ՝ զատկական ճաշը միասին ընելու։ Պր. Հակոբյանն ու իր աղնիվ տիկինը իրական եկեղեցասերներ են, վառ ազգային մաքուր զգացումներով։ Ճաշասեղանին շուրջն է նաև հայտնի նկարչուհի օրիորդ Թամարա Սաթյանը, որ Պետական համալսարանին մէջ կդասախոսեն իր արվեստին հետաղ ուսուցիչներու և աշակերտներու։ Օրիորդ Թամարան այժմ իր ձեռքին տակ ունի Վեհափառ Հայրապետի մեծադիր նկարը, որուն վրա կաշխատի։ Նկարած է Հիսուսի հարութիւնը, որ ներկած է ալա ամսագրի էջերուն մէջ, նորոգած է խաչվառներ և պիտի ձեռնարկի նկարել Վարդան Մամիկոնյանի նկարը։ Ժամը 10-ին հրաժեշտ կառնենք պր. Հակոբյանեն ու կվերադառնանք պանդոկ։

Երկուշաբթի առավոտ՝ «Հիշատակ մեռելոց»։ Եկեղեցիին մէջ կատարված ընդհանուր Հոգեհանդիստեն վերջ, ժամը 10-ին ինքնաշարժ մը առնելով, կայցելենք Բաքվի ազգային գերեզմանատունը, որ քաղաքեն դուրս կգտնվի։ Շատ ընդարձակ է գերեզմանատունը և բավական կանոնավոր։ Կշրջագայինք գերեզմանատան մէջ ու կարատասանենք ննջեցյալներուն համար ընդհանուր «Հոգւոց» մը։ Ժամը 12-են վերջ գերեզմանատունը կլեցվի իրենց սիրելիներու շիրիմներուն այցելություն տվող հազարավոր հայերով։ Քահանա հայրերը կօրհնեն գերեզմանները։ Մեզի կպատմեն, թե մայիս 2-ին տասնյակ հազարներով կայցելեն գերեզմանատունը և իրական «Ֆեռեռոց հիշատակ»-ը այդ օրը կկատարվի։

Երեքշաբթի առավոտ, ժամը 7-ն է։ Մենք հրաժեշտ կառնենք Բաքվեն և մեր ինքնաշարժը կսուրա դեպի օդանավակայանը։ Կանխավ այնտեղ եկած է առաջնորդական փոխանորդի տեղակալը՝ Տ. Վահան ավագ քահանա Գրիգորյանը՝ մեզի ողջերթի։ Ժամը 8.30-ն է, ու մեր ուղղաթիռակը արդեն օդ է բարձրացած, և Բաքուն կամաց-կամաց կսկսի անհայտանալ մեր տեսութենեն։ Կկտրենք Ադրբեջանի բերրի դաշտերը նորեն, և վերջապես մեր սիրելի Գեղամա լեռներու և Լճնալ Սևանի վրա ենք։ Այս մեկ շաբաթվան ընթացքին կրկին ձյուներ է և Սևանի շրջակայքի լեռները բավական տարածության վրա ամբողջ սպիտակած են։ Կիջնենք Արարատյան դաշտը, նույն կանաչ և գեղեցիկ տեսարանը և արևաշող Հայաստանը։ Երևանի օդանավակայանը դիմավորության եկած է հոգեշնորհ Հուսիկ հայր սուրբը։ Կուղղվինք դեպի էջմիածին։ Կներկայանանք Վեհափառ Հայրապետին, կառնենք իր օրհնությունը և կուտանք մեր զեկուցումը։

Բաքվի մեր այս մեկ շաբաթվան այցելությունը խոր տպավորություն թողուցած է մեր հոգիին ներս։ Հայ հավատացյալ ժողովուրդը, պահելով սերը իր Մայրենի Եկեղեցիին հանդեպ, ամուր կառչած է նաև հնավանդ այն ավանդությանց, որոնք կարծես իրենց հոգիներուն խորը հավատքի անբաժան մասը կազմած են։



ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԱՐԱՑ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Վեհափառ Հայրապետի կալվածքությամբ, ապրիլի 2-ին, Ավագ հինգշաբթի օրը, Մայր Աթոռից Ստեփանավան մեկնեցին դերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոսը, շնորհուն-ակ Խորեն սարկավագ Պալյանը և Ճեմարանի Դ դասարանի ուսանող Անաստաս Մովսեսյանը, կատարելու համար Ստեփանավանի նորարաց եկեղեցու ալվացման և օծման արարողությունները, ինչպես նաև Ջատկական տոները անցկացնելու համար այնտեղ։

Վաղ առավոտյան աղոթքից հետո վանքի ավտոմեքենան ճանապարհ ընկավ դեպի Ստեփանավան։ Ժամը 10-ին հասանք Լենինական, որտեղ մեր խմբին միացան Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը և արժանապատիվ Տ. Նորայր քահանա Սարգսյանը։ Մեր ավտոմեքենան մեծ արագությամբ սլանում էր դեպի Ստեփանավան տանող խճուղին։ Ամենուրեք անտառներ։ Սարալանջերը սկսել են կանաչազարդվել նորաբույս զմրուխտ խոտերով, ծիծեռնակը ավետում է նոր գարնան վերադարձը։

Մշուշ է։ Օդը հագեցած է գարնանային ախորժելի բուրմունքով։ Ահա երևում է հեռվից Ստեփանավանը, Հայաստանի գեղեցիկ բաղաքներից մեկը։ Ժամը 5-ին հասնում ենք Ստեփանավան։ Այժմ այստեղ կա ավելի քան 14 000 բնակչություն։ Ստեփանավանում կան միջնակարգ դպրոցներ, հայկական և ռուսական երկու տեխնիկում, քաղաքի գեղեցիկ շենք՝ կառուցված վարդագույն տուֆից, երկհարկանի բաղնիք, հյուրանոց, ինչպես նաև այգիներ, պուրակներ։ Քաղաքի փողոցները ասֆալտապատված են և պահվում են մաքուր վիճակում։ Անցնելով ավելի քան 250 կմ. ճանապարհ, մեր ավտոմեքենան կանգ առավ Ստեփանավանի Ս. Սարգիս եկեղեցու առաջ, որտեղ հավատացյալների մի սովոր բազմություն, իրենց ծխատեր քահանա արժանապատիվ Տ. Գրիգորի հետ շատ ջերմ կերպով դիմավորեցին մեզ։

Դժվար է նկարագրել այն խանդավառ ու սրտաբաց ընդունելությունը, որ ցույց տվեց մեզ Ստեփանավանի բարեպաշտ և հյուրընկալ ժողովուրդը՝ մեր ժամանման առաջին իսկ րոպեից։ Երեկոյան ժամը 6-ին հավատացյալների հոծ բազմության ներկայությամբ կատարվեց եկեղեցու նավակատիքը։ Արարողության վերջում սրբազան հայրը խոսք առնելով հաղորդեց Վեհափառ Հայրապետի սրտագին օրհնություններն ու ողջույնը, խոսեց Մայր Աթոռում սկիզբ առած հոգեկան-մշակութային վերազարթոնքի և վանական ու շինարարական ձեռնարկների մասին և ապա ծանրացավ Հայ Եկեղեցու կատարած մեծ դերի վրա՝ հայ ժողովրդի ազգապահպանման բնագավառում։

Հաջորդ օրը, Ավագ հինգշաբթի, չնայած աշխատանքային օր լինելու հանգամանքին, առավոտ կանուխ եկեղեցի էր եկել հավատացյալների մի մեծ բազմություն, ներկա լինելու իրենց եկեղեցու վերաբացման հանդեսին։

Ահա ցնծագին հնչում է նորաբաց եկեղեցու կամարների ներքև «Այսօր Աստուածածին» զուարճանաց հոգեզմայլ շարականը, կատարվում է եկեղեցու լվացման կարգը, նախ ջրով, ապա գինիով։

Ապա Վարդան սրբազանը օծում է նորահատատ վեմ քարը, որից հետո նույն հանդիսավորությամբ շարունակվում է արարողությունը։ Խանդավառությամբ երգում ենք «Ի վերայ վիմի հաւատոյ», «Սեղան քո», Տէր», «Ուրախ լեր, Ս. Եկեղեցիս» եկեղեցու օծման նվիրված շարականները։ Վերաբացված և նորոգ եկեղեցում առաջին պատարագը մատուցում է Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետը։ Եկեղեցին լցվում է հավատացյալների խուռն բազմությամբ։ Ներսում տեղ չկա։ Շատերը տեղ են գրավել բակում և երկյուղածությամբ լսում են սուրբ պատարագը։ Պատարագիչ հայր սուրբը «Հայր մերս»-ից առաջ խոսում է մի հոգեկից քարող Ս. Հաղորդության նշանակության

վրա, ապա վեր է հանում Հայաստանյայց Եկեղեցու և մանավանդ Ս. Էջմիածնի դերը հայ ժողովրդի հոգեկան, բարոյական և իմացական դաստիարակության բնագավառում։

Ապա հայր սուրբը, որպես առաջնորդական տեղապահ Շիրակի թեմի, շնորհավորում է Ստեփանավանի հայ հավատացյալներին եկեղեցու վերաբացման ուրախ առթիվ և սրտաբուխ բարեմաղթություններ է անում Ս. Էջմիածնի անսասանության և բարգավաճման մասին և երկար կյանք ու արիշատություն մաղթում նրա տիրուն և գործունյա Գահակալին, ապա հայ ժողովրդին և Հայրենիքին։

Պատարագից հետո սրբազանը, առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետի հետ միասին, պաշտոնական այցելություն տվեց Ստեփանավանի երիտասարդ բայց գործունյա և բոլորի կողմից սիրված ու հարգված գործկոմի նախագահ պր. Ժ. Մովսիսյանին, որը շերմորեն ընդունեց հյուրերին։ Սիրալիր տեսակցության ընթացքում խոսակցության նյութ եղավ նաև նորաբաց եկեղեցու արտաքին մասի վերանորոգման հարցը։

Ստեփանավանի եկեղեցին կառուցվել է 1780-ական թվականներին, նախկին մատուռի վրա, որը գոյություն է ունեցել դեռևս 18-րդ դարում։ Այդ մասին է վկայում եկեղեցու արևելյան պատի արտաքին մասում տեղավորված խաչքարի վրա եղած արձանագրությունը, որտեղ հիշվում է 1217 թվականը որպես մատուռի կառուցման թվական։

Եկեղեցու չորս կողմի պատերի մեջ, ներսից ու դրսից, տեղավորված են վերոհիշյալ մատուռի մաս կազմող ութը գեղեցիկ խաչքարեր։

Եկեղեցու ներքին մասը վերջերս նորոգվել է, իսկ արտաքին մասի բարեկարգման աշխատանքները շարունակվում են։ Եկեղեցու վերանորոգման ընդհանուր ծախսը, որը կազմում է մոտավորապես 16 000 ռուբլի, հոգում է Մայր Աթոռը։

Ավագ հինգշաբթի երեկոյան մեծ հանդիսավորությամբ և հավատացյալների հոծ բազմության ներկայությամբ կատարվեց տոնավաճի ավանդական սուրբ արարողությունը, հանդիսագրությամբ Վարդան սրբազանի։ Գիշերը կատարվեց խավարման սրբազան արարողությունը, որը տևեց մինչև ուշ ժամանակ։

Ավագ ուրբաթ օրը կատարվեց Քրիստոսի Թաղման կարգը, իսկ Ավագ շաբաթ օրը Ճրագալույցի հանդիսավոր սուրբ պատարագը մատուցեց Ստեփանավանի ծխատեր քահանա արժանապատիվ Տ. Գրիգորը։ Սուրբ պատարագին տոնական ու ցնցագին հնչեց «Գովեա, երուսաղէմ, զՏէր» ճաշու շարականը։ «Հայր մեր»-ից առաջ Քրիստոսի հրաշափառ հարության մասին իր քարոզը կարդաց խորեն սարկավագ Պալյանը, «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց» բնաբանով։

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց Զատիկի նախատոնակ, որից հետո բազմաթիվ հավատացյալներ հաղորդվեցին։

Ապրիլ 6, կիրակի, Զատիկ։ Հավատացյալների մի խումբ բազմության առաջնորդությամբ եկել և տեղ էր գրավել եկեղեցում և բակում։ Ս. Զատիկվա տոնի սուրբ օրվա պատարագիչն էր գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոսը։ Սրբազանը խոսեց իր դեկտիկ քարոզներից մեկը, ծանրանալով Քրիստոսի հարության և հայ ժողովրդի վերածնության վրա և հորդորեց բոլոր հավատացյալներին սիրել իրենց Եկեղեցին, Հայրենի Հողը, հայ լեզուն և ազգային մշակույթը։ Պատարագից հետո եկեղեցու բակում տեղի ունեցավ մատաղօրհնեք։ Ստեփանավանի ավանդապահ ժողովուրդը, իրենց եկեղեցու վերաբացման առթիվ և Զատիկի տոնի կապակցությամբ, մորթել էր մի պարարտ երինջ և որպես մատաղ լուժանել։

Նույն օրը 6-ին տեղի ունեցավ եկեղեցական խորհրդի ընտրություն։ Խորհրդի անդամներ ընտրվեցին ութ հոգի, հինգը որպես եկեղեցական խորհրդի մշտական անդամներ, երեքը՝ վերատուգիչ հանձնաժողովի անդամներ։

Նոյեմբերի, «Ավետումն Աստուածածնի» և «Լիշատակ մեռելոց» Մատուցվեց սուրբ պատարագ և կատարվեց հոգեհանգստյան կարգ «վասն Համօրէն ննջեցելոց»։

Երեքշաբթի օրը մենք հրաժեշտ տվինք Ստեփանավանի հյուրընկալ և հավատացյալ ժողովրդին և մաղթեցինք Մայր Աթոռ։

ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

1957 թվականի դեկտեմբերի 7—8-ին, Ռեյսինի հայոց Ս. Մեսրոպ եկեղեցում գումարվել է Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի Թեմական պատգամավորական ժողովը, նախագահությամբ թեմական առաջնորդ դերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանի, ատենապետությամբ նախորդ տարվա Թեմական պատգամավորական ժողովի ատենապետ պր. Տիգրան Հ. Պոյաճյանի և ատենադպրությամբ արժանապատիվ Տ. Շահե քահանա Ալթունյանի։

Թեմական պատգամավորական ժողովը բացվում է առաջնորդ սրբազան հոր աղոթքով։ Ժողովին մասնակցում է 77 պատգամավոր։

Ժողովի գումարումից առաջ վերստուգիչ հանձնաժողովի կողմից կատարվում է պատգամավորների և անձնափոխանորդների օրինավորության ստուգումը։ Ապա գաղտնի քվեարկությամբ ընտրվում է պատգամավորական ժողովի մնայուն դիվան, հետևյալ կազմով. պր. Տիգրան Հ. Պոյաճյան՝ առաջին ատենապետ, պր. Պետրոս Նորհան՝ երկրորդ ատենապետ, Տ. Շահե քահանա Ալթունյան՝ առաջին ատենադպիր և պր. Պողոս Սվաճյան՝ երկրորդ ատենադպիր։

Նախագահ սրբազան հայրը շնորհավորեց նոր դիվանի կազմը։ Ապա պր. Տիգրան Հ. Պոյաճյանը ժողովին շնորհակալություն հայտնելուց հետո իրենց հանդեպ ցուցաբերված բարձր վստահության համար, ասաց. «Ժողովին կողմէ դիվանին տրված վստահության քվեն կնկատեմ ամեն գնահատության արժանի։ Այս Թեմական պատգամավորական ժողովը կգումարվի խիստ ճակատագրական շրջանի մը մեջ։ Կարծիքներու տարբերություն կրնա գոյություն ունենալ, բայց անայլայլման կերպով երկվություն պետք չէ բլլա, երբ կխոսինք ու կգործենք մեր Ս. Եկեղեցվո կյանքի հետ աղերս ունեցող խնդիրներու մասին։ Միայն այդպիսով ցույց պիտի տանք, թե Հայաստանյայց Եկեղեցին մի է և անբաժան։ Ամերիկայի Թեմական պատգամավորական ժողովը կգումարվի այսօր օրինավոր կերպով, և այդ առթիվ թեմս անգամ մը ևս ցույց կուտա իր հավատարմությունն ու սերը Ս. Էջմիածնի Մայր Աթոռին և անոր Գահակալին՝ Վեհափառ Հայրապետին հանդեպ։

Պատգամավորական ժողովի երկրորդ նիստում, 1957 թվականի դեկտեմբերի 7-ին, ընտրվում են հարցեր դասավորող, բյուջետային, ընտրողական և բանաձևերի հանձնաժողովներ։

Նախորդ տարվա Թեմական պատգամավորական ժողովի ատենագրության ընթերցումից և հաստատումից հետո, առաջնորդ սրբազանը կարդում է առաջնորդարանի գործունեության տարեկան ընդհանուր զեկուցագիրը։ Արժանապատիվ Տ. Լևոն քահանա Առաքելյանը կարդում է Թեմական խորհրդի տարեկան տեղեկագիրը։ Պր. Ֆրենք Զոթյան ներկայացնում է առաջնորդարանի հաշվետվությունը։

Հանուն Երուսաղեմի ամենապատիվ պատրիարք Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի ողջույնի խոսք է ասում Երուսաղեմի Հայոց

Պատրիարքության նվիրակ հոգեշնորհ Տ. Հմայակ ծայրագույն վարդապետ Խեղոյանը։

Ապա ժողովը իր երկրորդ և երրորդ նիստերում զբաղվում է իր օրակարգի շատ կարևոր հարցերի քննարկմամբ և ընդունվում են համապատասխան օրենքներ և շինիչ որոշումներ։

Թեմական պատգամավորական ժողովի չորրորդ նիստը դումարվում է դեկտեմբերի 8-ին, կիրակի օր։ Այս նիստում ժողովը քննում է տարեկան բյուջեն՝ 62 000 դոլար գումարով։ Ապա ժողովը զբաղվում է թեմական կազմակերպչական հարցերով։ Պատգամավորական ժողովը իր այս վերջին նիստում ընդունում է հետևյալ բանաձևերը.

«1) Թեմական պատգամավորական ժողովս արձագանք կտա Աղգիս Վեհափառ Հայրապետ Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության և օծման երկրորդ տարեդարձին առթիվ, և կհայտնե իր ջերմ սերն ու հավատարմությունը հանդեպ Հայաստանյայց Եկեղեցվս պատմական Աթոռին և անոր Գահակալ Վեհափառին։

2) Թեմական պատգամավորական ժողովս կհայտնե իր հավատարմությունը Ամերիկայի Միացյալ Նահանգաց կառավարության և մեր սիրելի Նախագահին՝ անոր մաղթելով արձագանք։

3) Թեմական պատգամավորական ժողովս մեծապես կգնահատե առաջնորդ հոր՝ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանի անցնող տարվան մեջ կատարած գործերը մեր թեմի եկեղեցիներու պայծառության համար։

4) Թեմական պատգամավորական ժողովս գնահատելի կգտնե Թեմական խորհուրդի անցնող տարեշրջանի գործունեությունը։

5) Թեմական պատգամավորական ժողովս իր գնահատությունը կհայտնե Թեմական խորհուրդի երկարամյա անդամ և երկու տարվա առենապետ պր. Տատուր Տատուրյանի նվիրյալ ծառայության համար և ցավ կհայտնե իր հրաժարականին համար։

6) Թեմական պատգամավորական ժողովս իր շնորհակալությունն ու երախտիքը կհայտնե Ուիսկանսոնի նահանգապետ միստեր Վիոներ Թամսոնի և Ռեյսոն քաղաքի քաղաքապետ միստեր Ջեկ Համբելի և Ռեյսոնի ազնիվ քաղաքացիներուն այն բարյացակամ ընդունելության համար, որ ընծայվեցավ պատգամավորներուն ժողովի դումարման օրերուն։

7) Թեմական պատգամավորական ժողովս սրտագին կշնորհավորե Ռեյսոնի Ս. Մեսրոպ եկեղեցվս հոգևոր հովիվ Տ. Մեսրոպ ավագ քահանա Ավետյանի այս օրերուն կատարած անձնական գովելի գործերը։ Նույնպես կգնահատե Մեսական խորհուրդի, եկեղեցասեր տիկնանց միության և հարակից բոլոր մարմիններուն ցույց տված ազնիվ վերաբերմունքն ու հյուրամեծարությունը։

8) Թեմական պատգամավորական ժողովս իր սիրալիր գնահատանքը կհայտնե ժողովի դիվանի անդամներուն, որոնք ձեռնհասորեն վարեցին նիստերը և արդյունավոր ընծայեցին բոլոր աշխատանքները։

9) Թեմական պատգամավորական ժողովս իր սրտագին գնահատությունը և երախտությունը կհայտնե Նեշրները՝ Գասնսիլ ավ Ջըրշըմ ավ Քրայսա ավ Ամերիկա մարմնուն, որ առիթ ունեցավ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիին ևս քրիստոնեական եկեղեցիներու այդ պատկառելի ընկերակցության անդամակցելու։

10) Թեմական պատգամավորական ժողովս ջերմագին շնորհավորություններ կուղարկե Ս. Երուսաղեմի ամենապատիվ պատրիարք Տ. Տիրան սրբազան արքեպիսկոպոս Ներսոյանին, որ իր ջանքերով և միաբանության աջակցությամբ աղաստած է Առաքելական Ս. Աթոռը ներքին և արտաքին խռովարարներեն, Բաղդրագույն ատյանի վերջնական որոշումով։

11) Թեմական պատգամավորական ժողովս իր ջերմագին շնորհավորությունները կուղարկե Կոստանդնուպոլսո ամենապատիվ պատրիարք Տ. Գարեգին սրբազան արքեպիսկոպոս Խաչատուրյանին, իր ժրաջան և գնահատելի գործունեությանց համար, ի պայծառություն Հայաստանյայց Եկեղեցվո, մաղթելով իրեն երկար կյանք և առողջություն։

12) Թեմական պատգամավորական ժողովս իր ջերմագին շնորհավորությունները կուղարկե գերաշնորհ Տ. Խաչ արքեպիսկոպոս Աջապահյանին և Կիլիկիո Աթոռին օրինապահ միաբանության, մաղթելով իրենց կորով և հաջողություն։

13) Թեմական պատգամավորական ժողովս իր ջերմագին շնորհակալության խոսքը ունի առաջնորդ Տ. Մամբրե արքեպիսկոպոսին և առաջնորդական փոխանորդ Տ. Վարդան քահանա Մկրյանին և Տ. Անանիա քահանա Գասպարյանին, որոնք գնահատելի աշխատանք կատարած են Նեշրները՝ Գասնսիլ ավ Ջըրշըմ ավ Քրայսա մարմնուն առաջնորդարանի անդամակցության համար։

14) Թեմական պատգամավորական ժողովս իր գնահատությունը կհայտնե առաջնորդական փոխանորդ Տ. Վարդան քահանա Մկրյանին և առաջնորդարանի դիվանապետ պր. Սարին Մանվելյանին, իրենց կատարած գործերուն համար։

15) Թեմական պատգամավորական ժողովս իր գնահատությունը կհայտնե Մայր Տաճարի և Մշակութային տան հանձնաժողովի ընդհանուր տնօրեն և գանձապահ պր. Հայկ Գավուքճյանին և իր գործակիցներուն, ինչպես նաև Ս. Էջմիածնի տպարանի հանդանակության հանձնախումբի ատենապետ պր. Երվանդ Աղաճանյանին և իր գործակիցներուն։

16) Թեմական պատգամավորական ժողովս իր գնահատությունը կհայտնե Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության, Թեմի կրթական, հրատարակչական և ընկերային մարզերուն մեջ կատարած նշանակելի գործերուն համար, ինչպես նաև հայ մամուլին, որ ամեն ուժերով կհրատարակե առաջնորդարանի վերաբերյալ գրություններ և կպաշտպանե Հայաստանյայց Եկեղեցին։

17) Ապա որոշվեցավ, որ ըստ կիրարկված սովորության, Թեմական պատգամավորական ժողովի 4-րդ և վերջին նիստի ատենագրությունը վավերացնե ժողովին դիվանը։

Օրակարգի վրա եղած հարցերը սպառած ըլլալով, 1957 դեկտեմբեր 8-ին, կիրակի երեկոյան ժամը 6.30-ին, Թեմական պատգամավորական ժողովը փակվեցավ առաջնորդ սրբազան հոր աղոթքով և օրհնությամբ։

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Լ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ ՇԱՐԴԵՆԻ ՕՐՈՔ 1673 ԹՎԱԿԱՆԻՆ

Արշակունյաց «Ոստան»՝ Նոր Քաղաքի, հետագայում քաղաքամայր Վաղարշապատի Կաթողիկեն իր շրջափակով հանդերձ, իբրև հարտարապետական եզակի հուշարձան, դարերի ընթացքում, ինչպես հայտնի է, փոխել է իր արտաքին տեսքը։

Մայր Տաճարի երբեմնի պատկերագրությունը, որի մասին կարելի է գաղափար կազմել Արշակ Զոպանյանի[1], Սահակ ծայրագույն վարդապետ Ասավածատրյանի[2], Գարեգին Ա Կաթողիկոս Հովսեփյանի[3] և այլոց ուսումնասիրություններից, դժբախտաբար, մեզ հնարավորություն չեն տալիս պատկերացնելու նրա Երբեմնի տեսքը, ինչպես, օրինակ, այդ տեղի ունի Մցխեթայի կաթողիկոսանիստ «Սվետի-Ցխովելի» Մայր Տաճարի պատկերագրություններից մեկում[4]։

Ուստի և մասնագետների դատողությունները Էջմիածնի Մայր Տաճարի կառուցվածքի և հնագույն նորոգումների մասին հենվում են, մի կողմից, մեր պատմիչների (Ն—ԺԷ դ. դ.) վկայությունների վրա՝ Ագաթանգեղոս, Փավստոս Բյուզանդ, Ղազար Փարպեցի, Սեբեոս, Ստեփանոս Տարոնեցի=Ասողիկ, Ստեփանոս Օրբելյան, Թովմա Մեծոփեցի, Հաքարիա Հովհաննավանեցի, Առաքել Դավրիժեցի և այլն, և մյուս կողմից՝ Ի դարի Ճարտարապետների ու այլ հետազոտողների կռահումների վրա։ Սակայն այսօրինակ բոլոր վկայություններն ու կռահումները, նորերս ծավալված և ծավալվող վերանորոգումների առընչությամբ[5], ստանում են նոր լուսաբանում և սրանից բխող հետևություններ, որոնք հերքում են Թ. Թորամանյանի ենթադրություն-

1 Արշակ Զոպանյան, «Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը», Փարիզ, 1910 թ.։

2 Սահակ ծ. վ. Ասավածատրյան, «Պատկերացույց հավքաածոյ», Նրուսաղեմ, 1913 թ.։

3 Գարեգին Ա Կաթողիկոս, «Էջմիածնի Տաճարի նկարազարդումը և ծաղկազարդումը ԺԸ—ԺԸ դարերում, «Ընդլեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության», պրակ Ա, Անթիլիաս—Լիբանան, 1951 թ.։

4 Իվ. Ջավախիշվիլի, «Վրաց ժողովրդի պատմությունը», I, Բ տպ., Թիֆլիս, 1913 թ., նկար 240 և 241 էջերի միջև (վրացերեն)։

5 «Սովետական Հայաստան», 1955 թ., 29/IX, № 231։ — «Коммунист», 1955 թ., 29/IX, № 231։— «Էջմիածին», 1955 թ., № 2, էջ 48—50, № 3, էջ 8—19, № 5, էջ 24—28, № 6, էջ 10—16, № 9, էջ 33—34։

Նկար 1



Նկար 2

ները[6] Էջմիածնի Մայր Տաճարի նմանության մասին։ Անիի Առաքելոց եկեղեցու հետ[7]։

Այժմ բոլորովին պարզ է, որ Էջմիածնի Մայր Տաճարը չէր կարող Անիի Առաքելոց եկեղեցու նախատիպը լինել ո՛չ իր հատակագծով և ո՛չ էլ շրջ. փոքր գմբեթների՝ հայկական ճարտարապետության համար միանգամայն անսովոր և խորթ դասավորությամբ հյուսիս-արևելյան, հարավ-արևելյան, հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան անկյուններում, որը կասկածելի է նաև Անիի եկեղեցու նկատմամբ։ Ինչպես իր ժամանակին Դյուբուա-դե-Մոնպերոն ենթադրել էր (տե՛ս նկար 1)[8], այն պետք է ունենար մի գմբեթ Տաճարի շրջ. մույթերի վրա բարձրացած, իսկ դրսի շրջ. աբսիդները, այսինքն՝ արևելյան, արևմտյան, հյուսիսային և հարավային, պետք է ունենային մոտավորապես այնպիսի տեսք, ինչպիսին հարավային աբսիդն է նկարագրված այժմ (1921 թվականից հետո)[9]։

Նկար 3

Այսպիսի վիճակում է եղել Մայր Տաճարը մինչև ԺԷ դարը, երբ, Ասարիկ Դավրիժեցու վկայությամբ, նրան կցվել է, նախ, հնհարկանի զանգակատունը արևմտյան աբսիդին կից (հավանական է, ավելի հնի փոխարեն), և երկուսի, այսինքն աբսիդի և զանգա-

[6] Թ. Թորամանյան, «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», հատ. 1, Երևան, 1942 թ., էջ 220—229, («Ազգագրական հանդես»-ից, ԺԹ, 1900 թ.), հատ. 2, Երևան, 1948 թ., էջ 61—66։

[7] Ալ. Սահինյան, «Նոր նյութեր Էջմիածնի Մայր Տաճարի կառուցվածքի վերաբերյալ», «Էջմիածին», 1956 թ., № 8—9, էջ 60—69, № 11—12, էջ 56—67։

[8] Dubois de Montpéreux, „Voyage autour du Caucase", Paris, 1839, Atlas, Série III, planche VII, figure 1. («Vue de l'église d'Etchmiadzin dans son état primitif»), տե՛ս նաև հյուսիսից է։

[9] Թ. Թորամանյան, Հիշյալ հրատարակությունը, հատ. 1, նկար 133 (էջ 222)։— Հմմտ. «Էջմիածին», 1953 թ., № 1, նկար 5-րդ էջում։

կատան, միջանցքում վերևից տեղավորվել է մի նոր խորան կամ մատուռ, ապա մնացած երեք աբսիդներն էլ աստիճանաբար պսակվել են համեմատաբար փոքրիկ զանգակաձևերով։

Ի դեպ, նշենք, որ այս փոքրիկ զանգակաձևերից մեկը, այսինքն հարավայինը, փուլ եկավ 1921 թվականի մարտի 27-ի առավոտյան ժամը 4-ին, որից հետո այն այլևս չի

Ինչպես ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենի վկայությունից երևում է, այսպիսի վիճակում է եղել էջմիածնի Մայր Տաճարը նրա օրոք, այսինքն 1673 թ. 7/III—8/IV միջոցին, երբ նա այցելել էր հինավուրց վանքը։ Ահա թե ինչու Շարդենի տպավորությունները մի տեսակ սկզբնաղբյուրի նշանակություն են ստանում էջմիածնի պատմության համար XII դարի երկրորդ կեսի նկատմամբ։



Նկար 4

վերականգնվել, և աբսիդին, ակադեմիկոս Ալ. Թամանյանի առաջարկով, վերադարձվել է իր հին տեսքը[10]. թեև այս միջոցառումով Մայր Տաճարը, կորցնելով համաչափության էլեմենտները, որոշ չափով, եթե կարելի է այսպես ասել, ուղղեղացել էր[11]։

[10] Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վերանորոգչական աշխատանքների 1956 թվականի ծրագրով նախատեսված է այս գմբեթի վերականգնումը (տե՛ս «Էջմիածին», 1957 թ., N 12, էջ 38, 39, 1958 թ., N 1, էջ 28)։

[11] Հին գմբեթավոր տաճարների կառուցման տրադիցիան, որով կողքի փոքր գմբեթները դասավորված են ոչ թե անկյուններում՝ հյուսիս-արևելյան, հարավ-արևելյան, հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան (որը սովորական է հույն-ֆյուզանդական և սլավոնական ճարտարապետության մեջ), այլ ուղղահայաց գծով դեպի արևելք, արևմուտք, հյուսիս և հարավ (որն իբրև բացառություն առկա է հիշյալ ճարտարապետությունների մեջ), հետագայում երևում է Թրիլիսիի Մուղնու Ս. Գեորգ եկեղեցում, որ կառուցված է 1751 թվականին (մինչև նրա վերանորոգումը ԺԹ դարի վերջերում, երբ կողքի գմբեթները, բացի արևմտյանից, վերացվեցին), նաև Ս. Վարդան եկեղեցում Ախալցխում, որը կառուցված է ԺԹ դարում (տե՛ս մեր աշխատությունը՝ «Հին Ռուսիան և Հայաստանը, ռուսերեն, Երևան, 1946 թ., էջ 135—136)։ Այս տրադիցիային, և դեպ նշենք, միանգամ-

Շարդենը գրում է.

«Մեծ զանգակատունը այժմ նորոգված է[12] այնտեղ կախված է վեց զանգ, որոնցից ամենամեծը կշռում է 1 200 ֆունտ։ Փոքր զանգակատներից մեկը[13] քառասուն տարի սրանից առաջ փուլ է եկել, և այդ ժամանակվանից, վանականների ասելով, այն չի վերականգնվել՝ [նյութական] միջոցների սղության պատճառով։ Այսպիսի հայտարարությանը կարելի է հավատալ, քանի որ հայտնի է, որ էջմիածնի վանականները շատ աղքատ են։ ...Վեհարանը գտնվում է [Տաճարից] դեպի արևելք (sic), վանքում, որ նախատեսված է ութսուն վանականի համար (թեև այստեղ սովորաբար ապրում է ոչ ավելի քան տասներկու-տասնհինգ հոգի)[14], գտնվում են նաև առանձին շենքեր, վանքը այցելող բոլոր օտարերկրացիների համար»[15]։

Շարդենի նկարագրությանը կցված է երեք նկար։

Այդ նկարներից մեկում, որի վերնագիրն է «Ecs-miazin nommé communément Les trois églises» (տե՛ս նկար 2), այսինքն «Էջմիածին, սովորաբար Ուչքիլիսա հորջորջված», պատկերացված է Էջմիածնի մայրավանքի ընդհանուր տեսարանը. կենտրոնում Մայր Տաճարն է նահարկանի զանգակատնով արևմուտքից և փոքր զանգակատնով հյուսիսային աբսիդի վերևից, իսկ ճարավային աբսիդը առանց զանգակատան, ինչպես այժմ է։ Տաճարի շրջանակը քառանկյունի անսամբլ է, բաղկացած դրսի պարիսպներից և ներսի բնակելի շենքերից (ինչպես Գոյ-մզկիթի կոմպլեքսն է Երևանում)։ Արևմտյան պարսպի մեջտեղում, ուղիղ զանգակատան դիմաց, «Տրդատի դուռն» է, որի աջ և ձախ կողմը արևմտյան անկյունում Վահարանը թեև նկարագրված է՝ «արևմտյան անկյունում Վեհարանը (Appartement de Patriarche), թեև նկարագրության տեքստում վերջինս հիշված է Տաճարից դեպի արևելք, որ մեր կարծիքով, սովորական lapsus calami պիտի լինի։ Տաճարի հյուսիսային կողմում դարձյալ միաբանական խուցերն են, արևելյան կողմում՝ հյուրատունը և, հավանական է, դպրատունն ու դիվանատունը, իսկ հարավից ընդարձակ սեղանատունը։ Պարսպից դուրս հեռվում նշմարվում են՝ դեպի հարավ-արևելք՝ «Գայանեանց»-ն, իսկ դեպի հյուսիս-արևելք՝ «Հռիփսիմեանց»-ն[16]։

Մյուս նկարը, որը ստորագրված է «Profil de l'église d'Ecs-miazin» (տե՛ս նկար 3), տալիս է Մայր Տաճարի տեսքը հարավ-արևմուտքից վերակառուցված ձևով այսինքն՝ հանդերձ զանգակատնով հարավային աբսիդի վրա։

Վերջապես, երրորդ նկարը, որը կրում է «Plan de l'église d'Ecs-miazin» վերնագիրը (տե՛ս սույն հոդվածի նկար 4), պատկերացնում է Մայր Տաճարի հատակագիծը նախնական ձևով՝ քառասյուն և քառաբսիդ։

մայն ձայնակցում է եկեղեցական կաղապարների (մոդելների) դասավորումը նաև վրացական տաճարների արևելյան, արևմտյան, հյուսիսային և հարավային ճակատների ծայրին, օրինակ՝ Սվետի-Ցխովելին և Սամթավրոն Մցխեթայում, Սիոնը՝ Թբիլիսիում, նաև Սամթավիսին, Քվաթախևին և այլուր (հմմտ. Ն. Պ. Սեհրով, «Վրացական հարտարապետության հուշարձանները, ուսերեն, Մոսկվա, 1947 թ., նկարներ 13, 14, 24, 25, 26, 31, 47 և այլն 31, 32, 41, 42, 47 և այլ էջերի վրա)։

12 Հնարաբար, սրա տեղ հնում եղել է զանգակատուն։— Լ. Մ-Բ.։

13 Այսինքն հարավայինը։— Լ. Մ.-Բ.։

14 Հավանական է, որ միաբանության որոշ մասերը դասավորված լինեն մերձակա վանքերում։— Լ. Մ—Բ.։

15 «Journal de voyage du chevalier Chardin en Perse et aux Indes Orientales», I, Londres. 1686, էջ 258—261։—Voyage du chevalier Chardin en Perse et aux autres lieux de l'Orient», I, Amsterdam, 1735, էջ 214—215։—Նույնը, Amsterdam, 1740, էջ 228—229. հմմտ. „Путешествие Шардена по Закавказью в 1672—1673 гг., перевод Е. В. Бахутовой и Д. П. Носовича", Тифлис, 1902, стр. 247.

16 Մեզ համար անհասկանալի է, «ո՞ր երկու եկեղեցիներն ի նկատի ունի Հ. Դ. Փափազյանը, երբ գրում է. «էջմիածնի վանքը և Վաղարշապատ գյուղը «Ուչքիլիսա» (երեք եկեղեցի) է կոչվել, որովհետև ԺԴ դարում Մայր Տաճարին կից նշել են նաև երկու այլ եկեղեցիներ («Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» I, «Հրովարտակներ», պրակ առաջին (Հեն—ԺԶ դ. դ.), կազմեց Հ. Դ. Փափազյան, Երևան, 1956 թ., էջ 37, ծան. 1, էջ 158։



Դ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ «ԱՐԵՒԱԳԱԼ»-Ի ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ, «ԱՌԱՒՕՏ ԼՈՒՍՈՅ» ԵՎ «ԱՇԽԱՐՀ ԱՄԵՆԱՅՆ» ԵՐԳԵՐԸ

Ներսեսը Արևագալի շարականներն արժանի են առանձնահատուկ ուշադրության այն տեսակետից, որ սրանք իրենց էությամբ ու արտահայտչական ձևերով տարբերվում են մեր սովորական շարականներից և որոշ չափով հանդիսանում են հեռավոր արձագանքն ու արտահայտությունը հայ հեթանոսական շրջանի կրոնական աշխարհայացքի և մտածողության։

Մեր շարակնոցը բանաստեղծական մի անգնահատելի գանձարան է, անթիվ երգերի ժողովածու։ Կրոնական երանգի հետ միաժամանակ այդ երգերն ունեն ազգային դուն, որոշված չափ ու ձև և մեր միջնադարյան հոգևոր բանաստեղծության մեջ կազմում են մի պատկառելի ինքնուրույն տեսակ։

Պետք է ասել, որ այդ շարականները բոլորը չէ, որ իրենց էությամբ քրիստոնեական կրոնի բացառիկ սեփականությունն են ձևել։ Դրանք մեծ մասամբ ծնվել, աճել ու զարգացել են հայկական իրականության մեջ, հայ մարդու հոգու և սրտի մեջ տակավին հեթանոսական շրջանից գոյություն ունեցած ազգային պատրաստ հողի վրա։

Ոչ միայն շարականները, այլև մեր եկեղեցական որոշ հղանակներ նույնպես արևելյան են ու տիպային։ Սկզբնական շրջանում նրանք կրելով հարևան ազգերի՝ առանձնապես պարսից հին կրոնի դաղափարախոսության ազդեցությունը, հետագայում, զարգանալով ու ձևավորվելով դառել են ինքնուրույն ազգային երաժշտություն։

Հեթանոսական շրջանում հայերը կրոնադաղափարական սերտ կապի մեջ են եղել իրանի հետ։ Մանոթ է հին աշխարհում պարսկական զրադաշտականությունը։ Վերջինս, ըստ Ջենտ Ավեստայի, ունեցել է հարուստ հոգևոր երաժշտություն, նվիրված աստվածներին, բարի ոգիներին, կրակին ու լույսին։

Որքան մոտիկ ու նման են եղել հեթանոս հայի և զրադաշտական պարսկի սրբազան արարողությունները, ծիսակատարությունները, այնքան էլ կարող են մոտիկ ու նման լինել պարսկական և հայկական հոգևոր երգերի ոգին, եղանակը։

Քրիստոնեությունը Հայաստանում մոտք գործած ժամանակ հայերն ունեցել են իլենց հարուստ կրոնական բանաստեղծությունն ու երաժշտությունը, որն սկզբնական շրջանում որոշ չափով ազդվելով պարսկականից, այդ շրջանում արդեն ինքնատիպ և ազգայնացված է եղել։

Ահա այդ հեթանոսական տարրերն էլ մտել են մեր հատկապես վաղ շրջանի հոգևոր երգի և ապա հետագայում՝ շարականների մեջ։ Քրիստոնեության սկզբի դարերում անգամ զրադաշտականությունն ու հատկապես Միթրայի կրոնը ուժեղ ազդեցություն ունեին ոչ միայն Արևելքում, այլև արևմուտքում։

«Քրիստոնեական առաջին չորս դարերում,— ասում է պրոֆ. Մ. Աբեղյանը,— պարսից արեգակի և լուսո աստված Միթրայի (Միհրի) կրոնը, որը շնորհիվ իր գրավիչ միստերիաների, տարածված էր նաև հռոմեական լայնածավալ կայսրության մեջ,

ազդում է քրիստոնեական դավանանքի կազմակերպության վրա»[1]։

Բնական է, որ այս կրոնը ուժեղ չափով ազդել է նաև մեր հոգևոր բանաստեղծության վրա, որի հետևանքով էլ ստեղծվել է լույսի ու արևի պաշտամունք ու փառաբանում, մերթ այլաբանորեն և մերթ էլ ուղղակի ձևով։ Հայոց հոգևոր երգը, որպես մեր ազգային մատենագրության մի ճյուղ, արևելյան է, ազգային, գունագեղ ու արևոտ։ Իսկ այդ հոգևոր երգերի մեջ Շնորհալուն վերագրվող Արևագալի շարականները իսկական և իմանալի լույսի փառաբանումն են։

Այս երգերի մեջ այլաբանությունները, համեմատությունները ճոխ ու բազմերանգ են։

Վստահ կարելի է ասել, որ հայոց հոգևոր բանաստեղծության մեջ եղած «լուսապաշտություն»-ը Շնորհալին զարգացրեց ու հասցրեց այնպիսի մի բարձր աստիճանի, որն այդ շրջանում մի անզուգական երևույթ էր Արևելքի գրականության մեջ։ Ինքը զրադաշտականությունը լույսի պաշտամունքի, մեծարման և փառաբանման մի կրոն է։

Սակայն եթե մեր հատկապես լուսապաշտության ու Արևագալի շարականները դնենք Ջեյդ Ավեստայի լուսերգերի մոտ, կտեսնենք, որ մեր այդ երգերն էլ ամբողջապես շնչում են լույսով ու արևով ու այդ լույսի աստվածացումն ու ներբողումն են։

Ահա այս լույսի ու արևի գեղեցիկ մոտիվներն էին, որ հեթանոս Հայաստանից որպես ժառանգություն անցնում էին քրիստոնեական նոր աշխարհայացքին։ Լույսի պաշտամունքն ու փառաբանումը ոչ միայն ուժեղ է եղել քրիստոնեության սկզբնական շրջանում, այլև անգամ Շնորհալու ժամանակ ու նույնիսկ Շնորհալուց հետո, մինչև Կիրակոս վարդապետ Երզնկացին, որն այնքան գեղեցիկ ու գունագեղ երգել է լույսը, արևը իր հայտնի «Արևելք գերարփին» պոեմում։

Տեղին է այստեղ նշել, որ մեր միայն Արևագալի շարականներում չէ, որ ուժեղ կերպով երևում է լույսի ու արևի փառաբանումը։ Մեր «Մեծացուցէ»-ների մեծ մասը, Տիրամոր նվիրված շարականներից շատերում գունագեղ, հյութալի պատկերներով ու այլաբանությամբ տրվում է Աստվածածնի պատկերը ամբողջապես լույսի ու լուսի պատկերների մեջ, ինչպես «Մայր լուսոյ, պույս ի լուսոյ, ծարևելք գերարփին», «առուաւօտ խաղաղութեան», «արուսեակ զուարթարար», «սիւն լուսոյ, «տուաճար լուսոյ», «նոր խորան արեգական», «նոր տաճար անճառ լուսոյն», «մարգարիտ լուսափայլ» և այլն։

Գալով Շնորհալու Արևագալի երգերին, պետք է ասել, որ այստեղ բանաստեղծը վարպետորեն կարողացել է լույսի գովեստը ներդաշնակել դավանաբանական կամ աստվածաբանական հարցերի հետ, որոնք դարձել են լուսե օրհներգություններ։ Բարձր զգացումներով բանաստեղծն երգում է լուսո արարչին կամ անեղանելի իմանալի լույսին։ Ահա Շնորհալու Արևագալի շարականներից նմուշներ.

«Լոյս, արարիչ լուսոյ, առաջին լոյս,
Բնակեալդ ի լոյս անմատոյց...»։

«Լոյս ի լուսոյ ծագումն՝ արեգակն արդար»։

Այնուհետև Արևագալի շարականների մեջ բացձրանում են դավանաբանական մոտիվներ՝ զուգակցված լույսի, Հոր, Որդու և Ս. Հոգու հետ.

«Լոյս, երրեակ և մի անբաժանելի Սուրբ Երրորդութիւն»[2]։

Եվ այս լույս բառերով սկսվող գեղեցիկ քնարական բանաստեղծության ամեն մի տան վերջում երգվում է հետևյալ կրկնակը՝

«Ի ծագել լուսոյ առաւօտուս,
Մագեա՛ ի հոգիս մեր զլոյս քո իմանալի»։

Արևագալի մի հորդորակ երգի մեջ Ս. Երրորդության «Երեք անձինքս»-ը առանձին-առանձին երգելուց հետո բանաստեղծը միաձնում, դարձնում է մի բնություն, մի աստվածություն, ըստ Հայաստանյայց Եկեղեցու աստվածաբանության.

«Երեք անձինք և մի բնութիւն,
Մի աստուածութիւն,
Զքեզ խոստովանիմք յաւէտ,
Սուրբ Երրորդութիւն»։

Լույսն ու լուսոյ արարչին փառաբանելու, նոր օրհներգներ հորինելու համար բանաստեղծը կոչ է անում արևելքից մինչև արևմուտք, հարավից մինչև հյուսիս, որ բոլոր ազգերն ու ցեղերը գան օրհնեն լուսո Հորը, որ լույս է տվել աշխարհին.

«Ամենայն ազգ և ազինք,
Օրհնութիւն նոր օրհնեցէք
ԶԱրարիչն արարածոց,
Որ ծագեաց զլոյս արեգականն
Այսօր յաշխարհս»։

Աշխարհի չորս կողմերից մարդկանց հրավիրելուց և լուսերգեր Արարչին ձոնելուց հետո, այս անգամ էլ Շնորհալին դիմում է

[1] Մ. Արեղյան, «Հայոց հին գրականության պատմություն», Ա գիրք, էջ 501։

[2] «Ցայնքաղ շարական», էջ 474։

ՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ

Եկեղեցուն, որ փառաբանի Ս. Երրորդությանը, որ գովեն Քրիստոսին Իր Հոր և Ս. Հոգու հետ միասին, որովհետև լույս է ծագել մեզ.

«Եկեղեցիք արդարոց,
Փառաբանիչք ամենասուրբ Երրորդութեան,
Յառաւօտս լուսոյ, զառաւօտ
խաղաղութեան
Զ Քրիստոս գովեցէք ընդ Հօր և Հոգւոյն,
Որ ծագեաց զլոյս դիտութեան իւրոյ
ի մեզ»

Միայն Արևագալի երգերի մեջ չէ, որ Շնորհալին մեծարում է ու գովերգում լույսը։ Այդ երևում է նրա գրեթե բոլոր բանաստեղծությունների մեջ, ուր Շնորհալին հետևողականորեն երգում է լույսը, նրա հետ կապելով իր մտքերն ու զգացումները։ Լույսը Աստվածաշնչի մեջ խորհրդանշում է Աստծուն։ Ավետարաններում Քրիստոսը հայտնվեց որպես «Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց»։ Հիսուս Իրեն անվանել է «աշխարհի լոյս»-ը։ Իհարկե, այս գաղափարների լույսի տակ, սխալ կլիներ Շնորհալու մոտ լույսի պաշտամունքը վերագրել միայն հեթանոսական ազդեցությունների։ Շնորհալին լույսի պատկերի տակ երգում է Աստծուն, Քրիստոսին, Տիրամորը։ Նրա ողջ բանաստեղծությունը հագեցած է քրիստոնեական լույսի փոխաբերական իմաստով։

Մեր ասածը հիմնավորելու համար բերենք մի քանի բնորոշ տողեր Շնորհալու ծանոթ շարականներից և երգերից.

Վարդավառի երկրորդ օրվա օրհնությունից.

«Ճառագայթ փառաց Հօր Որդիդ Միածին,
Որ զլոյսդ անվայրապակ մարմնով
պարագրեալ»

Վարդավառի երրորդ օրվա շարականից.
«Երեգակն արդարութեան Քրիստոս
Ծագեալ յաշխարհ, հալածեաց զխաւարն
անգիտութեան»

«Այսօր Անճառ»-ից.

«Այսօր անճառ լուսոյն ծագումն,
Ի փրկութեան մեր կատարումն...

Լոյսն խոսէր աղերսալի,
Խաւարելոյն վասն դարձի։

Զահդ լուսոյ յառաւօտին,
Ի յուրբաթուն հնոյ Զատկին»,

«Ընորաստեղծեալ»-ից.

«Լոյսդ որ անձեղ, արարչական,
Ասեղ լինել լոյս եղականաց»

«Արարչական»-ից.

Ի Հօրէ լոյս ծագեցար
Մեռեալ բնութեանս կենդանարար...

Լոյսն այն պայծառ յօր յորրորդին,
Յարեգական նիւթ հաւաքեալ,
Լուսինն ի տիպ լուսոյ ստեղծեալ
Եւ աստեղաց պարս յօրինեալ...»

«Նայեաց սիրով»-ից.

«Ի քեզ նայիմք, լոյսդ անմատոյց.
Ի զգայական ծածկեալ լուսոյ...

Էիդ լուսոյ անստուերի,
Պաղատանօք կամք առաջի...»

Աղուհացից երրորդ կիրակիի շարականից.
«Գովեմք զքեզ, բան և լոյս,
Որ զտիրական քո պատկեր
Լուսով ճրագի քո դտեալ վերականգնեց կիր»

Լոյս ի լուսոյ ծնունդ և ծաղումն...
Որ զլոյս աստուածային քո բանի
Ծագեցեր յաշխարհս ամենայն
անգիտութեան...»

Այսպիսի տողեր դեռ էլի կարելի էր շարունակել։ Շնորհալին մեր հոգևոր երգի մեջ ստեղծել է լոյս Աստծու փառաբանման սքանչելի պատկերներ, որոնք կարմիր թելի պես անցնում են նրա գլխավոր բոլոր գործերի մեջ։ Լույսի այս պաշտամունքն ու փառաբանումը Շնորհալու շարականների միջոցով ազդել է նաև Շնորհալուց հետո եկող շատ շարականագրերի վրա։

***

Շնորհալու երգերի մեջ ժողովրդի կողմից ավելի սիրված և ավելի մասսայականացած են «Առաւօտ լուսոյ» և «Աշխարհ ամենայն» հռչակավոր երգերը իրենց պարզության, մատչելիության և գեղեցկության պատճառով։ Այս երկու պարզ երգերն էլ շարականների կանոնի մեջ չեն մտնում, այլ ըստ ժամագրքի համարվում են դիշերային երգ։ Այս հայտնի «Առաւօտ լուսոյ»-ն ժամագրքում և ձեռագրերում ունի հետևյալ վերնագիրը. «Ընորին Տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի. երգ աղօթական ի դեմս Սրբոյ Երրորդութեանն, նաև իւրաքանչիւրոյ դիմի Երրորդութեան առանձնակիս»[3]։

Ամբողջ երգի մեջ, որն այբուբենի կարգով է գրված, բանաստեղծը խոսում է Հոր Աստծու, Որդու և Ս. Հոգու հետ, և ամեն առիթով ու ամեն միջոցներով՝ խոսքով, ձայնով, ձեռքով աղաչում է ու պաղատում, որ Աստված Երկնային բարի շնորհներ ու պարգևներ տա իրեն.

3 «ժամագիրք առանձին», Էջմիածին, 1863 թ., էջ 7։

«Զայնիս աղաչեմ,
Զեռօքս պաղատիմ,
Զիր բարեաց շնորհեա»։

Երբի տպրում երբիչը երկնային Հորն համարում է «լույսի առավոտ» և «արդար արեգակ» և խնդրում, որ այդ արդար արեգակի լույսը ծագի իր վրա.

«Առաւօտ լուսոյ,
Արեգակն արդար,
Աւ իս լոյս ծագեաս»։

Անապատ են երկնի գանձերն ու ողորմությունը։ Բանաստեղծն ուզում է, որ իրեն էլ բաժին հասնի այդ գանձից, ինքն էլ գտնի իմանալի գանձը, արժանանա նրան.

«Գանձդ ողորմութեան,
Գանձիդ ծածկելոյ
Դասուլ զիս արժ...»։

Երգիչը մարդասեր Հայր Աստծուց նաև բժշկություն է խնդրում։ Նա իրեն համարում է հոգեպես մեռած և աղաչում է, որ Երկնային Տերը կյանք լինի իրեն համար, լույս տա իրեն՝ խավարյալին և լուծի ցավերը.

«Ի քէն, Տէր, հայցեմ,
Ի մարդասիրէդ,
Ինձ բժշկութիւն.
Լեր կեանք մեռելոյս,
Լոյս խաւարելոյս,
Լուծանող ցաւոյս»։

Հայր Աստծու հետ խոսելուց, իր խնդրանքներն ու աղաչանքները ներկայացնելուց հետո, այս անգամ էլ Շնորհալին իր խոսքն ու խնդրվածքները ուղղում է Փրկչին ու երգով խոսում նրա հետ, խնդրելով կյանք տալ իրեն, ուրախ կանգնեցնել իրեն՝ գլորվածին, և շնորհել իրեն մարդու հոգեկան աշխարհը կանգուն պահող երեք նվիրական սյուները՝ հավատ, հույս և սեր.

«Կենարար Փրկիչ,
Ինեցո զմեռեալս,
Կանգնեա զգլորեալս.
Հաստեա հաւատով,
Հաստատեա յուսով,
Հիմնեցո սիրով»։

Ապա սեր է խնդրում երգիչը Հիսուսից նրա համար, որ նա ամբողջությամբ սեր է, աղերսում է, որ իր քարեղեն սիրտը Իր սիրով ճմլի, փափկացնի, սիրառատ դարձնի.

«Սէր անուն Յիսուս,
Սիրով քո ճմլեա
Սիրտ իմ քարեղէն.
Վասն գթութեան,
Վասն ողորմութեան,
Վերստին կենցո»։

Շատ է մտածում, տխրում ու սգում բանաստեղծը իր հոգու փրկության համար, Փրկչից նա խնդրում է քավություն և թողություն, իր հոգու փրկությունը, հետևապես և իր ուրախությունը.

«Շնորհատու բարեաց,
Շնորհեա ղքաւութիւն.
Շնորհեա ղթողութիւն.
Ուրախացո, Տէր,
Ոգւոյս փրկութեամբ,
Ոյր վասն եմ ի սուգ»։

Երգիչն ուզում է, որ Հիսուսն Իր արյան ցողով լվա, մաքրի իր հոգին, որպեսզի իրոք ուրախանա և ցնծա իր անձը.

«Ցօղ արեան քո, Տէր,
Ցօղեա ի հոգիս,
Ցնծասցէ անձն իմ»։

Մի ուրիշ տան մեջ էլ իր հանցանքները ջնջելու, մեղքերից ազատվելու համար, Շնորհալին Միածնից խնդրում է լուր տալ իր աչքերին, որ ցեղմ ու առատ արցունք թափի և լացով՝ մեղքերից մաքրվի.

«Լուր շնորհեա աչացս,
Լերմ հեղուլ արտօսր,
Ցեղչէլ զյանցանս»։

«Առաւօտ լուսոյ» երգի մեջ կան նաև դավանաբանական բնույթի տողեր և դա այս երգի համար բնական է, քանի որ երգի խոսքը հերթականորեն ուղղված է կամ Հայր Աստծուն, կամ Որդուն, կամ Ս. Հոգվուն և կամ Ս. Երրորդության միանգամից.

«Երրեակ միութիւն,
Եղելոցս խնամող,
Եւ ինձ ողորմեաս»։

Այս երգը հիմնականում կրում է զղջական բնույթ և իր էությամբ ավելի մոտ է ապաշխարության երգերին։

Ինչպես երևում է, երգը ոչ միայն գրված է այբբենի կարգով, այլև ամեն մի տաղ կարճ տողերի սկզբում 3 անգամ կրկնվում է։

«Առաւօտ լուսոյ»-ն ունի վերին աստիճանի պարզ, սահուն, գրեթե ժողովրդական պարզության հասած մի լեզու։ Պարզ է եղել այս երգը նաև իր բովանդակությամբ հասարակ հավատացյալի հոգու և սրտի համար։ Զեի ու բովանդակության պարզությամբ և այս երկուսի գեղեցկությամբ պիտի բացատրել նաև այս երգի ժողովրդական ու սիրելի դառնալու գաղտնիքը։ Ոչ մի շարական, ոչ մի տաղ, ոչ մի գանձ այնպես տարածված չի եղել, մտել ժողովրդի լայն խավերի մեջ և երգվել թե՛ տխրության և թե՛ ուրախության ժամին, եկեղեցում թե դրսում, նաև շատ անգամ փողային գործիքների նվագակցությամբ, ինչպես «Առաւօտ լուսոյ»-ն է եղել։

Եկեղեցում «Առաւօտ լուսոյ» երգը երգվում է տերունի օրերին միայն։

Իր ձևով ու չափով «Աշխարհ ամենայն»-ը շատ նման է «Առաւօտ լուսոյ» երգին։ Գրեթե ձևը, հնարքները, մի խոսքով ողջ արվեստը «Աշխարհ ամենայն» երգի նույնն է, ինչ որ «Առաւօտ լուսոյ» Երգինն է։

«Աշխարհ ամենայն» երգն էլ ունի բնորոշ վերնագիր. «Ողբերգութիւն անձին զղջացելոյ և բողոք իւրաքանչիւրոյ դիմի խոստովանաբարք»։

Երգը երգվում է սրբոց տոների ժամանակ, կրում է նույնպես զղջական ապաշխարողական բնույթ, ինչպես ճիշտ վերնագրված է։

Այս երգի մեջ բանաստեղծը ներկայացնում է իր բոլոր հանցանքները, որ գործել է մոլորվելով, դուրս գալով արդար ճանապարհից։ Նա քողոքում է ինքնիր դեմ և կոչանում ամբողջ աշխարհին, որ գա իրեն վրշտակից դառնա և ողբա։ Երգի մեջ երևում է Գրիգոր Նարեկացու ազդեցությունը։ Ինչպես Ողբերգության մատյանում Նարեկացին, այնպես էլ Շնորհալին, իհարկե ավելի զուսպ ու չափավոր, դիմում է ինքնաձաղկման, ինքնախարազանման։ Բանաստեղծը մեղքի ծանրության տակ հառաչում է։ Շնորհալին էլ իր հանցանքները Նարեկացու նման համարում է անթիվ, չգիտե ինչ լեզվով պատմի, որ ինքը իր դեմ որոգայթ է լարել, դուր փորել, դարան է գործել.

«Գող եղէ մեղաց,
Գտող կորստեան,
Գուր ինձ փորեցի.
Դաւեցի դանձն իմ,
Դաւաճանեցի,
Դարան գործեցի»։

Եվ որովհետև երգիչը ընկել է մեղքի անհատակ ծովը, չգիտե ինչպես պատմել այդ մեղքերի մասին, ոգնության է կանչում ոչ միայն երկրին, այլև երկնքին, որ գան և ողբան իր եղկելի մեղքերը.

«Երկինք և երկիր,
Եկայք ողբացէք
Եղկելի զանձն իմ»։

Նա թավալվում է մեղքի տիղմի մեջ ու չի կարողանում այդ մեղքերից աղատվել։ Ամբողջ երգի մեջ զղջացող ու իր անձի դեմ բողոքող Տեղինակը ինքնադատապարտումով է զբաղված, որ հեռացել է սուրբ խորհրդից, հեռացել է լույսից. ընկել է խավարի ու մահու ստվերների մեջ, հանգել է նրա լամպարը, չարքերը խարել են իրեն ու ծիծաղում են իր վրա.

«Խորհուրդք չարին
Խաբեն զհոգիս,
Խորասոյզ առնեն.
Միծաղին գլորմամբս,
Մանակ գիս առնեն,
Մածկեն անդնդօք»։

Չար սատանան խաբել է երգողին, հոգին խորասույզ արել, տատի, ասում է.

«Մեռեալ եմ հոգովս.
Մոլորեալ մտօքս,
Միայն կամ մարմնովս»։

Իսկ այդ մարմինն էլ ընկել է թշնամու որոգայթը. թշնամուց նեռահար է եղել և միշտ խոցոտվում է։

Շատ շներ շրջապատել են այդ մեղսամած մարմինը, չարին որս է դարձել, արյամբ շաղախվել և ընկել է մեղքի ուղկանը.

«Շուրջ պատեալ զինեն,
Շունք բազում եղեն,
Շաղախին արեամբս.
Որս եղէ չարին,
Ուղկանաւ մեղաց
Որսացաւ անձն իմ»։

Երկու երգերն էլ ունեն պարզ ու պատկերավոր լեզու։ Դարձվածքները շատ մոտ են ժողովրդական ոճին և հարազատ։ Հետաքրքիր են պատկերները, փոխաբերությունները ու այլաբանությունները։ Եթե համեմատենք այս երկու երգերի արվեստը, անշուշտ «Առաւօտ լուսոյ»-ն գրված է ավելի բարձր արվեստով ու լավատեսությամբ, քան «Աշխարհ ամենայն»-ը, որն ավելի սրտառուչ մի ողբասացություն է։

4 «Ժամագիրք ատենի», էջ 6։



Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԳԼԵՁՈՐԻ ԴՊՐՈՑԻ ՄԵԾ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ԹՈՐՈՍ ՏԱՐՈՆԱՑԻՆ*

Աստվածամոր կերպարը Հիսուս Մանկան հետ.— Նախքան Թորոս Տարոնացու մասին մեր ասածները հանրագումարի բերելը, անհրաժեշտ ենք համարում նրա վարպետությունը բացահայտելու համար կանգ առնել Հիսուս Մանկան հետ Աստվածամոր կերպարի վրա, որը հարկավոր չափով դեռևս չի արտացոլված հայկական մանրանկարչության վերաբերյալ գոյություն ունեցող գրականության մեջ։ Այդ հարցում մանրանկարչի վարպետության մասին առաջինը ընդգծել է Հ. Ղ. Ալիշանը[35], իսկ հետագայում՝ Կ. Բասմաջյանը։ Վերջինս բառացիորեն նշում է, որ Թորոս Տարոնացին «մասնագետ է կանացի դեմքերու և մարմիններուն[36], եվ իրոք, Գլաձորյան դպրոցի այս մանրանկարչի և այդ շրջանի այլ վարպետներից ոչ մեկի մոտ չի կարելի գտնել այնքան սեր Աստվածամոր և Մանուկ Հիսուսի պատկերման դեմ, որքան Թորոս Տարոնացու մոտ։ Մեր ծաղկոցի գրեթե բոլոր աշխատանքներում կարելի է տեսնել Հիսուս Մանկան հետ Աստվածամոր պատկերը։ Այդ կերպարը գոյություն ունի Թորոս Տարոնացու ամենավաղ շրջանի ձեռագրի՝ 1307 թվականի «Սնոայի Նշեցու Ավետարան»-ի մեջ, որտեղ արված է պատկերը ամբողջ էջով[37], իր կառուցման սկզբունքով հիմնված սրբապատկերների (իկոնների) սկզբունքով։

Հիսուս Մանկան հետ Աստվածամոր մոտիվը (այսպես կոչված «խանդոպատանքի» պատկերը) կա նաև Թորոս Տարոնացու «Սնոայի Նշեցու Աստվածաշնչում», որտեղ Մանուկը պատկերված է Մոր ծնկների վրա նստած վիճակում։ Տիրամայրը քնքշորեն գլուխը հպել է Հիսուս Մանկան գլխին (էջ 476ա)։ Թորոս Տարոնացու կողմից Աստվածամոր և Մանուկ Հիսուսի այդ կերպարը պատկերված է շատ տարբերակներով։ Այն պահպանվում է նաև 1317 թվականի «Թուղթ Ներսեսի Շնորհալուց» ձեռագրում[38]։

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1957 թվականի Մ Մ Է—Ը-ից, Թ-ից և 1958 թվականի Մ Դ-ից։

35 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, «Միսական», էջ 134։

36 Տե՛ս Կ. Հ. Բասմաջյան, «Հայոց հին գեղարվեստի վարպետները», էջ 34։

37 Տե՛ս Պիտատիի Տեր-Ներսեսյան, «Վենետիկի Մխիթարյան հայերի մատենադարանի ԺԲ, ԺԳ և ԺԴ դարերի նկարազարդ հայերեն ձեռագրերը» (ալբոմ), Pl. LIX, 119.

38 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, «Միսական», էջ 133, 135, 136 և Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, «Հայագրական կամ Գանձասար հայոց պատմության մեջ», մասն Բ, էջ 232։ Ըստ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի, այդ մանրանկարի հեղինակը եղել է ոչ թե Հովհաննեսը, ինչպես նշել է Հ. Ղ. Ալիշանը, այլ հավանաբար Թորոս Տարոնացին։ Եվ իրոք, Աստվածամայրը Մանկան հետ, Գրիգորիս և Մամախաթուն ամուսինների պատկերների և անվանաթերթի 1317 թվականի ձեռագրի համեմատությունը մի շարք մանրանկարների, ինչպես և նրանց մանրամասնությունների «Սնոայի Նշեցու Աստվածաշնչի» և այլ ձեռագրերի նկարների մանրայի հետ, վկայում են, որ այդ պատկերների ստեղծողը Թորոս Տարոնացին է։

1323 թվականի Ավետարանում և ուրիշ ձեռագրերում։ 1323 թվականի Ավետարանում Աստվածամայրը նստած է բազմոցի վրա, ձեռքերի վրա Հիսուս Մանուկը, որին նա աջ ձեռքով սեղմել է իրեն, իսկ ձախով պահում է Նրան հետևից (էջ 12ա), իսկ մյուս էջում (էջ 13բ, նկար 21), լուսանցքում կա օրիորդայի կերպարը ամբողջովին բարեհամբույր և բարեհոգի դեմքի արտահայտությամբ։ Այդ ձեռագրում, ինչպես և № 8936 Ավետարանում (էջ 128ա, նկար 22), կա Աստվածամոր կերպարի մի օրինակը, որպես կոչված ստնտու Աստվածամայրը, այսինքն Մանկան կերակրող Աստվածամայրը, որտեղ նկարչի կողմից բացահայտվել է մայրական քնքուշ զգացմունք դեպի Մանուկը (նկար 23)։ Այդ մանրանկարի մեջ 1323 թվականի Ավետարանը զուգահեռ հետաքրքրություն է ներկայացնում, տրված Թորոս Տարոնացու կողմից, որը նկատված է Լ. Ա. Դուռնովոյի կողմից։ Աստվածամայրն ու Մանուկ Հիսուսը մի կողմից, եղջերուն իր ձագի հետ մյուս կողմից (նկար 25), ըստ որում երկուսն էլ կերակրում են իրենց երեխաներին։ Այդ կապակցությամբ մենք Լ. Ա. Դուռնովոյի մոտ պտնում ենք ուշադրության արժանի դիտողություն. «Մայր Մարիամի հանդեպ ուսած այս գարմանալի վերաբերմունքի պատկերման մեջ Թորոս

Նկար 22

Տարոնացին առաջ անցավ արևմտյան նկարիչներից՝ համեմատելով կերակրող Աստվածամորը՝ ձագուկին կերակրող մայր եղջերուի հետ...»[39]։

Հատուկ ուշադրության է արժանի № 8936 ձեռագրի Աստվածամայրը Հիսուս Մանկան հետ, որը մեր կողմից թվագրված է 1317 թվականին[40]։ Այդ ձեռագրի մեջ չկան հա-

Նկար 21

39 Տե՛ս Լ. Ա. Դուռնովո, «Հին հայկական մանրանկարչություն», այրում, 46-րդ նկարի բացատրությունը։

40 Այդ ձեռագրի թվագրությունը, չնայած ընդհանուր առմամբ նրա դժվարությանը, այնուամենայնիվ հնարավոր է դառնում շնորհիվ մանրանկարչի մյուս աշխատանքների թվագրված լինելու, գլխավորապես 1317 և 1318 թվականների Աստվածաշունչերը և 1317 թվականի ձեռագրերը (№ 6887)։ Նկատելով 1317 թվականի ձեռագրի Աստվածամոր Մանկան հետ կերպարի համեմատությունից, նույնպիսի պատկերի թվագրված Ավետարանի հետ, ավելի գեղանկարչական է մեր ինքնին մանրանկարների բնույթից (համեմատած սնայի Նչեցու Ավետարանի հետ), կարելի է ենթադրել, որ № 8936 Ավետարանը պատրաստվել է 1317 թվականի սկզբներին, բոլոր դեպքերում, 1317 թվականի Աստվածաշնչից առաջ։

Նկար 23

բոատ նկարազարդումներ, պահպանվել են երկու ավետարանիչների դիմանկարներ[41], չորս Ավետարանների անվանաթերթեր, մի շարք օրնամենտալ և այլ նկարազարդումներ ձեռագրի լուսանցքներում։ Մեզ է հետաքրքրում է Հիսուս Մանկանը ձեռքի վրա պահած Աստվածամոր պատկերումը, տեղադրված Մատթեոսի Ավետարանի անվանաթերթի կիսախորանի վերին մասում, վերցված կլոր շրջանակի մեջ, որպես թե մեդալիոնի մեջ առնված (էջ 11ա. նկար 24)։ Գրեթե նման պատկեր, ինչպես մենք ասացինք, պտնում ենք նաև № 6897 ձեռագրում (էջ 86ա), 1317 թվականի[42]։

Աստվածամոր կերպարը, որը քնքշագին գրկել է Մանուկ Հիսուսին, նույնպես գտնում ենք այլ ժողովուրդների միջնադարյան արվեստի մեջ, օրինակ, Բյուզանդիայում՝ ԺԲ դարից, որի օրինակ կարող է լինել «վլադիմիրյան Աստվածամայրը»[43] և այլն։ Սակայն, այդ «խանդոդատանք»-ի կերպարը իր մեկնաբանությամբ ծաղկող Թորոս Տարոնացու մոտ հիմնովին տարբերվում է ինչպես բյուզանդական, այնպես և այլ ժողովուրդների դեղանկարչությունից։ Թորոս Տարոնացու մոտ դլխի թեքվածքը՝ Աստվածամոր և Հիսուս Մանկան մոտ՝ չի ընկալվում որպես տրադիցիոն դլխի ազոթող թեքվածք, այլ՝ արտահայտչական միջոց անձնական խոր վշտի։ Նկարչի Թորոս Տարոնացու մոտ մենք գտնում ենք խորունկ սեր դեպի ամոր

Նկար 24

41. Գրող ավետարանիչ Մատթեոսի և Հովհաննեսի Գրիգորիոսի հետ պատկերն է։ Վերջին մանրանկարում, ի միջի այլոց, Հովհաննեսի ֆիգուրան գրեթե ամբողջությամբ ոչնչացված է, պոկված է, որից մնացել է միայն գլխի մի մասը՝ լուսապսակի մեջ և տարրերը։

42 Գեղական մատենադարանում բարի վրա այդ ձեռագիրը թվագրված է, լգիտես ինչու, 1330 թվականի, որ չի նշված հիշատակարանում։ Սակայն 182բ էջում հիշատակվում է Էալի իշխանի մահվան մասին՝ 766 թվականը (հայկական տոմարով), այսինքն 1317 թվականը։ Այստեղից պետք է ենթադրել, որ ձեռագիրը ոչ թե 1330 թվականի է, այլ 1317 թվականի, որովհետև հայկական ձեռագրերում ընդունված է եղել, ինչպես հայտնի է, հիշատակարաններում հիշել գրչի ներին ժամանակակից դեպքերի տեղերը։ Այդ կարծիքին է նաև Լ. Ս. Խալիկյանը (տե՛ս նրա կազմած «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 128, 129)։

43 Տե՛ս «История русского искусства», Москва, Издательство АН СССР, 1953 г. Том I, стр. 443.

Նկար 25

և մանկան» այդ կերպարը։ Եվ իրոք, այդ փոքրիկ մանրանկարի մեջ, պարզ, բայց վարպետորեն կատարված, զգում ենք խոր, սիրով ներթափանցված մոր քնքշությունը՝ զեպի իր զավակը։ Աստվածամայրը որպես Քե մտահոգված է Ինքն Իրենով, լիրիկական և կենտրոնացված է։ Նրա մեջ մարմնավորվել է հոգեկան քնքշանք և տխրություն։ Գլխավոր ուշադրությունը նկարիչը դարձրել է Նրա տխուր աչքերին։ Նրա աչքերն ուղղված են ինչ-որ հեռուն, բայց նրանք աղոթողի աչքեր չեն, ինչպես այդ տեսնում ենք բյուզանդական նկարների մեջ։ Եվ ընդհանրապես պետք է ասել, որ Թորոս Տարոնացու մանրանկարներում էական նշանակություն ունեն աչքերը։ Լայն բացված աչքերը բնորոշ երևույթ է այս նկարչի համար և, որ շատ կարևոր է, նրանք չեն արտահայտում անտարբերություն, ինչպես բյուզանդական սրբերի դեմքերը, այլ ներշնչված են մի տեսակ ներքին կյանքով։ Կանոնավոր բիբը, նուրբ շրթունքները ավելի են ընդգծում դեմքի վշտոտ և տխուր արտահայտությունը։ Հիսուս Մանկան դեմքը նույնպես ընդգծում է, նույնիսկ ուժեղացնում այն վիշտը, որը դրոշմված է Աստվածամոր դեմքին, որին Մանուկ Հիսուսը այնպես քնքուշ հպվել է, գրկելով Նրա վիզը Իր փափուկ ձեռքերով։

Իրական, կենսալից շերմությամբ հագեցած այդ փոքրիկ մանրանկարը դիտելիս չի կարելի առանց հիացմունքի նայել և միևնույն ժամանակ չզգալ Մոր կերպարում Նրա նախազգացումը Իր սիրելի զավակի տխուր ապագայի մասին։

Այդ բոլորը խոսում է միջնադարյան հայ տաղերգուների մտահղացումների և արվեստի մասին, տաղերգուներ, որոնք իրենց լիրիկական պոռթկման ուժով երգել են սերը և բնությունը, գարունը և կանացի գեղեցկությունը. «Միայն Թե,— ինչպես նշել է ակադեմիկոս Մանուկ Աբեղյանը իր «Հայոց հին գրականության պատմության» մեջ,— այդ սերը չունի ոչինչ նյութական, ֆիզիկական. դա երկնային սերն է, ուղղված առ Աստվածածինը»[44]։ Մանուկ Աբեղյանը այս տողերը գրել է միջնադարյան հայ նշանավոր բանաստեղծ Գրիգոր Նարեկացու մասին, որի ստեղծագործությունները, ի միջի այլոց, ոչ պակաս արձագանք են գտել ԺԳ—ԺԴ դարերի հայ մանրանկարիչների աշխատանքներում։

Հանրագումարի բերելով Թորոս Տարոնացու ստեղծագործությունը, պետք է ասել, որ նա գեղարվեստական մեծ մշակույթի տեր մի արվեստագետ է (նկար 25)։

Ծաղկող Թորոս Տարոնացու երկարամյա ստեղծագործական աշխատանքը, նրա այնպիսի ստեղծագործությունները, ինչպիսին են 1307 թվականի «Ծնսայի Նշեցու Ավետարանը», 1318 թվականի «Ծնսայի Նշեցու Աստվածաշունչը», 1323 թվականի Ավետարանը հնարավորություն են տալիս նշելու նրա արվեստի աստիճանական զարգացման աճը և առանձնահատկությունները։

Նկարիչ Թորոս Տարոնացու արվեստը աչքի է ընկնում նաև իր հարող ընկալմամբ։ Դրան նա հասնում է շնորհիվ իր մեծ վարպետության և նուրբ ճաշակի, գունային երանգապնակի ընտրության և օգտագործման։ Թորոս Տարոնացու մանրանկարները, շնորհիվ երանգների (տոնների) հմուտ և սահմանափակ օգտագործման և ոսկու հետ դրանց համատեղման, թողնում են հարուստ և խոր տպավորություն։ Դա նկարչի արվեստի առանձնահատկություններից մեկն է։ Թորոս Տարոնացու մանրանկարների լավ ընկալմանը նպաստում է նաև նրանց կոմպոզիցիան։ Սյուժետային տեսարանները

44 Տե՛ս նշված աշխատանքը, գիրք առաջին, «Ոգեբեր մինչև X դարը», Երևան, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակություն, 1944 թ., էջ 581։

նրա մոտ մտածված են, պարզ և զուսպ։ Նրա արվեստի լակոնիզմը (ավելի որոշակի արտահայտված սկզբնական շրջանի ստեղծագործություններում), գործող անձանց թիվը, այլ առարկաների տեղաբաշխումը՝ հասցված են պարզության։ Նկարչի այդ հատկությունը արտահայտվում է նույնիսկ այնպիսի դեպքերում, երբ նյութն ընդգրկում է մեծ թվով դեմքեր։ Ըստ որում չի կարելի ասել, թե մանրանկարները տուժում են դրանից։ Ընդհակառակը, իրենց կառուցվածքով նրանք հանդես են գալիս լիովին ամբողջական և ավարտված, ինչպես «Ոտնալվա»-ն, «Համբարձումն»-ը, «Մուաք Երուսաղեմ»-ը և այլ տեսարաններում։

Թորոս Տարոնացին պարզության է հասնում մանրանկարի ծայրային ֆիգուրաները կտրելու և շրջանակների մեջ առնելու ճանապարհով. այդ նկատելի է նաև այն դեպքում, երբ գործող անձինք այնքան էլ շատ չեն։ Այդ բանի շնորհիվ ձեռք է բերվում նաև որոշ խորություն, տարածականություն, օրինակ՝ «Երեքտակի երևումը յուղաբեր կանանց» «Ծնայի Նշեցու Ավետարան»-ից, «Ղազարոսի հարությունը» «Ծնայի Նշեցու Աստվածաշնչից», «Քրիստոս աշակերտների հետ» 1323 թվականի Ավետարանի մանրանկարները և այլն։

Թորոս Տարոնացու ստեղծագործությունները վկայում են այն մասին, որ հեղինակին ավելի շատ զբաղեցրել են սյուժետային մանրանկարները, քան այլ նկարագրդումները։ Սրա հետ միասին մանրանկարչի վարպետությունը ակնհայտ է դարձել հայկական դեռերով օժտված կերպարների վրա, որոնք ունեն ընդհանուր առմամբ կենդանի արտահայտություն։ Ազգային ավանդությունների մոտ լինելը, մանրանկարների ազգային առանձնահատկության հիմքն է, որի շնորհիվ էլ հայ մանրանկարչության այդ վարպետները ավելի մեծ ազդեցություն են գործել իրենց ժամանակի և հետագա հայ մանրանկարչական արվեստի վրա[45]։

Ավետարանական տոների շարքի սյուժետային մանրանկարներում Թորոս Տարոնացին հենվել է գլխավորապես բուն Հայաստանի ձեռագրերի նկարչական արվեստի ավանդությունների վրա, որը թխում է գլխավորապես Կապադովկիայի և Սիրիայի պատկերագրությունից։ Սրա հետ միասին պետք է ընդգծել, որ Թորոս Տարոնացու և Գլաձորյան դպրոցի այլ վարպետների ստեղծագործության վրա, ինչպես և այդ շրջանի ամբողջ հայ մանրանկարչության վրա, բյուզանդական արվեստը չի ունեցել որևէ ազդեցություն[46]։ Բայց դրա փոխարեն, ինչպես իրավացիորեն նշում է պրոֆ. Վ. Ն. Լազարևը, հայկական մանրանկարչության մեջ ներմուծվում են արևմտյան մոտիվներ, որոնց թվին պետք է դասել մի գամով «Քրիստոսի խաչելությունը» դոթական սխեմա[47], «Սակայն այդ արևմտյան ազդեցությամբ որոշված չէր փոխել արտահայտչական հիմքը, որը մնացել էր օրգանապես կապված արևելյան, հայկական-ազգային ավանդություններին»[48]։

Թորոս Տարոնացու ստեղծագործության մյուս առանձնահատկությունը նրա օրգանական կապն է Սյունիքի հետ։ Դա երևում է նկարչի հիմնական ակունքների վեր հանման ժամանակ։ Թորոս Տարոնացու մանրանկարները խոսում են այն մասին, որ նա լավ ծանոթ է եղել Սյունիքի ճարտարապետական կառուցվածքներին, խորաքանդակներին ու օրնամենտներին (օրինակ՝ շղթայով կապված երկու առյուծները կամ հուշկապարիկները, տիրամարգներ կամ այլ թռչուններ, կենդանիներ կամ բուսական մոտիվի օրնամենտներ)։ Ճարտարապետական կառուցվածքները, որոնք լայնորեն օգտագործված են նկարչի կողմից, դրեթե անխտիր տեղական, ազգային մոտիվներով են[49]։ Հատկապես ակնառու օրինակ կարող է ծառայել եկեղեցին 1318 թվականի «Ծնայի Նշեցու Աստվածաշնչի» «Քրիստոսի խաչելությունը» տեսարանում։ Նույնը կարելի է ասել ֆիգուրաների պատկերման առթիվ, որոնք լայն գործածություն են գտել Սյունիքի եկեղեցիների պատերի և շքամուտքերի վրա (օրինակ՝ Աստվածամոր պատկերումը Հիսուս մանկան հետ)։

---

45 Տե՛ս Սիրուվի Տեր-Ներսեսյան, «Հայասան և Բյուզանդական կայսրություն, համառոտ ուսումնասիրություն հայկական արվեստի և քաղաքակրթության», էջ 130։

46 Տե՛ս Վ. Ն. Лазарев, «История византийской живописи», Государственное издательство «Искусство», Москва, 1957 г., том I, стр. 250.

47 Նույն տեղում։

48 Նույն տեղում։

49 Բացառությամբ ամենավաղ շրջանի ձեռագրի՝ 1307 թվականի «Ծնայի Նշեցու Ավետարան»-ի ճարտարապետական կառուցվածքների, որոնց մեջ ծանոթ հենվել է Տյուբինգենի համալսարանի գրադարանի հայտնի Ավետարանի օրինակների վրա։

(Շարունակելի)

Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ

ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼՅԱՆ*

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Մակար Եկմալյանը ապրել է ստեղծագործական երեք շրջան։

Առաջինը ուման տարիների շրջանն է, երբ նա տիրապետում է նախ հայկական և ապա եվրոպական երաժշտական տեսության հիմունքներին ու կոմպոզիտորական ժամանակակից տեխնիկային։ Այս շրջանը ավարտվում է 1888 թվականին, նշանավորվելով «Վարդը» օպերա-կանտատայի հորինմամբ։

Եկմալյանի ստեղծագործական երկրորդ շրջանը ընդգրկում է 1888-ից 1896 թվականները։ Այս տարիներին կոմպոզիտորի ողջ գործունեությունը, երաժշտական դիտելիքների իր մեծ պաշարը հայկական ազգային երաժշտության զարգացման գործին ի սպաս դնելու հայրենասիրական ձգտումով է ղեկավարվում։ Եվ նա հասնում է պատմական հաջողություններ։ 1896 թվականին հրատարակելով տարիների աշխատանքի արդյունքը՝ «Երգեցողություն Ս. Պատարագ» մեծածավալ և արժեքավոր երկը։

Ներդաշնակության եվրոպական սկզբունքները հայկական ազգային երաժշտության առանձնահատկություններին պատշաճեցնելու Եկմալյանի ձգտումը ավելի ևս խորանում է նրա ստեղծագործական երրորդ՝ բայց դժբախտաբար կիսավարտ շրջանում։ Այս շրջանը ընդգրկում է 1896-ից 1902 թվականները և ընդհատվում ճակատագրական հիվանդությամբ, կոմպոզիտորի ստեղծագործական ուժերի ծաղկման տարիներին։ Սակայն մինչ այդ ինչ արել է Եկմալյանը ժողովրդական երգերի մշակման բնագավառում՝ պատմական նշանակություն ունի հայկական ազգային երաժշտության զարգացման տեսակետից։

Մենք սույն հոդվածով, պարբերական մամուլի սուղ էջերի ընձեռած հնարավորության սահմաններում, կանգ կառնենք Պատարագի, ինչպես նաև Եկմալյանի մի շարք այնպիսի ձեռագրերի վրա, որոնք կարող են դաղափար տալ հայկական ժողովրդական երգի մշակման բնագավառում նրա կատարած աշխատանքի մասին։

Եկմալյանի ստեղծագործական ժառանգության պսակն է կազմում նրա «Երգեցողություն Ս. Պատարագ»-ն, որի վրա նա աշխատել է երկար տարիներ։

Իր ընդհանուր կառուցվածքի մեջ հարազատորեն արտացոլելով հայոց պատարագի արարողության աստիճանական զարգացման ամբողջական ընթացքը, Եկմալյանի Պատարագը իրենից ներկայացնում է հետզհետե ծավալվող, լայնացող ու խորացող հոգևոր մի դրամա, որի «գործող անձինք»-ն են պատարագիչ քահանան, սարկավագն ու դպիրները, իրենց թիվ երգերով, ասերգներով, մեներգներով և խմբերգներով։ Առաջին իսկ հայացքից երևում է Եկմալյանի մշակման ու ներդաշնակության յուրահա-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1968 թվականի N N Բ—Գ-ից և Դ-ից։

տուկ աստիճանական զարգացման առկայությունը։ Այդ ընորոշ գիծը սկիզբ է առնում «Խորհուրդ խորին»-ի պարզ, անպաճուճ մշակումից, հասնելու համար մինչև «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»-ի, «Սուրբ Սուրբ»-ի և «Քրիստոս պատարագեալ»-ի վսեմ, ավարտված ներդաշնակության։

Եկմալյանի Պատարագը, հոգևոր դրամատ (տեքստ) բնական զարգացման ենթարկված իր ընդհանուր ձևով հանդերձ, ունի իր զուտ երաժշտական յուրահատուկ կառուցվածքը։ Այն բաղկացած է երեք մասից՝ ձայնային, լադա-տոնայնական և թեմատիկ ընդհանրությամբ շաղկապված ասերգների, մեղեդիների և խմբերգների երեք մեծ խմբավորումներից, որոնցից ամեն մեկը հանդես է գալիս իրեն հատուկ երաժշտական դերով։

Պատարագի առաջին մասը միավորում է երեք խմբերգ և մեկ մեներգ (տե՛ս էջ 1—20). գրված է եռամասային ձևով (խմբերգ-մեներգ-խմբերգ)։ Ակնբախ են Պատարագի առաջին մասի երեք հատվածների թեմատիկ և լադա-տոնայնական մոտիկությունն ու ընդհանրությունը։ Առաջին մասը մի մեծ սկիզբ կամ «մուտք» է։

Երկրորդ մասը կարելի է դիտել որպես ազատ գրված մեծ մասշտաբի յուրատեսակ ռոնդո, որը միավորում է բազմաթիվ ասերգներ, մեներգներ ու խմբերգներ (էջ 20—55)։ Որպես ռոնդոյի «հիմնական թեմա և ամեն մի նոր «էպիզոդ»-ից հետո ռիթմիկ և ինտոնացիոն տեսակետից այս կամ այն չափով փոփոխված «կրկներգ»-ներ (առնֆրենն-ներ) են ընկալվում մի շարք ըստ էության տարբեր, բայց մեծ առնչություն ունեցող խմբերգներ։ Դրանք են՝ «Սուրբ Աստուած» (էջ 21), «Գիշեր Տէր» (էջ 22), «Կեցո Տէր» (էջ 25), «Մարմին տէրունական» (էջ 27), համար 10, 11, 12, 15 սրբասացությունների խմբերգային մասերը, որոնք հատուկ են օրվան և վերջապես՝ «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»-ը (էջ 52)։ Վերջինս, սերտ առնչության մեջ գտնվելով «Սուրբ Աստուած» երգի հետ, «շրջանակումն» է ամբողջ երկրորդ մասը և երաժշտության ծավալման ընթացքում կրկներգների ապրած իսկական զարգացման դգաքինակետն է հանդիսանում։ Դրանից հետո հնչող երաժշտությունը (էջ 54—55) մի տեսակ եզրափակիչ հավելված է։ Երկրորդ կամ միջին մասի հիմնական տոնայնությունը F dur հարմոնիկն է (իջեցրած 6-րդ աստիճանով)։ Այստեղ զոդող դեր են կատարում նաև կադանսային պլակալ միանման բանաձևերը, որոնք տիրապետում են ամբողջ մասում։

Ավելի մեծ ու ավելի ազատորեն մտահղացված կառուցվածք ունի Պատարագի մեղեդիների և խմբերգների երրորդ և վերջին խմբավորումը՝ «Սուրբ Սուրբ»-ից մինչև վերջ (էջ 56—96)։ Այս մասի երաժշտական հիմնական կերպարը («Սուրբ Սուրբ») մի քանի անգամ կրկնվելով (տե՛ս «Ամէն։ Հայր երկնաւոր»՝ էջ 58, «Առաջի քո, Տէր»՝ էջ 62 և այլն) ավարտվում է «Քրիստոս պատարագեալ»-ով։ Սա նույնպես գագաթնակետային մոմենտ է, գրված ֆինալային հիանալի զգացությամբ։ Կադանսային բանաձևերը հիմնականում միանման և մեծ մասամբ վերական, այստեղ էլ «զոդող» նշանակություն ունեն։ Շաղկապող, միահյուսող դեր են կատարում նաև մեղեդիական աչքի ընկնող մի քանի դարձվածքներ։ «Սուրբ Սուրբ»-ին անմիջապես հաջորդող և փաստորեն նրան կցված մեղեդիական դարձվածքը օրինակ, այլևայլ փոփոխություններով և տարբերակներով (սեղմ, ընդլայնված և այլն), հանդես է գալիս Պատարագի երրորդ մասի հետևյալ տեղերում. «Սուրբ Սուրբ»-ից մասի հետո, էջ 58, տող 1, «Հայր մեր»-ի սկզբում՝ էջ 74, «Քրիստոս պատարագեալ»-ի սկզբում՝ էջ 87, «Լցաք»-ի սկզբում՝ էջ 91, «Գոհանամք»-ի սկզբում՝ էջ 93 և «Ամեն։ Եղիցի անուն Տեառն օրհնեալ»-ի սկզբում՝ էջ 94. մի խոսքով, այն տեղերում, երբ պետք է զգացվել ավելի ցայտուն և զգալի դարձնել երաժշտական հիմնական կերպարի հանդես գալը։

«Պատարագ»-ի երաժշտության ծավալման ընթացքում մեղեդիական փոքր դարձվածքների որպես «զոդող» ազդակներ հանդես գալը շատ է հիշեցնում մեծ կտավի սաեղծագործություններին հատուկ լեյտմոտիվային զարգացման սկզբունքը։

Նույն այս սկզբունքով են իրար հետ շաղկապվում և զոդվում նաև Պատարագի առաջին և վերջին մասերը ամբողջությամբ վերցրած։ Կանգ առնենք երկու օրինակի վրա. «Փառք քեզ Տէր», «Ամէն», «Օրհնեալ է Աստուած» և նման կարճ արտահայտությունների համար Եկմալյանը մի շարք տեղերում կիրառել է I—V—I հարմոնիկ բանաձևը, հիմնական տոնի մելոդիկ դրությամբ։ Այն առաջին անգամ հանդես գալով Պատարագի երկրորդ մասի սկզբում (տե՛ս էջ 24, տող 2, հատած 1—2), անցնում է նաև երկրորդին (էջ 69, տող 3, էջ 93, տող 1, էջ 94, տող 2), որով ինտոնացիոն կամար է դրվում Բ և Գ մասերի միջև։ Այնուհետև, Պատարագի երկրորդ մասը սկսվում է սարկավագի «Օրհնեա Տէր»-ով (էջ 20). մեղեդիական նույն դարձվածքը (միայն d-ով, փոխանակ des-ի) հընչում է «Բարեխօսութեամբ»-ի վերջում (էջ 17, տող 3, հատած 4—5), այսինքն առաջին մասում. սրանով բնականորեն կապվում են Ա և Բ մասերը։

Այսպիսով, Եկմալյանի Պատարագը, հոգևոր տեքստի ընթացքին հետևելով հանդերձ, որպես երաժշտական ամբողջություն

աշքի է ընկնում իր յուրահատուկ կառուցվածքով։ Մի բան, որն ինքնըստինքյան ենթադրում է երգերի որոշակի կապակցություն և դասավորություն։ Այս է անշուշտ նկատի ունեցել Կոմիտաս վարդապետը, երբ խոսելով Եկմալյանի Պատարագի մասին, գրել է. «Դասավորությունը շատ ճիշտ և հարմար է»։

Երգերի կապակցության խնդիրը ըստ էության շոշափում է Պատարագում կիրառված մոդուլացիաների հարցը։ Մինչև այժմ էլ մեր շատ եկեղեցիներում երգիչները պատարագի արարողությունը կատարում են (միաձայն թե բազմաձայն) առանց գործիքային նվագակցության։ Եկմալյանը հայկական հոգևոր երգերը ներդաշնակելիս և դասավորելիս աշխատել է հարմարվել այդ պայմաններին։ Այնուամենայնիվ Պատարագի երաժշտության մոդուլացիոն շեղումներն ու անցումները բավականին հետաքրքիր մի պատկեր են ներկայացնում։

Մոդուլացիաներով (մանավանդ ձայնային) առանձնապես հարուստ են միայնակ (սոլո) երգեցողության համար ձայնառությամբ գրված մեղեդիները։ Իսկ ներդաշնակված երգերը (առանձին վերցրած) ծավալվում են գլխավորապես իրենց հիմնական տոնայնության և լադի սահմաններում, բայց ոչ միշտ։

Պատարագը ներդաշնակված է երեք տեսակ. եռաձայն արական խմբի համար, քառաձայն արական խմբի համար և քառաձայն խառն խմբի համար։ Վերջին երկուսը կազմված են առաջի ոճով, այնպես որ հիմքը եռաձայն արական խմբի համար գրվածն է։ Եկմալյանը այս կրկնակի, եռակի աշխատանքը հանձն է առել պատարագի երգեցողությունը զանազան տեղերում հեշտ դարձնելու և տեղական պայմաններին հարմարեցնելու ազնիվ մտահոգությամբ։

Եկմալյանը օրինավոր զգուշություն է հանդես բերել Պատարագը ներդաշնակելիս։ Նա գիտակցաբար խուսափել է իր տիրապետած երաժշտական արտահայտչական բոլոր միջոցները հայ երաժշտության մեջ մեքենաբար ներմուծելուց, բավականանալով նրանցով միայն, որոնց կիրառումը անխաթար կպահեր մայր եղանակների ոճն ու ոգին։ Նշելով սրանից, կոմպոզիտորը առաջին հերթին առանձնացրել է միայն երգեցողության համար նախատեսված, ազգային երաժշտության լադային-ինտոնացիոն և մետրո-ռիթմիկ առանձնահատկությունները լուսավել վառ արտացոլող այն մեղեդիները, որոնք գեղարվեստական կերպարի հետագա խորացման ու ամբողջացման տեսակետից կարող էին բավարարվել ներդաշնակության ամենապարզ միջոցով՝ ձայնառությամբ։ Սրանց մայր եղանակը կատարում է մեներգիչ տենորը. ձայնառություն են պահում երկու կամ երեք ձայն, հնգյակ, կամ հնգյակ և ությակ ձայնամիջոցով։ Վերջիններիս դերն է՝ երևան հանել և ընդգծել մայր եղանակի լադային-տոնայնական գլխավոր և օժանդակ կարևորագույն ոլորտները։ Ձայնառությունը Եկմալյանը առհասարակ օգտագործում է մեծ վարպետությամբ, հաճախ դրանց ճոխացնելով՝ բացի անցիկ ձայներից, նաև մեղեդիական և կադանսային դարձվածքներով, որով ստեղծվում են բուն ներդաշնակության մոտեցող մոմենտներ։ Կոմիտաս վարդապետը խոսելով Եկմալյանի Պատարագում կիրառված ձայնառության մասին, քննադատում է միայն «Մեկ մեղեդու՝ ah կոյս վիմէնս-ի (էջ 244—249) սխալ պահված fis-cis հնգյակը։ Իսկ նրա այն դիտողության մասին, թե ձայնառությամբ գրված մի շարք մեղեդիներում կան հնգյակի և ութնյակի կուզընթաց հաջորդություններ (տե՛ս էջ 28, 245 և այլն), պետք է ասել, որ Եկմալյանի մոտ դրանք բոլոր դեպքերում ստացվել են երաժշտական նախորդ և հաջորդ նախադասությունների միջև. մի բան, որ թույլատրվում է հարմոնիայի նույնիսկ դպրոցական խնդիրներում։ Ըստ էության այդ զգուշությունն է, որ Երևան գալիս է նաև եռաձայն և քառաձայն գրված երգերի մեջ՝ նրանց ներդաշնակության ամենաբնորոշ կողմի՝ պարզության մեջ։

«Մարդ միանգամայն պարմանում է,— գրում է իր հոդվածներից մեկում Ռ. Ղորղանյանը, արտահայտվելով այս մասին,— թե ինչպե՞ս հեղինակը շատ ու շատ տեղեր կարողացել է խուսափել Եվրոպական երաժշտությանը վերին աստիճանի հրապուրիչ գեղեցկություններից»։

Հիրավի, զարմանալի է ոչ թե ներդաշնակության պարզությունը ինքնին, այլ այն, թե ինչպե՞ս է Պատարագի հեղինակը շատ ու շատ տեղեր, արտահայտչական նվազագույն միջոցներով, հասել գեղարվեստական ներգործության առավելագույն չափին։ Եթե վերցնենք, օրինակ, «Սուրբ Սուրբ»-ի առաջին նախադասությունը (էջ 56), քննելու համար, թե ինչպիսի՞ միջոցներով է խորացված նրա յայնարձակ մայր եղանակի գեղարվեստական կերպարը, ապա կտեսնենք, որ այդ երկնային մեղեդու տակից սողոսկող

4 Այս և բոլոր դեպքերում մեջբերումները կատարված են Կոմիտաս վարդապետի «Երգեցողությունք Ս. Պատարագի քնարական հայտնի հոդվածից (տե՛ս Կոմիտաս, «Հոդվածներ և ուսումնասիրություններ», Երևան, 1941 թ., էջ 137—152, կամ «Ներարատ», էջմիածին, 1898 թ., էջ 111—117։

բասային սարսռացուցիչ շարժումը, դրամատիկմով լի իր ահեղ հնչողությամբ ուրիշ բան չէ, եթե ոչ մեկ ծանոթ, շատ անգամներ հանդիպած և նույնիսկ կիրառած I VI II V 16 VI6 II6 V I բանաձևը։ Եթե դիտենք «Փառք քեզ Տէր»-ին (էջ 24), հասկանալու համար, թե ներդաշնակության ինչպիսի՞ «հնարագիտությամբ» է ձեռք ընդունած նրա փայլուն, շքեղ ու լիաշունչ հընչողությունը, մենք կատանանք ակկորդների վերը բերվածից էլ ավելի պարզ ու հասարակ մի հաջորդականություն։ Այս երևույթը դասական արվեստի մեծ ու խորհրդավոր գաղտնիքներից մեկն է անկասկած, որն իր բնական արտահայտությունն է գտել նաև Եկմալյանի Պատարագում։

Եկմալյանը պատարագում կիրառել է ներդաշնակության մի հիմնական սկզբունք՝ ակկորդների ուղղահայաց հաջորդականության սկզբունքը, միևնույն ժամանակ հատուկ ուշադրություն դարձնելով նաև առանձին ձայնների (տենոր, բաս) մեղեդիական ինքնուրույն զարգացման վրա։ Նա ստիպված է եղել հայկական եկեղեցական երգերը դիտել որպես եվրոպական dur և moll ձևերին այս կամ այն չափով մոտեցող, այդ ձևերը այս կամ այն չափով հիշեցնող, բայց ըստ ամենայնի լուսային ազգային կառուցվածքներ։ Այնպես որ այնտեղ կարելի է հանդիպել եվրոպական ներդաշնակության սովորական նորմաներից շեղվող և հայկական երգերի ձայնային առանձնահատկությունների հետ կապված մի շարք բնորոշ մոմենտների։ Դրանցից են VII բնական աստիճանի (ակորդի), մինոր դոմինանտայի, որպես dur ներդաշնակված երգերում մինոր սուբդոմինանտայի և ընդհակառակը՝ որպես moll ներդաշնակվածներում՝ մաժոր սուբդոմինանտայի օգտագործումը և այլն։

Վերջին հարցը, որին հարկ է անդրադառնալ Եկմալյանի Պատարագի կապակցությամբ, մեղեդիների ընտրության և փոփոխության (եվրոպական խաղերի և չափերի) կարևոր խնդիրն է, որովհետև, ինչպես նշում է Կոմիտաս վարդապետը, «մեր եկեղեցական երգեցողության մեջ խիստ փոփոխման է ենթարկվել մանավանդ պատարագի արարողությունը»։

Ինչ վերաբերում է մեղեդիների ընտրության, Եկմալյանը հիմնվել է սուրբ պատարագի արարողության էջմիածնի առաջին (1874 թ.) և երկրորդ (1878 թ.) ապագրությունների վրա։ Մի հանգամանք, որին իր հավանությունն է տվել նաև Կոմիտաս վարդապետը։

Իսկ երգերի փոխադրության, անհրաժեշտ բարեփոխությունների և խմբավորման հարցում Եկմալյանը նկատի է ունեցել նախ հայկական երաժշտության օրինաչափությունները, ապա և երաժշտական մի շարք ընդհանուր օրենքները։ Եղանակները հատածների բաժանելիս նա ղեկավարվել է հայկական ժողովրդական և եկեղեցական երգերին հատուկ մեղեդիական բնորոշ դարձվածքների, տարածության վրա մեղրիկ տեղաշարժերով կրկնվելու յուրահատկությունից (նման երևույթի կարելի է հանդիպել Պատարագի շատ տեղերում. տե՛ս «Գովեա երուսաղէմ», էջ 254—256)։ Փոխադրության ժամանակ երգերի ամանակը բարեփոխելիս, Եկմալյանը աշխատել է հարմար տեղում դրանց ռիթմը քիչ աշխուժացնել («Տոր-հուրդ խորին», էջ 1—7), և կամ՝ կատարումը պարզեցնել, հեշտացնել («Ցայս յարկ», էջ 8—14) և այլն։

Եղանակների փոխադրության հարցում Եկմալյանը թույլ է տվել նաև թերություններ, որոնցից գլխավորներն են՝ մի շարք դեպքերում հայկական երաժշտության հատուկ քառյակային սիստեմից շեղվելն ու երգերը հատածների բաժանելիս՝ հայոց քնդի շեշտադրության և տաղաչափության հիմունքները հաշվի չառնելը։ Կոմիտաս վարդապետը այս մասին արել է բազմաթիվ ուսանելի դիտողություններ։ Սակայն նման մասնակի թերություններ ոչ մի կերպ չեն կարող նսեմացնել Պատարագի՝ որպես մեծ ու ամբողջական ստեղծագործության գեղարվեստական բարձր արժանիքները, ինչպես նաև ազգային երաժշտության տեսակետից նրա հարստությունը։

Եկմալյանը իր այս մեծածավալ երկով հայ իրականության մեջ հանդես եկավ որպես լայն կտավի ստեղծագործությունների ստրուկտուր-կոմպոզիցիոն յուրահատկություններին դիտակ, եվրոպական ներդաշնակության և հատկապես հոմոֆոն բազմաձայնության սկզբունքները հայ երաժշտության մեջ փայլուն կերպով կիրառելու ընդունակ, ինչպես նաև մարդկային ձայնի կատարողական հնարավորությունների և առհասարակ նրպչամբրային դրության ձևի վարպետ։

Խոսելով հայկական ժողովրդական երգերի մշակման բնագավառում Եկմալյանի կատարած աշխատանքների մասին, պետք է ասել, որ նա դեռևս Պետերբուրգի կոնսերվատորիայում սովորելու ժամանակ, մշակել ու ներդաշնակել է Ղազար քահանա Հովսեփյանի կազմած «Քնարիկ մանկական»-ը, որի մեջ տեղ էին գտել նաև հայկական ժողովրդական երգեր։ «Ներդաշնակողի կողմից» գրված փոքրիկ առաջաբանում կարդում ենք. «Ներողություն ենք խնդրում հմուտ մասնագետներից և արժանապատիվ հեղինակից

թե՛ այն թերությունների համար, որոնք կարող են գտնվել մեր ներդաշնակության և երգերի ձևին մեջ, թե՛ այն փոփոխություններին համար, որ արել ենք բուն եղանակների մեջ։ Այդ եղանակները մասամբ հավաքված լինելով ժողովրդի բերանից՝ շատ անգամ զուրկ էին երաժշտության տարրական օրենքների պահանջած պայմաններից, որով և անհնար էր նոցա համար կազմել կանոնավոր ներդաշնակություն[5]։

Հանգուցյալ երաժշտագետ Ալ. Շանվիրդյանը, «Հայ երաժշտության պատմության ակնարկներ»[6] աշխատության մեջ, Եկմալյանի մասին խոսելիս, վկայակոչելով երիտասարդ կոմպոզիտորի սույն տողերը, հարցնում է. «Հետագայում Եկմալյանը վերանայե՞լ է արդյոք իր այս համոզումը, ձերբազատվելով նման նախապաշարումներից»։

Բայց Եկմալյանը իսկապես ունեցե՞լ է արդյոք նախապաշարումներ ժողովրդական երգերի նկատմամբ։ «Քնարիկ մանկականում» պարունակված ամենաայլի ընկնող ժողովրդական երգը «Այծեմանիկ և որսկանս» հանրահայտ երգն է։ Վերջինիս մշակումը ցույց է տալիս, որ Եկմալյանը ոչ մի այնպիսի փոփոխություն չի կատարել, որը, ասենք, փոփոխեր եղանակի ժողովրդական բնույթը։ Ընդհակառակը, երգի եղանակը, Եկմալյանի մշակմամբ, ավելի հարազատ, ավելի հայկական է, քան այն, ինչ այժմ կատարվում է։ Երգի ներդաշնակությունն էլ պատշաճեցված է նրա ոգեղային առանձնահատկություններին. պահպանված է եղանակի լաղային տոնիկան, երգի սկզբում հանդես եկող es-ը Եկմալյանը դիտում է որպես G dur-ի իջեցված 6-րդ աստիճանը. այնուհետև եղանակի հետ միասին ներդաշնակությունն էլ անցնում է e ձայնաստիճանին և այլն։

Եկմալյանից մեզ հասած ձեռագրերը խոսում են այն մասին, որ կոմպոզիտորը հիանալի կերպով հասկանում էր հայկական ժողովրդական երգերի կառուցվածքը և դրանք մշակելիս ու ներդաշնակելիս նա ելնում էր այդ երգերի բնորոշ առանձնահատկություններից։ Մի վառ օրինակ է այս տեսակետից «Սորոցային» խորագիրը կրող երգի մշակման սեռագրությունը։

Հայկական ժողովրդական երգերի մշակման բնագավառում Եկմալյանը ոչ մի կողմից շարունակում է կիրառել ավկորդների ուղղահայաց հաջորդականության սկզբունքը, ապա մյուս կողմից նա աշխատում է որոնել և գտնել ներդաշնակության այնպիսի ձևեր, որոնք մայր եղանակին ընկերակցող խմբի մյուս ձայներին համեմատաբար ավելի անկաշկանդ ծավալվելու և կամ պարզապես գեղարվեստական ամբողջական կերպարի ստեղծման մեջ ինքնուրույն դեր խաղալու հնարավորություն կտային։ «Քնարիկ մանկականում» էջմիածին կամ «Նանու դարդերս երգը», օրինակ, կոմպոզիտորը աշխատել է մշակել քիչ ազատ ներդաշնակության միջոցով։ Այն գրված է երեք տարբերակներով, որոնցից ամենահաջողը սոպրանո մենակատարի և քառաձայն խմբի համար դաշնամուրի նվագակցությամբ մշակվածն է։ Զգացվում է, որ Եկմալյանը ձգտել է համերգային յուրահատուկ փայլ տալ գեղջկական այս անպաճույճ երգին։ Դաշնամուրային կարճ ամուսքը-ից հետո, որը կարծես ուրվագծում է երաժշտական հիմնական կերպարի գլխավոր գծերը և հաստատում տոնայնությունը, սկսում է մենակատարը. հանկերգին նրան միանում է նաև խումբը, որով ստեղծվում են սոլոյո-ի և ստուտիտ-ի գունեղ համադրություններ։ Ներդաշնակության տեսակետից վերը նշված համեմատական ազատությունը-ը կայանում է նրանում, որ այստեղ, ֆունկցիոնալ հարմոնիայի կիրառման սահմաններում, մայր եղանակին ընկերակցող ձայները ռիթմիկ զգալի ինքնուրույնություն ունեն։ Ըստ երևույթին, ավորդների ուղղահայաց հաջորդականության սկզբունքի կիրառումից ազատվելու համար, զգուշավոր Եկմալյանը, ֆունկցիոնալ հարմոնիայի սահմաններում խմբի առանձին ձայներին ռիթմիկ որոշ ինքնուրույնություն տալու ճանապարհներ էր որոնում։ Այս տեսանկյունից որոշակի արժեք են ստանում նաև «Բոյրդ բարձրս և «Անձրևն եկավ շաղալենս» երգերի մշակման սեռագրությունները։ Երկուսն էլ ներդաշնակված են քառաձայն։ Երկուսի մեջ էլ բասը, մնալով տեղում՝ ձայնաուղություն է պահում։ Իսկ միջին ձայների ռիթմիկ բնորոշ կողմը՝ սինկոպներն են։ Ներդաշնակության թեթևորեն խաղուն այս ընդհանուր ֆոնի վրա մայր եղանակները կարծես որպես յուրահատուկ արատելյեֆ-ներ են հնչում։

Հայկական ժողովրդական երգի մշակման բնագավառում կատարված Եկմալյանի ստեղծագործական որոնումների մեջ ներդաշնակության Կոմիտասյան այս կամ այն սկզբունքի թեկուզ փոքրիկ, դժվար նկատելի, սակայն այնուամենայնիվ ըստ էության ոչ պատահականորեն տեղ գտած առկայությունները հաստատող ավելի շոշափելի մի

---

5 Տե՛ս «Քնարիկ մանկական», երգեր, պարերգեր և ոգեքներ փոքրահասակ մանուկների համար. Ձայնագրեց Ղազար բահանա Հովսեփյան, Ս. Պետերբուրգ, 1887 թ.։

6 Ձեռագիր, պատրաստվում է տպագրության։

օրինակ ևս կա։ Մակար Եկմալյանը իր ձայնագրած ժողովրդական երգերից և պարզունակներից մի քանիսը մշակել է դաշնամուրի համար։ Այս երևույթը ինքնին արդեն մի հետաքրքիր փաստ է, քանի որ դա հայկական դորիֆրիգիական-կամերային երաժշտության մեջ ժողովրդական երգի օգտագործման առաջին փորձն է ներկայացնում իրենից։ Մեկ թվում է, թե կոմպոզիտորը աշխատել է վերարտադրել ժողովրդական գործիքային անսամբլների մեկի ճեչողությունը. ասենք հրկու պուզակ երկու նայ (որոնցից մեկը եղանակն է տանում, մյուսը՝ ձայնառություն է պահում) և դաֆ։ Նույնպիսի ձգտումով չի՞ ղեկավարվել նաև Կոմիտաս վարդապետը ժողովրդական եղանակները դաշնամուրի համար մշակելիս։ Կոմիտաս վարդապետը մի շարք պարերի վերնագրերի տակ ուղղակի գրում է. «գոռի և թմբուկի ոճով, «թառի և դափի ոճով և այլն։

Եկմալյանը ոչ միայն նախապաշարված չի եղել ժողովրդական երգի հանդեպ, այլ ընդհակառակը, այն մշակելիս և ներդաշնակելիս աշխատել է ելնել նույն այդ ժողովրդական երգի ազգային առանձնահատկություններից։ Մեր երաժշտության նախակոմիտասյան շրջանը ապրել է գեղջուկ երգի մշակման սկզբունքների նախնական բյուրեղացման մի շրջան, անցնելով երկու էտապից՝ Կարա-Մուրզա և Եկմալյան։

Եկմալյանի ձեռագրերում կարելի է հանդիպել նաև հայկական աշուղական, կամ աշուղական տիպի՝ քաղաքային երգերի մշակման (մեներգի համար, դաշնամուրի նվագակցությամբ)։ Դրանցից «Պաղ աղբյուրի մոտին»[7] երգը, որն իր չափով, անմիջական հուզականությամբ և կատարելության հասած մշակմամբ մինչև այժմ էլ պահում է իր ամբողջ թարմությունն ու գեղարվեստական արժեքը, պետք է դիտել որպես հայկական ազգային ռոմանսի ստեղծման փորձերից մեկը։

Ավարտելով հայկական երաժշտության պրոֆեսիոնալ առաջին մշակներից մեկի կյանքի և ստեղծագործական ուղու ուսումնասիրության նվիրված մեր այս փորձը, պետք է ասենք, որ Եկմալյանի ստեղծագործական գործունեությունը ունեցել է նաև որոշ հակասություններ։ Բայց դրանք ոչ մի դեպքում չեն կարող նսեմացնել ականավոր կոմպոզիտորի հայ ժողովրդին մատուցած խոշոր ծառայության նշանակությունը։ Ինչպես գրում է երաժշտագետ Ալ. Թադևոսյանը՝ «Թեպետև Եկմալյանի երաժշտական ստեղծագործական գործունեությունը զերծ չի եղել հակասություններից, այնուամենայնիվ հայկական երաժշտական արվեստի զարգացման գործին մատուցած նրա նշանակալից ծառայությունները մեզ իրավունք են տալիս սիրով և երախտագիտությամբ խոսել անվանի կոմպոզիտորի մասին»[8]։ Արդարև, Հայաստանի երաժշտագետներն ու երաժշտական գործիչները ավելի ու ավելի մեծ սիրով և երախտագիտության զգացմունքով են իրենց ուշադրությունը կենտրոնացնում Եկմալյանի երաժշտական գործունեության և ստեղծագործական ժառանգության ամբողջության խնդրի վրա։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտում լուրջ աշխատանքներ են տարվում Եկմալյանի ձեռագրերի կարգավորման ուղղությամբ։ Վերջերս Հայաստանի Պետական երգչախումբը կատարեց Եկմալյանի Պատարագից մասեր, Երևանի ռադիոն հաղորդում է նաև նրա դաշնամուրային «Նոկտյուրն»-ը, «Չեմ կըրնա խաղա» և «Պստի տղա» պիեսները, «Լեռնական...» (խոսք՝ Ռ. Պատկանյանի), «Ոչ փոր պարկինք» (խոսք՝ Մ. Պաշինեանցի) նվերը և այլն։ Հույս ունենք, որ մի գեղեցիկ օր էլ կհրատարակվեն Եկմալյանի կարգավորված ձեռագրերը, ուսումնասիրությամբ հանդերձ։

Մեր այս ուսումնասիրության վերջում նպատակահարմար ենք համարում Եկմալյանի ձայնագրած, մշակած և ներդաշնակած երգերի, ինչպես նաև առհասարակ նրա երգերի այբբենական ցանկը տալ, օգտվելով Հայկական նախասովետական պարբերական մամուլից (այս դեպքում մի քանի երգերի միայն անունները են հայտնի) և կոմպոզիտորի արխիվից (այսանկից վերցրել ենք նաև միայն ձայնագրված երգեր կամ մշակված սեպագրություններ).

1) «Ապնիվ ընկեր»
2) «Ահա ծագեց կարմիր արև»
3) «Այսօր վերստին նորոգեալ»
4) «Անձրևն եկավ շաղապնոն»
5) «Անոյշ ձայն ունես քնարս»
6) «Աշխարհ ամենայնս (Շնորհալի), (տե՛ս «Գեղարվեստ», 1911 թ., № 4, էջ 235)
7) «Ապրե դու Ներսես»
8) «Առավոտյան քաղցր և անուշ հովերս»
9) «Բազեր տվեք կանաչեցեք»
10) «Բերդից դուրս եկան»

7 Մ. Եկմալյանի մշակած «Պաղ աղբյուրի մոտին» երգի եղանակը սխալմամբ է, որ մտել է աշուղ Ջիվանու երգերի ժողովածուի մեջ։

8 Ալ. Թադևոսյան. «Մակար Եկմալյան», տե՛ս «Սովետական Հայաստան», 1956 թ. փետրվար, № 29, էջ 3։

11) «Թլբուկն Ավարայրի» (խոսք՝ Հ. Ղ. Ալիշանի), (տե՛ս «Թատրոն», Թիֆլիս, 1899 թ., № 2, էջ 28)
12) «Թոյլդ բարձր»
13) «Գացի արտեր բռնի լոր»
14) «երբ որ բացվին»
15) «երգ առանց խոսքի» (դաշնամուր)
16) «երգեցողութիւնք Ս. Պատարագի», Լայպցիգ, 1896 թ.
17) «Զոմա Զոմա» («Զինչ ու զինչ տամ»)
18) «Լորիկ»
19) «Լուսնյակ դիշեր հովն անուշ»
20) «Լռեց։ Ամպերը եկան...» (խոսք՝ Ռ. Պատկանյանի)
21) «Կապույտ Երկնքում»
22) «Կեցցե Զեյթուն»
23) «Կոլոտ էր խորոտ էր»
24) «Համբստ աղջիկ»
25) «Հերիք որդյակք»
26) «Հոգիդ Աստուած, աղբիւր շնորհաց»
27) «Հով արեք սարեր քան»
28) «Հրաշափառ Աստուածն»
29) «Ձայներ հնչեց Էրզրումեն»
30) «Մայիսյան վարդ»
31) «Մեր ազգ հալածվածն»
32) «Նոկայուրն» (տպ. 1892, Թիֆլիս)
33) «Նստեր ես»
34) «Շարական Վարդանանց» (տե՛ս Դեղարվեստ», 1909 թ., № 3, էջ 176)
35) «Շորորա սալաթ»
36) «Ոլոր մոլոր Կուրն էր գալիս»
37) «Ողջույն տվեք»
38) «Ոչ փող դարկինք» (խոսք՝ Մ. Պիշիկ-Թաշլյանի)
39) «Ով դու բարեկամ» (խոսք՝ Հ. Ղ. Ալիշանի)
40) «Ով Երանելիդ ամենեցուն»
41) «Ով հայոց Աստուածն»
42) «Ցեմ կրնա խաղալ» (դաշնամուր)
43) «Պաղ աղբյուրի մոտին»
44) «Պստի տղա» (դաշնամուր)
45) «Քան գյուլում»
46) «Ռոմանս» (Հայնեի խոսքերի վրա)
47) «Սիոնի որդիք»
48) «Սիրուհիս քեզ համար» (խոսք՝ ժողովրդական)
49) «Վարդը» (օպերա-կանտատա)
50) «Վարդ կոշիկս»
51) «Տէր, կեցո՛ Դու զՀայս»
52) «Քաջեր, դուք կանչեցեք»
53) «Քեզի մեռնեմ էջմիածին»
54) «Քելե քելե խորոտ աղջիկ»
55) «Օրորոցային երգ»[8]

8 Այս ցանկը, որը պարունակում է Մ. Եկմալյանի հորինած կամ ձայնագրած և մշակած հայկական հոգևոր, ազգային-հայրենասիրական, ժողովրդական, քաղաքային և աշուղական մեջ հայտնի երգերը, բնականաբար կարող է լինել թերի և պակասավոր։ Այնուամենայնիվ, դա մի որոշ գաղափար կտա ընթերցողներին՝ Եկմալյանի ստեղծագործական ժառանգության մասին։

Մ. Հ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԱՂԸ ԹՐԱԿԻԱՅՈՒՄ

Յուսիսային Հունաստանի և մասնավորապես Թրակիայի հույների մոտ մատաղի սովորությունը յուրահատուկ է և հետաքրքրական։ Մատաղի սովորությունը օտար է դասական Հունաստանի կրապաշտական ծիսական սովորություններին, ինչպես և քրիստոնյա Հունաստանի ավանդություններին։ Շատ հավանաբար օտարամուտ այդ սովորությունը հույները վերցրել են հայերից։

Սույն հոդվածով այդ հարցը քննության ենք առնելու։

Այլոնտոտ զոհի կամ պատարագի սովորությունը համարյա գոյություն չի ունեցել քրիստոնյա Հունաստանում, բացի Զատկի գառնազեղումից։ Իսկ շինությունների հիմնարկության առթիվ մորթվող գառնուկը կամ աքլորը սնոտիապաշտական հավատի՝ այսինքն ոգիներից շենքը ամուր դարձնելու խնդրանքի և մաղթանքի՝ սովորության շարունակությունն է։ Սա ո՛չ մի նմանության նկր չունի մատաղի այն սովորության հետ, որ նոր Հունաստանի որոշ շրջանում գործադրվում է։

Թրակիայի հյուսիս-արևելյան շրջաններում, հունական և բուլղարական գյուղերում[1] նաստարակաղ մատաղներ են անում զվարակներով։ Փոքր Հեմոս լեռան արևելյան կողմերը գոյություն ունի բյուզանդական շրջանից Այիոս Իլիասի (Ս. Եղիայի) վանքը, ուր ամեն տարի հուլիսի 20-ին, այդ սրբի տոնին, մատաղ են անում գյուղացիները։ Ս. Եղիա Մարգարեի տոնին զենում են զվարակներ, գյուղի կամ ավանի բնակչության թվի համեմատությամբ։

Ըստ կանոնի՝ մատաղացու զվարակը պետք է լինի 2—5 տարեկան, սպիտակ, բացարձակապես առողջ և լծի չկապված։

Մատաղացուն բերում կապում են գյուղի հրապարակում, մի տարեց ծառից։ Քահանան օրհնում է մատաղացուն և մի ամանի մեջ դրված աղը։ Մատաղացու կենդանու եղջյուրների վրա զետեղում են վառված մոմեր, զարդարում են կարմիր շղարշով կամ ժապավեններով։ Մի խեցու վրա վառում են խունկ և խնկարկում անասունին։ Ծառի մոտ փորում են մի փոս։ Ամուր կապում են մատաղացու կենդանու ոտները, պառկեցնում են փոսի մոտ, աջ կողի վրա և գլուխը արևելք դարձրած։ Մորթողը, որը անպայման պետք է տշխարեցական լինի, ձեռքի դանակով խաչակնքում է մատաղացու անասունի կոկորդին ու կատարում զենումը։ Զոհի արյունը հոսում է փոսի մեջ։

Այդ արյունով խաչակնքում են ներկա գտնվող մանուկների ճակատները, որպեսզի չհիվանդանան և առողջ լինեն։

Գյուղացիների մեջ կա այն հավատը, որ հիվանդություններից պաշտպանվելու համար, անպայման պետք է զվարակ զենուլ Այիոս Իլիասի տոնին։

Զվարակի մորթը աճուրդի են դնում և նրանով վճարում մատաղացուի արժեքը։ Մսի մի մասը բաժանում են աճուրդի մասնակիցներին, իսկ մնացած մասը եփում են ձավարով կամ բրնձով և ուտում ծառի տակ, բոլոր գյուղացիների մասնակցությամբ, փարշով գինի են խմում, մի քիչ էլ թափելով գետինը և մաղթում՝ ամատաղը օգնականս։

Մեծ Մանաստիրում տանուտերը ինքն է գատարում մատաղացուի օրհնությունը։ Վառում է մոմը, խաչակնքում է մատաղացուի գլխին, մեջքին ու ագիին և հետո մորթում։ Արյունովը խաչակնքում է տան չորս պատերը։

Մատաղի շարժառիթն ու զվարակի զենման նպատակն է արգասաբերության և ա-

[1] Ֆիլիպե, Գավաբլը, Այիվասի, Դավուտլը, Ռաման, Ռավդա, Գշլագերե, Էվստաթոխորի, Նեմոնա, Սինաքլը, Զուքուրջոյ, Աբրո, Մեծ և Փոքր Մաղասարներ, Պանա և այլն։

ռողությունն մաղթանքը և ճահճային հիվանդություններից զերծ մնալու բաղձանքը։ Մատաղը մատուցվում է առհասարակ բարձր վայրերում, լեռների վրա կանգնած վանքերի շրջակայքում, ծառերի տակ և մասնավորապես Այիոս Իլիասի տոնին։ Սա այն սուրբն է, որ փոխանորդել է հեթանոսական արևի աստվածությունն և ընդունվել է որպես ամեն տեսակի հիվանդությունների բուժող և առատության ու արգասավորության աղբյուր։[2]

Եզան պաշտամունքը հնուց գոյություն է ունեցել շատ ժողովուրդների կրոնական հավատալիքների մեջ։ Սակայն մեր նպատակն է՝ ցլի կամ եզան պաշտամունքից ավելի, խոսել եզը իբրև զոհ մատուցելու սովորության մասին։

Նախնի հույները եզը զոհում էին իբրև բուսականության ներկայացուցիչը։ Հույների մոտ այդ սովորությունը ծանոթ է բուֆոնիա (եզան զենման արարողությունը տեղի էր ունենում հունիսի վերջերին կամ հուլիսի սկզբներին, երբ Ատտիկեում վերջացած էր լինում կամնումը։

Զվարակ զոհելու սովորությունը կար նաև հրեաների մոտ։ Կար նաև զոհի արյունը սրսկելու և մի փոսի մեջ թափելու հրահանգը։ Սակայն, երբ Թրակիայում օրհնվում է անասունը, զենվում է աղխարհեկանի կողմից, մատաղ է լինում, մատաղի ճաշակմանը մասնակցում է ամբողջ համայնքը։ Հրեաների մոտ զոհը զենվում, ողջակիզվում և այրվում էր բաճանայի ձեռքով։ Հույները մի բարիք էին սպասում զոհի արյունից, և որով խաչակնքում էին տան գլխավոր մասերը, երեխաների ճակատները, մինչ հրեաների մոտ՝ արյան շնորհքը մասնավորվել է տաճարին և «վարագուրին սրբութեան»[3]։

Թրակիայի հույները զվարակ զոհելու սովորությունը երբայեցիներից փոխ չեն առել. եթե այդպես եղած լիներ, պետք էր, որ այդ սովորությունը տարածված լիներ քրիստոնյա հույն ժողովրդի մեջ, ընդհանրապես, հետևաբար և Հունաստանի ամեն կողմը։ Մինչդեռ մատաղի սովորության հանդիպում ենք միայն Թրակիայի շրջանում։

Միթրայականների մոտ էլ սովորություն կար զվարակ կամ ցուլ զենով, ի պատիվ Միթրայի։ Միթրայականության անբաժան մասն էր զոհի, մատաղի սովորությունը, որովհետև նրանք հավատում էին, որ աշխարհի խաղաղությունն ու առատությունը ծագում էր զոհի արյունից։

Բոլոր միթրայական մեհյանները ունեն մի պատկեր, որը ներկայացնում է Միթրային փողոտելիս մի ցուլ, որի կողից առատորեն հոսում է արյունը, և որից ծլում է նոր կյանքը։ Միթրայական նորահավատը մկրտվում էր զոհվող զվարակի արյունով և «վերստին ծնվում»։

Միթրայի զոհաբերությունը ներկայացնող քանդակների վրա մատաղացուն դարձել է դեպի արևելք։ Երկու ջահակիրներ կանգնել են, մին առաջ և մյուսը ետ։

Միթրայական կրոնի հատուկ զոհման արարողությունը ներկայացնող քանդակներում կամ նկարներում Միթրայի դաշունահարած ցլերից ոմանց պոչը վերջանում է ցորենի երեք հասկերով, իսկ քանդակներից ոմանց վրա էլ, դանակի խրված տեղից ցայտող արյան փոխարեն, ցորենի հասկեր են դուրս ելնում[4]։ Զոհվող ցուլը խորհրդանշում էր ցորենը, առատությունը, պտղաբերությունը։

Միթրայականությունը հույների մոտ հոգ չէր գտել, ոչ պարսիկների կարճատև տիրապետության ժամանակ (Ե դ. մ.թ.ա.), ոչ էլ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ժամանակ, հույն-պարսկական փոխհարաբերությունների առավել երկարատև գոյության ժամանակաշրջանում։

Հուլիանոս Ուրացող կայսեր (331—363 թ. թ.) միթրայականությունը Բյուզանդիայում մուծելու փորձերը ապարդյուն անցան[5], որովհետև Հելլադայի համար մի «բարբարոսական աստվածություն» էր Միթրան։

Արդ, հարց է, թե ե՞րբ և ի՞նչպես Թրակիա է մտել մատաղի սովորությունը։

Պատմական փաստերը խոսում են այն մասին, որ մատաղի սովորությունը Թրակիա է մտել բյուզանդական ժամանակաշրջանում Թրակիա բռնագաղթեցված և հաստատված հայերի միջոցով։

---

2 Վերոգրյալ ազգագրական ծանոթությունների համար մեջ գլխավոր աղբյուր է ծառայել հունական ազգագրական ընկերության օրգան „Λαογραφα" հանգույցի Գ հատորը։

3 Իսրայելի մոտ զոհաբերության պայմաններն ու տեսակները մանրամասնորեն տրված են «Գիրք Ղևտացւոց», Ա—Զ գլուխներում։

4 Կարևոր և նկատառելի պարագա է նաև այն, որ միթրայականության մեջ մատաղացու զվարակի ճակատը կապում էին մի ապարոշ և եղյուրներից կախում էին ծաղկեպսակներ, երբեմն էլ ոսկեզօծված և բրդյա երիզակներով էին զարդարում (տե՛ս Marquart, „Le culte chez les romains", vol. I, էջ 216։ —Ch. Daremberg, «Dictionnaire des antiquités grecques et romaines», Taurobolium և Sacrificium հոդվածները։

5 Միթրայականության և քրիստոնեության վրա ունեցած դերի և ազդեցության ցուցը հանձնարարելի է Arthur Weigall-ի «The Paganism in our christianity (Hutchinson)» անուն գիրքը։

Թեոդոսիոս Փոքր կայսեր օրով (408—450 թ. թ.) բյուզանդական կայսրության արևելյան սահմանների վրա, ինչպես և Կոստանդնուպոլսում, հայեր էին հաստատվել[6]։

Մորիկ կայսրը բազմաթիվ հայեր գաղթեցրել և տեղավորել էր Թրակիայում[7]։

Կոստանդին Կոպրոնիմոսի օրոք (741—755 թ.թ.) նույնպես հանդիպում ենք Հայաստանի զանգվածային բռնագաղթին՝ դեպի Թրակիա։

Աննա Կոմնենեն, իր «Ալեքսիականը»-ում գրում է, որ Հովհաննես Զմշկիկ կայսրը (969—976 թ. թ.) պավլիկյաններ էր գաղթեցրել Թրակիա[8]։

Հունաստանում մատաղի ծանոթ սովորության հանդիպում ենք բյուզանդական կայսրության օրով և զանազան այլ առիթներով գաղթեցված հայերից բնակեցված վայրերում, հատկապես Թրակիայում։

Արդ, հայերը ունե՞ն մատաղի սովորությունը։ Ի՞նչ էր նրանց ըմբռնումը եզան և զվարակի և առհասարակ մատաղի մասին։

Շատ հին ժամանակներից հայ հողագործ և անասնապահ ժողովրդի կրոնական հավատալիքների մեջ եղել է եզան պաշտամունքը։

Սովորություն էր զոհեր մատուցել հաղթանակների առթիվ, ինչպես Տրդատ Գ-ի հայրը խոսքով, որը իբր երախտագիտություն պարսիկների դեմ իր տարած հաղթությունը, «սպիտակ ցուլք և սպիտակ նոխազօգ, սպիտակ ձիովք և սպիտակ շորովք... զհայրենեացն պաշտամանց տեղիսն մեծարէր»[9]։

Հաղթանակների առթիվ ցուլ զոհելու սովորությանը մենք հանդիպում ենք նաև պատկերամարտ հույն կայսր Նիկեփորի ժամանակ, ինչպես վկայում է ժամանակագիր Թեոֆանը[10]։ Նա գրում է, որ Նիկեփոր կայսրը, Վարդ Պատրիկի ապստամբության ժամանակ, նրան հաղթելու համար, մի ցուլ զոհեց և ընկալյալ ծեսերը կատարել տվեց։ Նա հաղթեց և այդ հաղթանակը վերագրվեց զոհաբերության։ Սա փաստ է, որ հույների մոտ գոյություն չուներ նման զոհաբերություն և Թեոֆանը այդ հիշում է՝ պարսավելու համար Նիկեփոր կայսրին։

Եզնիկ Կողբացին վկայում է, որ հայերը հավատում էին սրբազան եզների, որոնք ոչնչացնում են վիշապներին և մարդկանց ազատում չար ոգիներից։ Հայ հեթանոս հավատալիքների մեջ կարևոր տեղ էր գրավում եզը։ Եզը եղել է խորհրդանիշը արգասավորության, հացի անպակասության[11] և զանազան հիվանդություններից ազատվելու։ Այդ սպիտակ եզների կամ գոմեշների մազերից տանում էին և գցում իրենց ամբարները, որպեսզի անսպառ լինի ալյուրը. այդ մազերը պահում էին իրենց վրա, բուժվելու համար տենդից և այլ ճիվանդություններից[12]։ Հայաստանի մի քանի հինավուրց վանքերում պահում էին հատուկ եզներ, որոնք սուրբ էին ժողովրդի աչքում։ Մշո Առաքելոց վանքում պահվում էր մի եզ, Վանի մի շարք վանքերում, ինչպես Խաթուն Տիրամոր վանքում պահվում էին սպիտակ խալ (Տիրամոր նշան) ունեցող եզներ[13]։

Անի քաղաքի 1218 թվականի մի արձանագրությունում հիշվում է, թե Անիի բնակիչները պարտավոր էին ամեն տարի Զատիկին ղվարակի մորթին մատուցել եպիսկոպոսին[14], ինչից կարելի է եզրակացնել, որ սովորություն ունեին ամեն տարի զվարակ զոհելու և մորթին էլ կղերականին նվիրելու։

Մատաղի մորթին քահանային նվիրելու սովորությունը մնացել է մինչև Շնորհալու ժամանակները, որը հրահանգում է. «...ի զենեալս անտի օրինագրեաց տալ հատուցանելոց քրմացն մասունս, ոչ միայն զոր այժմս տան երի և մորթի[15], իսկ մատաղից ակնկալած օգնության հավատի շարունակության փաստ է Շնորհալու այն խոսքը, որ ասում է. «քանզի անասնոցն զենմունք ոչ այլ ինչ առաւելութիւն ունին օգնութիւն... ի պաղոց և ի սերմանեաց, այնպէս և յանասուն կենդանեաց...»[16]։

Գարեգին վարդապետ Սրվանձտյանցը «Մանանա»-յում հիշատակելով Վանի բնակչության սովորությունների մասին, ասում է, թե երաշտի կամ այլ բնական պատուհասի պարագայում սովորություն ունեն մատաղ անելու։ Որպեսզի մատաղը ավելի հանդիսավոր լինի, թաղի հասարակությունը

[6] N. Բաշեանց, «Ցրակիա», հատ. Ը, էջ 318—329։

[7] «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն», Թիֆլիս, 1912, գլ. Ը, էջ 82, գլ. Ի, էջ 112։

[8] Անեա Կոմնենե, «Ալեքսիական», Բոնն, 1878, հատ. XIV, էջ 8։

[9] Ագաթանգեղոս, Տփղիս, 1909, էջ 22 և 34։

[10] Bonne, 1839. T. I, 709.

[11] Ե. Սամվելյան, «Հին Հայաստանի կուլտուրան», հատ. Ա, էջ 176—183։

[12] «Ազգագրական հանդես», XXV (1918), էջ 45—46։

[13] Նույն տեղում, XXIII (1911), էջ 128, XXVI (1916), էջ 210։— Գարեգին վարդապետ Սրվանձտյանց, «Մանանա», էջ 119։— Տե՛ս և Լ. Հ. Ոսկյան, «Գնունյանց և Առբերունի վանքերը», «Հանդէս ամսօրեայ», 1940, էջ 192—213։

[14] Գրիգոր Տաթևացի, «Գիրք հարցմանաց», Կոստանդնուպոլիս, էջ 397։— Տե՛ս և Գավախիշվիլի, «Նյութեր սոցիալական շարժումների պատմության համար» (հայերեն թրգմ.), Ե., 1937, էջ 35։

[15] Ներսես Շնորհալի, «Թուղթ ընդհանրական», Էջմիածին, 1865, էջ 352—362։

[16] Նույն տեղում, էջ 364։

մասնակցում է ծախսին։ Որոշ ժամանակ նրանք լավ կերակրում են կովը կամ ցուլը, որպեսզի պարարտանա։ Որոշյալ օրը մեծ բազմությամբ անասունը տանում են այգի կամ դաշտ։ Քահանան օրհնում է աղը։ Մատաղացուի եղջյուրները զարդարում են վառված մոմերով։ Կան նաև վայրեր, ուր շուրջառ են գցում մատաղացուի վրա[17] և իրենք էլ ձեռքերը մոմերով թափոր են կազմում, մատաղացուի մորթին իբրև նվիրական է. այն նվիրում են եկեղեցուն կամ վանքին։

Զանգեզուրի գավառի Տաթևի վանքի հանգիստակաց լեռան վրա գտնվում է «Եզան ուխտատեղի» (Öküz ziarat)։ Քարի ուխտատեղին մի կույտ է սա, որի մասին ավանդությունն ասում է, որ այնտեղ է թաղվել մի մեծ եզ, որը քարեր է կրել Տաթևի եկեղեցու շինության ժամանակ։ Երբ կենդանիների մեջ պատահում են տարափոխություններ, երեք անգամ պտտեցնում են հիվանդ անասուններին այդ քարակույտի շուրջը, իսկ եթե կարելի չլիներ տանել անասունը, քարակույտի տակից առնում են մի ափ հող, խառնում են աղով և կերցնում հիվանդ անասունին[18]։

Բարձրլեռի շրջանում և հայկական շատ գավառներում հարսանեկան սովորությունների կարգում, կատարվում էր նաև հարսանիքի եզան մորթելու ծեսը։ Երբ մորթում էին եզը, ավագադուն ամուսնացյալը կամ թագավորի (փեսի) մայրը, առաջին ցայտող արյունի մեջ թաթախում էր կարմիր թելի մի կտոր և խնամքով պահում մինչև նորապսակ ամուլի առագաստ մտնելու գիշերը, որպեսզի փեսան չկորցնի իր առնական զորությունը— «թագավորը կապ չընկնի»։ Թագավորի (փեսի) ճակատը խաչակնքում էին այդ արյունով, որպեսզի զերծ մնա փորձանքներից[19]։

Հարսանիքի ուրբաթ առավոտյան փեսացուի հայրը մի եզ է բերել տալիս, կապում են ոտները, պառկեցնում են երեսը դեպի արևելք դարձած. մսագործը դանակով խաչ է քաշում եզան կոկորդը և մորթում. փեսացուի մայրը թաթախում է ձեռը եզան արյան մեջ և խաչաձև քսում տան դռան ճակատը, որպեսզի չչդիպչի օշախին[20]։

Վաղարշապատում սովորություն էր Համբարձման տոնին մի եզ զարդարել, կանաչներով ու ծաղիկներով և ժողովրդական թափորով պտտեցնել գյուղում։ Դա «Համբարձման եզ»-ն էր, որի մեջ գյուղացին տեսնում էր բուսական, կենդանական և մարդկային արգասավորությունը[21]։

Գրիգոր Թաթևացին իր «Գիրք հարցմանց»-ում (էջ 383) հարցնում է. «Եթէ արիւն ցլուցն և նոխազանց... սրբէր զպղծեալսն, քանի՞ առաւել արիւնն Յիսուսի»։ Նշանակում է հավատում էին ցլի արյան սրբելու, սրբացնելու հատկությանը։ Դարձյալ «զուրբակն հզօր և արդիւնաւոր, զի արդիւնարարք և հզօրացեալք ի գործս բարիս՝ պատարագ են Աստուծոյ» (էջ 358)։

Ճանապարհորդ Էլիզե Ռեկլուն գրում է. «Մեծ տոներին հայերը ցուլ և խոյ են բերում եկեղեցին կամ նվիրական ծառերին, պսակում են նրանց ծաղիկներով ու վառված մոմերով զարդարում. հետո մորթում են այդ կենդանիներին, երգերով ու աղոթքով։ Այս ակներև միհր աստծու զոհն է, որ հին կրոնքը կտակել է նորին[22]։

Հայերի մոտ էլ մատաղացուն միշտ առու պետք է լիներ, սպիտակ, ընտիր տեսակից, անարատ, արդար վաստակի արդյունք։ Չեղողը լինելու էր տղամարդ, աշխարհական և հավատացյալ[23]։

Գրիգոր Լուսավորիչ «Հրամայեաց ժողովրդեանն զի փոխանակ մեռելոտի կոռցն նուիրեաց զոր մատուցանէին յառաջագոյն, նուիրեացեն միոյն Աստուծոյ նուէրս յանբանից կենդանեաց օրհնութեան աղիւ խառնելով[24]։

«Ժողովեսցին քահանայքն ի միասին ի դուռն եկեղեցւոյն... ընդ նոսին և տէր պատարագին և դիցեն զաղն առաջի սրբոյ խաչին և երգեսցեն... ընթերցցեն... և յեղեսցեն... և տացեն զաղն օրհնեալ, և զեսցեն զանասունն...»[25]։

---

17 Շուրջառակիր քահանան միջնորդ է նկատված՝ Աստուծո և մարդկանց միջև։ Մատաղացուի վրա շուրջառ գցելու խոր իմաստն էլ զոհացուն միջնորդ նկատելու հավատքն է անտարակույս։ Տե՛ս մեր հոդվածը՝ «Զոզին խորհուրդը», «Հայաստանի կոչնակ», 1939, հոկտ. 3, № 43, էջ 1147—1149։

18 «Ազգագրական հանդէս», III, (1898), էջ 215։

19 Նույն տեղում, IX. (1903), էջ 227, XV (1907), էջ 18, IV (1898), էջ 75։

20 «Ազգագրական հանդէս», XVI (1907), էջ 18 (նոր թայագիս), XII, էջ 124։

21 Նույն տեղում, IV, էջ 112։ Տե՛ս և «Հանդէս ամսօրեայ», 1913, հունվար, էջ 11—13, Աստղիկ հոդվածը։ Տե՛ս նաև «Ազգագրական հանդէս», Ա (1895), էջ 249, Բ, էջ 129, Գ, էջ 331—332, Զ, էջ 252, Է—Ը (1901), էջ 156, Թ, էջ 222, ԺԲ, էջ 124, ԺԳ (I) էջ 153, Ի, էջ 155։

22 Էլիզե Ռեկլու, «Բուսական Հայաստան», թրգմ. Միսաքեանի, Վաղարշապատ, 1891, էջ 50—51։

23 Գրիգոր Տաթևացի, «Գիրք հարցմանց», Կոստանդնուպոլիս, 1729, էջ 355։

24 Շնորհալի, «Թուղթ ընդհանրական», էջ 352—353։ —Գրիգոր Տաթևացի, «Գիրք հարցմանց» էջ 359։

25 «Թուղթ ընդհանրական», էջ 363—364։

Օրհնության վերջավորությունն էր՝ «և պարգևեաց զթողութիւն մեղաց, ամենեցուն զհաւատս և զանդեայս և զամենայն ինչս և ստացուածս ծառայից քոց» և այլն։ Շնորհալին ասում է. «իսկ... զոր տեառնական նոչեն... կարդասցեն զգրեալն օրհնութիւնսն ի վերայ աղին քահանայքն, և տացեն անասնոյն և զենցեն»[28], «...և սահմանեցին առաջին հարք մեր նախ օրհնեալ աղ տալ նուիրեալն անասնոյն, ապա զենուլ»[27]։

Անասունը պետք է լիներ կենդանի և ոչ թե մեռած, որքելիս պետք էր որ դուրս գար արյունն ու շունչը և բնական ջերմությունը, որ էր կենդանությունը[28]։ Զենքը պետք էր լիներ երկաթից և ճատու[29]։ Զենումը պետք էր կատարվեր անասունը դեպի արևելք դարձած[30]։ Անասունի գլուխը պետք էր անջատվեր մարմնից[31]։

Խոստացյալին բերում են «ի դուռն նկեղեցւոյ», որ է գավիթը. անասունի վրա դնում են «կարմիր [նարոտ] և բամբակ» և ծածկում են «կարմիր ճանդեռձիւ»։ Իսկ Շնորհալին ասում է. «կարմիր արկանելով ծածկել անասուն» և «յեղջիւրսն նարօտ» կապել[32]։

Զոհացուները զարդարում էին, եղջյուրներին կապում էին «կարմիր և սպիտակ բուրդս»։ Եղջյուրներից կախում էին «միրգս զանազանս» (անշուշտ խորհրդանշելով մայր երկրի բարերարությունը) և «եղջյուրների միջև զետեղում էին մոմեղեններ»։

Այս ծեսը «ըստ հնոյն օրինի» էր, ինչպես ասում է Շնորհալին, երբ դիտել է տալիս՝ «և զալլսն զորս ի տգէտ քահանայից եդեալ է ի ցուցակին, կարմիր արկանելով ծածկել զանասունն և յեղջիւրսն նարօտ ըստ հնոյն օրինի, ամենեին մի առներ զի ասլորդ է. անօգուտ և պատճառ գայթակղութեան»[33]։

Հեթանոս հայը, կենդանու արյունը խմելով, «դաշինք էր կնքում», ազգականական կապ էր հաստատում՝ իր պաշտած կամ նվիրական նկատած անասունի հետ։ Արանից հայերի մեջ մնացել է մատաղացուի արյունը խմելու և կամ տան սեմին, այուներին, պատերին քսելու սովորությունը։

Այս սովորությունն է ակնարկում Մխիթար Գոշը, երբ գրում է, որ աղվեսը մատաղի կենման ժամանակ «զարիւնն ևս լիզուր» եվ Էրը մեղադրում էին, պատասխանում էր. «նուիրեալ է և այդպես արժան է առնել»[34]։

Հեթանոսական այս սովորությունը արգելել է Շնորհալին. «Մի՛ ոք իշխեսցէ զսեամս դրան օծանել արեամբ գառինն որպէս ասեն զոգիտաց ոմանց թէ առնեն, զի այն հրէական է և որ ապէս առնէ ընդ անիծիւք էր, կամ՝ «Մի՛» ոք տգիտաբար զարիւն գառինն ժողովեսցէ, կամ կերիցէ, որպէս լսեմք, թէ առնեն տխմար մարդիկ»[35]։

Զոհի արյունը խմելու հեթանոսական սովորությունը շատ հին է. այդ մասին վկայում է Ագաթանգեղոսը. «...քանզի ուտէին և ըմպէին մարդիկ զարիւն զոհից անասնոց դիցապաշտութեան...»[36]։

Հայկական մատաղի և Թրակիայի հույների մատաղի սովորությունների անհերքելի նմանությունն ու նշանակությունը մեզ բերում են այն համոզման, որ Այիոս Իլիասի (Ալիոս—Արեգակ) տոնին, Հյուսիսային Հունաստանում և մանավանդ Թրակիայում միայն կատարվող կվարակի մատաղի սովորությունը և նրա հավատը մնացել է՝ բյուզանդական ժամանակաշրջանում բռնագաղթեցման կամ այլ ձևերով այդ շրջանում հաստատված մեր ազգակիցներից։ Գաղթեցված հայերը, որոնք առհասարակ աղանդավորներ են եղել, իրենց մեջ վառ են պահել արևի պաշտամունքը և իրենց տարադրության շրջանում իսկ ամուր կապված են մնացել իրենց սովորություններին։

«Այդ պավլիկյաններից մինչև որս էլ գոյություն ունեն Ֆիլիպեի և մասնավորապես Սլիվենի շրջանում, իսկ հազարավորներ Ալեքսիոս Ա-ի (1081—1118 թ. թ.) և հետագա հալածանքներից ազատվելու համար ապաստանել են Հեմոս լեռան (Բալկան) անմատչելի հովիտներում, ուր դեռ ապրում են աշխարհից հեռու... բայց պահելով իրենց հավատալիքները և նրա մաս կազմող արյունոտ մատաղը»[37]։

26 «Գիրք հարցմանց», էջ 366։—«Թուղթ ընդհանրական», էջ 363։

27 «Գիրք հարցմանց», էջ 657։—«Թուղթ ընդհանրական», էջ 365։

28 «Գիրք հարցմանց», էջ 395։

29 Նույն տեղում, էջ 365։

30 Նույն տեղում, էջ 366։

31 Նույն տեղում, էջ 365։

32 «Թուղթ ընդհանրական», էջ 363։

33 «Գիրք հարցմանց», էջ 369։

34 Մխիթար Գոշ. «Առակներ», Ե., Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատ., 1951, էջ 93, առակ ՂԸ։

35 «Թուղթ ընդհանրական», էջ 362։

36 «Ագաթանգեղեայ Պատմութիւն», Վենետիկ, 1835, էջ 74։

37 Կ. Պապարիգոպուլոս, «Հույն ժողովրդի պատմություն», 6-րդ հրատ., Աթենք, 1932, հատ. Դ, էջ 160 (հունարեն)։ Ստորագծումը մերն է—Մ. Բ.։

ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԱԲՐԱՀԱՄ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
(1878—1958)

Ապրիլի 7-ին, երկուշաբթի օր, երկարատև և ծանր հիվանդությունից հետո, 80 տարեկան տիրոջալ հասակում, իր հայրենի Բշնի գյուղում ի Տեր հանգավ արժանապատիվ Տ. Աբրահամ քահանա Տեր-Աբրահամյանը։

Հանգուցյալը ծնվել է 1878 թվականին Ախտալի շրջանի Բշնի գյուղում, քահանայի ընտանիքում։ Նախնական կրթությունն ստացել է գյուղի դպրոցում, իսկ եկեղեցական ուսումը՝ Սևանա վանքում։ 1919 թվականին ձեռնադրվում է քահանա Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանից՝ Երևանի Ս. Սարգիս եկեղեցում, իր գյուղի՝ Բշնիի եկեղեցու վրա, իր հանգուցյալ հոր տեղը։

Հանգուցյալը համեստ, հավատավոր և նվիրված քահանաներից էր, ուներ քաղցր ձայն և Հայ եկեղեցու շարականների խոր մտություն։ Հաճույք էր լսել նրա եկեղեցական երգեցողությունը։

Նա երկար տարիներ քահանայագործել է նաև Արզաքանդում և Ալափարսում և ամեն տեղ սիրվել ու հարգվել իր ժողովրդի կողմից։ Իր երկարատև և անբասիր ու բարվոք քահանայագործության համար պարգևատրվել է քահանայական լանջախաչով երջանկահիշատակ Տ. Գևորգ Զ Կաթողիկոսից, 1954 թվականին։

Հանգուցյալը վերջերս իր առաջացյալ տարիքի պատճառով հանգստյան էր կոչվել, ստանալով կենսաթոշակ Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ։

Ապրիլի 10-ին, Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը, արժանապատիվ Տ. Թադեոս, Տ. Գրիգոր և տեղի ծխատեր Տ. Արսեն քահանաների և բարեշնորհ Կարապետ սարկավագի մասնակցությամբ, Բշնիում կատարեց հանգուցյալի վերջին օծումը և իր դամբանական քարոզում վեր հանեց հանգուցյալի բարի վաստակը և մաքուր անունը։

Հանգուցյալը թաղվեց Բշնիի պատմական վանքի բակում, իր հոր գերեզմանի կողքին։

Ոգիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի։

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ 1958—1959 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԾՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը գիշերօթիկ դպրոց է վեց դասարաններով— երեք՝ դասարանական, երեք՝ լսարանական: Նրա նպատակն է պատրաստել զարգացած և ազգանվեր հոգևորականներ: Ճեմարանը տալիս է բարձրագույն հոգևոր կրթություն: Ուսանողներին ձրիաբար տրամադրվում են հանրակացարան բոլոր հարմարություններով, հանդերձեղեն, սնունդ, գրենական պիտույքներ և այլն:

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան կարող են ընդունվել Հայաստանյայց Առաքելական եկեղեցու դավակ եղող 18-ից 25 տարեկան ամուրի անձինք, որոնք չեն պատկանում որևէ կուսակցության, զերծ են ֆիզիկական բերությունից և հիվանդությունից, չեն դատված և ունեն առնվազն 7-ամյա կրթություն:

Դիմողները քննություն պիտի հանձնեն հայոց լեզվից ու գրականությունից, հայ ժողովրդի պատմությունից և երգեցողությունից: Բարձր կրթություն ունեցող թեկնածուները կտեղավորվեն համապատասխան դասարաններում:

Դիմողները պիտի ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. Ինքնագիր դիմում այն մասին, որ իրենք Ճեմարանն ավարտելուց հետո ցանկություն ունեն հոգևորական դառնալու:
2. Թարի վարուց վկայական՝ ստորագրված եկեղեցական իշխանության կողմից:
3. Բժշկական վկայական՝ առողջության մասին:
4. Ծննդյան և մկրտության վկայական:
5. Կրթության վկայական կամ համապատասխան տեղեկանք:
6. Երեք լուսանկար (լուսանկարված դիմումի օրերին):

Արտասահմանյան երկրների թեկնածուները պետք է իրենց դիմումն ու հարակից փաստաթղթերը ներկայացնեն իրենց թեմերի հոգևորական առաջնորդներին ոչ ուշ քան սույն թվականի օգոստոսի 1-ը, իսկ ներքին թեմերի թեկնածուները՝ մինչև օգոստոսի 15-ը՝ հոգևոր Ճեմարան, Հայկական ՍՍՌ, Էջմիածին:

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

(Վերատեսուչ Հոգևոր Ճեմարանի)